Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

I

DIZAK PLUS

ԱՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Երկերի ժողովածու

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐՈՎ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2012

ԱՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Երկերի ժողովածու

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2012

ՀՏԴ 891.981-8 Հովհաննիսյան
ԳՄԴ 84Հ
Հ 854

Խմբագիր՝ Հրանտ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հովհաննիսյան Արմեն
Հ 854 Երկերի ժողովածու 2 հատորով: Բանաստեղծություններ: / Ա. Հովհաննիսյան. - Ստեփանակերտ: Դիզակ Պլյուս, 2012.
Հ. 1.-320 էջ:

Արմեն Հովհաննիսյանը արցախահայ գրականության ավագ սերնդի ներկայացուցիչներից է: Երկերի ժողովածուի առաջին հատորն ամփոփում է հեղինակի՝ տարբեր տարիների գրած բանաստեղծությունները:

Երկհատորյակը հրատարակվում է Ա.Հովհաննիսյանի ծննդյան 80-ամյակի կապակցությամբ:

ՀՏԴ 891.981-8 Հովհաննիսյան
ԳՄԴ 84Հ

ISBN 978-99941-2-644-6

© Ա. Հովհաննիսյան, 2012

2007-2011

ՃԱԿԱՏԱԳԻՐ

Մխիթարությո՞ւն՝ սրտիդ ու հոգուդ,
Թերևս ասենք՝ նաև ի՞նչ օգուտ...
Քեզ ինչ արել են՝ ներել, տարե՞լ ես,
Երբ մինչև անգամ քեզ... օտարե՞լ են:

Եվ այնուհանդերձ՝ թող հոգիդ բերկրի,
Որ ինչ էլ արին՝ չեղա՞ր տարագիր...
Ինչ էլ դեռ անեն՝ դու այս երկրի՞նն ես,
Որպես ժառանգո՞րդ ու ճակատագի՞ր...

դեկտեմբեր 2010

❒

Քրիստոսն աջը հպեց ճակատիս,
- Տենդի մեջ ես, ա՞խ, վառվո՞ւմ ես, որդի՞ս...
Քրիստոսն աջը վայր բերեց կրծքիս,
- Տագնապահա՞ր ես, անհանգի՞ստ, որդի՞ս...
Քրիստոսն աջը իջեցրեց ուսիս.
- Պի՞նդ ես տակավին, դիմացի՞ր, որդի՞ս...

31 դեկտեմբեր 2010

ԱԽՈՅԱՆ

Մահը՝ մահ է միշտ, մեկ չէ՞, թե ումն է,
(Մարդ ինչքան պիտի լինի անզգա),-
Գնա՛ց աշխարհից քո ախոյանը,
Դու ինչպե՞ս պիտի քեզ... մենա՞կ զգաս:

Թե փորձեն անել քեզ վրաերթի
Խարդավանքների վիհում անուղի,
Ո՞մ նետած քարից ոտքդ կգայթի,
Որ դու սթափվե՞ս ու քայլես ուղի՞ղ...

Դավե՞լ են, խոցե՞լ և չունի սահման
Խորունկ խոցվածիդ ցավը դիվական,
Երկար գիշերներ ինքնապաքինման
Անքնությամբդ ո՞ւմ ես պարտական...

Մահը՝ մահ իրավ, մեկ չէ՞, թե ումն է...
(Բայց ինչքա՞ն պիտի լինես անզգա),
Գնա՞ց աշխարհից քո ախոյանը,
Եվ հիմա ինչպե՞ս քեզ...մենա՞կ չզգաս:

դեկտեմբեր 2010

ԱՇՈՒՆ Է, ԱՇՈՒՆ

Անհանգիստ է օրն իր շնչառությամբ,
Հեռվում ամպեր են արդեն կուտակվում,
Եվ նորից քամին խեղկատակությամբ
Մերկացնում է անտառ ու թավուտ:

Ցորից ելնում է մշուշը խոնավ,
Քաշաթխպերն են սողում արոտով,
Եվ արջամուկն է, ահա, խորամանկ,
Բերանն իր բնի ծեփում ծղոտով...

Հանկարծ ինչ-որ քար գլորվեց անդունդ,
Մխրճվեց ձորի կրծքի մեջ թափով,
Եվ լսվեց բուի կռինչը անդուր,
Ապա մի սարսուռ անցավ քարափով...

Բնությունն ասես մի պահ քարացավ,
Անդորրություն էր մի խորհրդավոր...
Բայց գիշանգղներ երկինք սլացան
Եվ լսվեց նրանց կռինչն անսովոր...

Արահետն ի վար՝ շաղոտ, ցողաթաց,
Ցորի կռնատակ մտավ մի գորշ շուն,
Քարափից կախված մոխրենին շրշաց,
-Աշուն է արդեն, աշո՜ւն է, աշո՜ւն...

«ՊԱՏՐԱՆՔՆԵՐ ՍԻՐՈ» ՇԱՐՔԻՑ

❒

Գիշերը՝ երկար, գիշերը՝ անվերջ,
Մենք ժամանակ ենք պարզապես վատնում...
Ես քո թափանցիկ անքնության մեջ
Որոնում եմ ինձ, սակայն չե՞մ գտնում:

Ոչինչ չե՞ն հուշում աչքերդ հրատ,
Հայացքդ անդորր, սառն ու փողփողեջ,-
Այդպես շամփրո՞ւմ են խարույկի վրա
Եվ ապա նետո՞ւմ ձյան շեղջի մեջ...

դեկտեմբեր 2010

❒

Ո՞վ է բախտից գոհ կամ ո՞վ է մերժված,
Ո՞ւմ է տրված ձի՝ թամբած կամ անթամբ,-
Իմ ինչի՞ն է պետք՝ ում ինչ է տրված
Ճակատագրով, թե բախտի բերմամբ...

Սակայն անգոհ չեմ, մեղա, Տեր Աստված,-
Կարծես կրակե շապիկ եմ հագել
Քո սե՞րը, սերը՝ վերուստ առաքված
Եվ...տառապանքը՝ շնորհվա՞ծ պարգև:

հունվար 2011

❒

Խոստովանանքս պարզ է, թափանցիկ՝
Երկնքի պես մով,
Ոչնչով աչքի չընկնող, հիրավի,
Պահվածքս անշուք,
Չեմ վազել երբեք կանանց հետևից
Կրքի մղումով...
Բայց իմ հայացքից նրանց թիկունքն է
Տաքացել անշուշտ...

Ու թե երբեմն նրանց նայվածքն եմ
Գամել ինձ վրա,
(Օ՜, հանդիմանող հայացքը կանանց
Ու աչքերը ջինջ),
Երդվում եմ Տիրոջ սրբություններով՝
Ամենից առաջ,
Ես հիացմունք եմ փնտրել նրանց մեջ
Եվ... Ուրի՜շ ոչինչ:

հունվար 2011

❒

Հառնել եմ ինչպես կրակե մի սյուն,
Մոտ չի գալիս ինձ ծերությունը խև,-
Սիրո մասին դեռ երգեր եմ հյուսում,
Որ պարանոցիդ ուլունքներ կախեմ...

Եվ բոց է շնչում խարույկը իմ բորբ,
Կայծոռիկներ է ցրում ամենուր,-
Մոտ արի, անգին, տաքացի՜ր, իմ ո՜րբ,
Քանի դեռ սիրո օջախ եմ ու հուր...

հունվար 2011

ՕԳՆԻՐ, ՔՐԻՍՏՈՍ

Օգնիր, Քրիստոս, մեղքից զերծ մնամ,
Ձեռքդ դիր ճակտիս, օրհնիր՝ զորանամ,
Մեղքերի հողմն է, տես, ահագնանում,
Տար ինձ մկրտիր քո Հորդանանում
Եվ մեղքերի դեմ ինձ քո խաչը տուր,
Աստծո որդի՝ մաքրազերծող հուր...
Առաջնորդիր ինձ քո Բեթղեհեմը,-
Թե քեզ ուրանամ... նետի՜ր գեհենը:

նոյեմբեր 2010

❒

Ամեն ինչ մերկ է, ինչպես ձեռքի ափ
Եվ, անշուշտ, փույթ չէ կամ ինչու հիշել,
Թե տարիների տերևաթափը,
Ահա, ոտքիդ տակ՝ ինչպես հողաշերտ...

Սակայն ապրիր դեռ և ապրեցրու
Քո մեջ գեղեցիկ հովտաշուշանը,
Հոգիդ դեռ ուրցի բուրմունքով լցրու
Եվ հրով լցրու՝ որպես ատրուշան...

Ապրիր դեռ երկար և ապրեցրու
Արևը քո մեջ՝ բորբ ու հրաշեկ,
Ոգեղեն հոգիդ հզորացրու,
Որպես տաճարի անձեռակերտ շեմ...

Ապրիր դեռ երկար ու մնա որպես
Աղոթատեղի կամ մատուռ անշուք,
Ապրիր, դե, ապրիր ու մնա ինչպես
Խուլ ունկերի մեջ՝ Աստծո շշուկ...

նոյեմբեր 2010

❒

Ժամանակն ահեղ ավլում է հետքեր,
Ջնջում է ընդմիշտ դիմագիծ ու դեմք,-
Մահեր սփռող մի սարսուռ ձեռք էր
Ամայացնում եզերք ու եղեմ...

Հատուցման օրվա խորհուրդը ներհուն,-
Դատապարտված է ամենազորը,
Եվ ինչ իմանաս, թե էն աշխարհում
Չեն հանդիպելու դահի՜ճն ու...զոհը:

նոյեմբեր 2010

❒

Մտքովս անգամ երբեք չի անցնի,
Թե այս աշխարհում՝ բիրտ ու ցավագին,
Ում համար սերը ի՜նչ իմաստ ունի,
Եվ նվիրումը՝ ի՜նչ արժեք ու գին...

Սիրել՝ սիրո՜ւմ եմ անակնկալիք,
Նվիրաբերում՝ առանց հատուցում,-
Դավե՜լ են՝ չեկա անակնկալի,
Ցավը՝ լուռ տարա, նաև... անարցո՜ւնք:

հուլիս 2010

ԱՆՔՆՈՒԹՅՈՒՆ

Գյուղս չի՞ քնում, չի՞ քնում տունս,
Անքնությունը կաղկանձ է մի շան,
Շնագայլերն են խանգարում քունս,
Լուսնի մահիկը՝ կեռ թրի նշան...

Գյուղս չի՞ քնում, չի՞ քնում տունս,
Ի՞նչ է շշնջում բարդիս եթերում,-
Աղավաղում է կարծես անունս,
Ինձ մղձավանջից դարձի չի՞ բերում...

Նախախնամ է անքնությունս...
Երկինքը՝ մռայլ ու խոր աշուն է,
Սահմանամերձ են գյուղս ու տունս,-
Դու էլ մի՛ քնիր, մի՞ նիրհիր, շո՞ւն իմ...

նոյեմբեր 2010

❒

Նշաձև աչքեր, հայացք թափանցող,
Մրահոն՝ ինչպես կամարներ վանքի,
Ժպիտ, ի՜նչ ժպիտ՝ կարծես հրացոլք,
Շուրթեր, ի՜նչ շուրթեր՝ նման պատրանքի...

Բայց դու տակավին անհաղորդ ու սառ,
Մի անմեկնելի հանելուկ խրթին,
Ես ինչպե՜ս հիմա վերծանեմ, ասա,
Քո կախարդանքի գաղտնիքը մթին...

հոկտեմբեր 2011

❒

Դու չապրեցիր անցավ՝
Անհոգություն հերքող,
Դատարկաձեռ չանցար
Մուրացկանի կողքով...

Անհավակնոտ, պարկեշտ,
Կարիքների մեջ խիստ,-
Այդպես շնչե՜լն էր հեշտ
Եվ... հոգի՜դ էր հանգիստ:

սեպտեմբեր 2010

❒

Եվ կար հեռու մի օր,
Եվ կար տրտում մի երգ,
Եվ կա մինչև այսօր
Անագորույն մի վերք...

Եվ հավիտյան մնաց
Անբուժելի մի խոց,
Որ չի՞ փակվի բնավ
Եվ կմխա անբոց...

սեպտեմբեր 2010

❒

Ինձ կողոպտեցին անխիղճ, ինձնից ինձ
Մաս առ մաս տարան, բեկորներ հերթով,
Մինչդեռ պի՞նդ էի այն որձաքարից,
Որից խա՞չ էին կերտում ու կոթող:
...Տեր իմ, քո աջը վար իջեցրու,
Իրարու բեր ի՞նձ, ամբողջացրու...

դեկտեմբեր 2010

❒

Ինձ, ինչպես անմեղ, միամիտ մանկան,
Խաղի մեջ էին ներքաշում անվերջ,
Բայց տանուլ տալով խաղն ամեն անգամ,
Ես հայտնվում էի ամայության մեջ...

Ո՞ւր եք, հայտնվեի՞ք, ընկերնե՞ր իմ հեգ,
Լռել են վաղուց ձեր կանչերը վես,
Ներքաշեի՞ք ինձ խաղերում ձեր նենգ
Եվ... թեկուզ նորից տանո՞ւլ տայի ես:

❒

Ո՛չ ներկան է փայլում քո դեմ,
Ո՛չ գալիքն է կորզում արցունք,
Սուրացել է գնացքն արդեն՝
Ապագայի հողմով լեցուն...

Դու մնացել ես անցյալում,
Անհուսության սեմին գամված,
Ինչպես շվար այն այցելուն՝
Փակ դռների առջև հայտնված...

❒

Թեթև՝ ինչպես կին թեթևաբարո,
Կամ ծաղկից-ծաղիկ թռչող մի թիթեռ,
Մենք՝ ամեն ինչի մեջ աճապարող,
Մենք՝ ամեն ինչին նայո՞ւմ ենք թեթև...

Մինչ գրոհելով ածու առ ածու,
Վերածելով մեր այգին խոզանի,
Ի՞նչ տաղանդավոր վրեժ է լուծում
Կյանքը մեզանից...

❒

Ի՞նչ կյանք էր, ավա՞ղ, անմիտ խաղ ու դավ,
Մի դժվար երթ, որ անցավ կուրորեն,-
Ամեն ինչ հատնեց և հիմա դանդաղ
Օրը տրտմությամբ մաշում է իրեն...

Եվ վատնած կյանքի մի ետնախորշում,
Հնոտիների վրա եղյամած,
Լուռ մտորում է մի հյուղակ անշուք,
Քիվերն հոնքերի պես իրար տված...

❒

Ինչ էլ հորինեն, ի՞նչ էլ արծարծեն,
Դու մոլեռանդն ես պատվի ու սիրո,
Եվ եթե մի օր ինքդ քեզ եղծես՝
Հոգի՞ ես տալու ատյանում տիրոջ...

Միշտ էլ կճարվի մի ձեռք անողորմ,
Որ քեզ կդավի ինչ-որ մի ժամի,
Սակայն ճե՞ղք չես տա ցավից անողոք,
Եթե քեզ դավի միա՞յն արժանին...

❒

Մի՛ տագնապիր, իմ սիրելի՛, մենք դեռ կապրենք,
Թեպետ աշնան այս օրվա մեջ տաղտկալի,
Առաջացած այս տարիքում անանձկալի,
Այնուհանդերձ, ցավագի՛նս, մենք դեռ կապրենք:

Ափերիդ մեջ ա՛ռ իմ ձեռքը դողդողացող,
Որ սուզվում էր ջրվեժի մեջ քո վարսերի,
Իբրև թեկուզ հեռավոր հուշ չմոռացվող,
Թող արթնանա մեր մեջ օրն այն վառ հույսերի...

❒

Քո հանձնակատար դայակը լինել
Եվ հսկել քունդ գիշերն ապահով,
Քեզ համար անսուտ երգեր հորինել,
Եվ օրորել քեզ՝ ինչպես քնքուշ հով...

Հետո վերածված սրբապատկերի՝
Կախված մնայի քո իսկ սնարից,-
Բայց ո՞ւմ է տրված այդ բախտը վերին
Եվ ո՞ւմ է ժպտում, ապա...ո՜չ թե ինձ:

❒

Եվ փառավոր է եղել օրն այն քնքուշ խոսքերի,
Եվ արևոտ է եղել օրն այն անդարձ հեռացող,
Առինքնող էր մեղեդին ջրերի մեղմ հոսքերի,
Եվ բարեխոս են եղել քո աչքերը հրացոլք...

Ղողանջում են մինչ այսօր իմ ունկերում հուշացած
Զանգակները ծիծաղիդ և շշուկներդ անլուր,-
Թեպետ հիմա ինձ համար ցավո՜տ է օրն այն անցած,
Այնուհանդերձ, ասա ինձ՝ ո՞ւմ եմ ես պարտք մնալու...

❒

Ես քո հեռավոր կարոտն եմ միգոտ,
Ես՝ քո անտրտունջ տառապանքն անքուն,
Ես՝ քո հեռահար հայացքն արցունքոտ,
Այս անբարեհույս, հանցավոր կյանքում...

Օ՜, վա՜յ թե մի օր, բախտի հեգնանքով,
Կեսգիշերային արթնությամբ անխինդ,-
Ի՜նձ է հասնելու հեկեկանքը քո
Եվ...փո՜ւլ է գալու երկինքը գլխիս...

❒

Եկար ու ողջը խառնեցիր իրար,
Օտարի նման. անհաղորդ ու սառն,-
Կանխորոշվա՞ծ էր խզումն այդ իրավ,
Թե՞...սատանայի դավերն էին խառն:

Քո այդ հեգնական հայացքի դիմաց,
Քո այդ անպատշաճ խոսքերից խոցված,
Ես խոնարհո՜ւմ եմ իմ աչքերը թաց
Եվ...զարմանքից էլ ապշո՜ւմ է Աստված:

❒

Եվ ի՜նչ արագ են սուրում օրերը այս հիասքափ,
Աղոտացող հուշերի երամն առած իրենց հետ,
Ու մենք հայտնվում ենք դանդաղ ամայության մեջ մթար,
Որբերի պես հուսախաբ, անօգնական, խելահեղ...

Ստվերներն են երկարում եզրագծին մոտեցող,
Այդ ամենը, սի՛րտ իմ հեգ, մի՛ ընդունիր ցավագին,
Մխիթարվե՜նք մի վերջին ցայգալույսով հրացոլք,
Ապա անդա՜ռձ հեռանանք՝ չաղերսելով փրկագին...

❒

Ժամանակները խառն են, անողորմ,
Քմահաճ են բախտ ու ճակատագիր,
Վառիր մատներդ թեկուզ որպես մոմ,
Թեկուզ որպես հավք, հոգիդ արձակիր...

Կյանքդ աղոթքով մի՛ մթագնի,
Ինչ հրաշքներ էլ միտքդ արարի,-
Երբեք պանթեոն չե՜ն իջեցնի
Քո եկվորյակը՝ կերտված մարմարից...

❒

Բարձր լեռների շամբուտներից վեր
Ջինջ մայրամուտն է բոցկլտում հրատ,
Ինչպես քավության հայտ ու հրավեր՝
Մի աստղոտ երկինք բացվում է վրաս...

Տենչում է սիրտս ոլորտը վերին,
Թևերն է բացում թռիչքի սովոր,
Մինչ մթնժորած արահետներին
Անդորություն է մի խորհրդավոր...

Արծաթին տվող մի երկնակամար,
Բարձրագահ աշխարհ ու երկինք մի մով,-
Կարծես անհունի աստղերն անհամար
Իմ հոգետունն են խուժում երամով...

հուլիս 2007թ.

❒

Երբ երկինքը ծանրանա կապարի պես մոխրավուն,
Եվ մառախուղը ծածկի երկրի դեմքը չսառած,
Եվ հապաղի ուշացող նոյեմբերը դեռ հեռվում,-
Ես դուրս կգամ իմ շեմից խոնավ աշնանն ընդառաջ...

Սակայն պահած հոգուս մեջ հրապույրները գարնան,
Ամռան արևն ու տապը, ուրցի բուրմունքը թովիչ,
Եվ չեմ թողնի կոպերիս արցունքներս ծանրանան
Այն ամենի համար, ինչ ցավ կբերի մտովի...

❒

Կապույտ մուժ է իջնում բլուրների վրա,
Խոժոռ քարափներին՝ անդորը եղեմական,
Եվ լեռներից անդին, հեռվից ամպածրար
Ես լսում եմ սթափ ու կանխատես մի կանչ...

Խորհրդավոր մի կանչ՝ սրտակեղեք մի մո՞ր,
Թե՞ հոր արիական, որ սատար էր ու սյուն
Մի ողջ գերդաստանի, և ապրում էր անդորը
Նոյի ավանդական անդաստանում իր սուրբ...

Ոգեկո՞չ է ու կա՞նչ նախնիների արյան,
Թե՞ սեպագիր պատգամ մեր նախահոր կողմից,
Որ նորոգենք անվերջ մեր տապանը Նոյյան
Եվ չսարսենք գալիք ջրհեղեղ ու հողմից...

Կապույտ մուժ է իջնում բլուրների վրա,
Խոժոռ քարափներին՝ անդորը եղեմական,
Եվ լեռներից անդին՝ հեռվից ամպածրար,
Ես լսում եմ սթափ ու կանխատես մի կանչ...

օգոստոս 2007թ.

❒

Ես կպահեմ օրերի բուրումները, որ չանցան,
Եվ կքայլեմ ընդերկար իմ հուշերի թարմությամբ,
Եվ այս հողը դեռ կզգա մարմինը իմ ծանրացած,
Կխլրտա սիրտս դեռ իր խանդավառ գոյությամբ...

Կպահպանի ռիթմը իր զարկերակս համաչափ՝
Այս օրերի վազքի հետ, որ դեռ ինձ չի շրջանցել,-
Ականջը խուլ, կուրանա սատանայի աչքը չար,
Որ դեռ նամակ չեմ՝ հղված անհայտին ու անհասցե...

հուլիս 2007թ.

❒

Երկինք անաստղ ու անբարեգութ,
Ահազդու աչքեր ու հայացք մթան,
Եվ գիշերային ստվերներում մութ,
Ես որոնում եմ ստվերը քո թանկ...

Սև-սքեմակիր՝ ինչպես աբեղա,
Գիշերն ուսերիս՝ հոգնած ու նկուն,
Ես՝ չմարող բոց քո սիրո վկան
Եվ... խոնարհաբար քո երկրպագուն...

սեպտեմբեր 2007թ.

❒

Քեզ կտանեմ հեռավոր, մենավոր ափ մի լուսե,
Ուր կվանեմ, կհերքեմ առասպելը ծերության,
Եվ կհառնես դու իմ դեմ ջահելության հարությամբ,
Մեզ չի հասնի այլևս գիշերների ահը սև...

Կճեղքի ծիրն անհունը Արարիչի հայտնությամբ
Եվ կլինի հիրավի վերածնունդ հավաստի,-
Սեզամի պես կբացվես ու կբուրես թարմությամբ,
Ինչպես ձմռան ձյուներում հոնի ծաղկած վերստին...

օգոստոս 2007թ.

❒

Վաղուց մոռացած տուն, տեղ ու հասցե
Եվ... հրաժեշտի պահին այս մոլոր
Ես ինչպե՞ս գնամ կարեկցանք հայցեմ
Իմ չհորինված սերերից բոլոր...

Երկնային տիրոջ հայացքս անլուր՝
Ոնց աղերսանք եմ հառել համրորեն,-
Սատանան տանի՝ ի՞նչ եմ անելու,
Թե այնպես լինի, որ... ինձ չներեն:

նոյեմբեր 2007թ.

❒

Ինձ տրված է մի կյանք ու մի մարմին ողորկ,
Աստծո ներշնչած շնչառությամբ համակ,
Եվ մի ոգի՝ նրա պատվիրանին հաղորդ,
Եվ մի սիրտ է տրված նվիրումի համար...

Մի աղոթք է տրված իմ շուրթերից առկախ,
Որով հասու լինեմ Տիրոջ Ողորմության,
Ինձ տրված են աչքեր ու մի հայացք պարզկա,
Հառված որպես աղերս վերին արքայության...

դեկտեմբեր 2007թ.

❒

Ձմեռ է, ձյուն, բուք անխնա,
Դողում է իմ ձայնը երեր,
Բայց կանչեմ էլ՝ չեք արթնանա,
Իմ անմոռաց, քնած սերեր...

Երկինք մթին, անմանանա,
Ձյունով պատած շիրմաքարեր,-
Գարուն էլ գա՝ չե՛ք արթնանա,
Իմ տարաբախտ, լքված սերեր...

հունվար 2008թ.

❒

Ես իմ անունը փնտրեցի երկար՝
Ծննդոց գրքում, գրքում մեռելոց,
Պատվո տախտակին ու գրքում կարմիր,
Բողոքի գրքում բուֆետապանի,-
Գրողը տանի՝
Շիրմաքարերի վրա էլ չկար
Անունների մեջ հայտնի և այլոց...
Եվ հանկարծ եկա անակնկալի,-
Ցավալի էր խիստ, ցավալի, սակայն
Իմ անունն հիմա ոչ ոք չի՞ տալիս
Եվ...ես էլ արդեն մոռանում եմ այն...

հունվար 2007թ.

ԾՆՆԴՅԱՆ ՕՐ

Հրավիրիր ինձ տոնախմբության
Ծննդյան օրվա առթիվ քո ուրախ,-
Ոչ ոք չի՞ խրտնի իմ այդ հայտնությամբ,
Քո փեսացուից բացի վախվորած...

Եվ մոռանալով ինչ է կատարվում,
Գինարբուքի մեջ խառնված իրարու,-
Ես քեզ կխլեմ քո փեսացուից՝
Անսպասելի հայտնված շուրջպարում...

Մեր շուրջը խելառ կպարեն անվերջ,
Նետելով իրար ժպիտներ խնդուն,-
Կշառագունես իմ թևերի մեջ,
Ապա իմ գրկում կնվաղես դու...

Հրավառություն ի՞նչ երանելի,
Սիրո ու խանդի բոցավառ ծեսում,
Մեկն այնտեղ իրեն կկորցնի էլի,
Չի՞ գտնի տեղն իր տոնահանդեսում...

դեկտեմբեր 2009թ.

ԿԱՆՉ

Ես լսեցի հեռավոր, կարոտակեզ կանչը քո,
Դու ասացիր՝ ե՜տ բեր ինձ գարունները իմ անցած,
Տու՜ր վերստին երբեմնի պատրանքներս երկնքոտ,
Որ թևեր էր տալիս ինձ՝ սավառնելու վեհացած...
Ե՜տ բեր կրկին վաղեմի այգաբացներն հրաշեկ,
Արշալույսներն հրացոլք, արահետները շաղոտ,
Ուր, թևերիդ մեջ առած, տանում էիր ինձ անշեղ,
Շառագույնը իմ դեմքի աչքերիդ մեջ անաղոտ...
Օ՜, հասնու՞մ է քեզ, արդյոք, իմ այս կանչը թախծալից,
Հեռուներից այս անելք, մշուշներից էլ դենը,-
Տա՜ր, այստեղից ինձ հանիր, թեկուզ նետիր դու նորից
Սիրո՜, խանդի, անմռունչ տագնապների գեհենը...

հունվար 2010թ.

❒

Դու չգիտեիր ինչ է խզումը
Եվ...հիմնահատակ իմ փլուզումը,-
Ես ինքս ինձնից անհույս կորսված՝
Ի՜նչ շշմեցուցիչ, անողո՜ք հարված
Քնքշագին սիրված մի արարածից...
Թողնեիր գոնե մի շո՜ղ ետդարձի:

հունվար 2010

❒

Արարչուհի էր զնգուն ծիծաղի,
Աղբյուր էր հորդում շուրթերից ասես,-
Թարթիչների և հոնքերի խաղից
Բռնկվում էի ծիածանի պես...

Արարչուհի էր խանդի, տագնապի,
Կարոտի, սիրո խարու՜յկ էր հրկեզ,
Բայց և նման էր շա՜նթ ծնող ամպի,
Կրքոտ բռնակալ Շամիրամի պես...

հունվար 2010թ.

❒

Թե հանկարծ հրաշք կատարվեր ինձ հետ,
Ելնեիր իմ դեմ այնպես սիրառատ,
Ես հաստատ իմ այս գլուխն ալեհեր
Վա՜յր կբերեի ծնկներիդ առաջ...

Ի՜նչ հրաշք, ի՜նչ բան, ո՞վ գիտե, իրոք,
Թե ոնց դեղահաբ՝ բուժիչ ու դառն,
Ինչպե՜ս եմ ըմպում ցավդ անամոք
Եվ...խնդությունդ արցունքախառն:

փետրվար 2008թ.

ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՊԱՍԻ ՎՐԱ

Անցորդ, ճամփեզրին, ահա, տունս, տես,
Դուռը քո առջև բաց է սրտիս պես,
Երբ էլ հայտնվես դու մեր կողմերում՝
Համեցեք, Տիրոջ հյուրն ես ցանկալի,-
Յուրայիններին չե՞մ հրավիրում,
Յուրայինները… իրե՛նք են գալիս:

հունվար 2009թ.

❒

Տիրոջ օրհնությամբ, աջն ուսիս պահած,
Հավատարիմ իր պատվիրաններին,
Իմ հոգետունը կերտեցի, ահա,
Տառապանքներիս գլաքարերից…

Եվ բա՜ռձր, բա՜ռձր գմբեթից իմ վեր,
Ղողանջում է արդ զանգս ձուլածո,-
Ես ամբողջ կյանքում որոնում եմ քեզ՝
Որտե՞ղ ես, արդյոք, ով մա՛րդ Աստծո…

փետրվար 2009թ.

❒

Ես նախանձով եմ նայում քո երթին,
Եվ ինձ թվում է՝ հեշտ են քայլերդ,-
Այդ երկար ճամփին,
Դժվարն իր հերթին,
Ցավալին՝ ընտրած
Ճամփից շեղվե՞լն է…
Գիտեմ՝ այդ ցավն է քեզ առաջ մղում,
Ներշնչանքն ուժով լցնում ձեռ ու ոտ,-
Պատկառանքով է հոգիս ողողում
Քո տեսքը՝ անշուք ու անհավակնոտ…

Գնա և կարճիր վերելքդ անհարթ,
Ուղեցույց դարձրած ծիրը անհունի,
Թեպետ անկումը
(Մե՞ն մի ակնթարթ),
Ապահովության երաշխիք չունի…

մարտ 2009թ.

❒

Երկինքն անծիր, դեմս դաշտն էր անվերջ,
Բռնած տուտը անհայտ ճանապարհի,-
Գնում էի՝ սուզված իմ հոգու մեջ,
Անէացած ցավոտ այս աշխարհից…

Դու հայտնվեցիր մի պահ իմ անուրջից,
Հետո, ինչպես ասուպ, անհետացար,-
Ես՝ արցունքի մի շիթ, ընկա հանկարծ
Մառախուղված օրվա ունքամիջից:

ապրիլ 2009

❒

Դու այգաբացի միջով ես քայլում,
Եվ քեզ թովում է երկինքը լազուր,
Արև՞ն է, արդյոք, քո դեմքին փայլում,
Թե՞ քո ժպիտը, որ սի՜րտ է հուզում...

Գեղեցիկ ու շիկ, սլացիկ հասակ,
Տասնվեցամյա ամազոնուհի,
Թեպետ տակավին արբունքի հասած,
Բայց և անտեղյա՜կ սիրո հրդեհին...

Քո ժպիտն անմեղ՝ միտք չունի հետին՝
Նորածագ արև ու դեռևս սառ,
Եվ քո հայացքը՝ սլա՜ցք է նետի,
Ում կհաջողվի թռիչքում որսալ...

Ի՜նչ երանություն թափանցիկ հոգու,
Ինչպիսի աչքեր՝ սիրո երկու ակ,-
Ո՞վ կհրդեհի երկինքդ մաքուր,
Որպես վաղորդյան արդար արեգակ...

մայիս 2009թ.

❒

Ճառագայթում է էկրանն հուր ու բոց,
Մերթ բռնկում, մերթ խամրում լույսերը,-
Պարում են այնտեղ մերկապարանոց,
Ուր կիրքն է տիրում և...ո՞չ թե սերը:

Մարմիններ ողորկ ու օձագալար,
Ճիչեր կանացի, ջղաձիգ ու սուր,-
Պարում են այնտեղ խենթ ու մոլագար
Եվ...ոտնատա՞կ են տալիս՝ ինչ սուրբ է:

Պարում են այնտեղ անդուր, անպարկեշտ,
Բիրտ են ռիթմերը ու խլացնող,-
Միտքդ խոցում է սիրտդ այնպես հեշտ,
Թե... դարն այս, դարը՝ խելացնո՞ր է:

մայիս 2009թ.

❒

Խաչված ձեռքերս՝ աղերս առ երկինք,
Ապավեն եղիր, բարեգութ Աստված,-
Նրան, ով չունի և՛ տուն, և՛ տանիք,
Եվ ով ապրում է իր տա՞նն օտարված...

Հածում են շուրջդ հազար չար ու շառ
Եվ սուրբ անունը քո՝ չարաշահում,-
Դատավոր եղիր արդար, անաչառ,
Ընչաքաղցների այս խենթ աշխարհում...

հուլիս 2009թ.

❒

Աննա Սիմաթովային

Դու աղետների միջով ես քայլել
Եվ տագնապների միջով խավարի,
Քո անզուգական պահվածքին վայել,
Ինչ անհարի՞ր էր քո ապրած դարին...

Քեզ համար հիմա տոն է հարության,
Ինձ քո ոգեղեն լույսն է հմայում...
Ես՝ քո մաշկի տակ ու շնչառությամբ
Վերածնվում եմ այս էպոխայում...

...Ժամանակները պիտի հոսեին,
Եվ պիտի անցներ դարը չարաղետ,-
Ես այնպե՞ս պիտի քեզ վերծանեի
Որ հայերենով խոսեիր ինձ հետ...

հուլիս 2009թ.

«ՆՎԱԳՆԵՐ ՍԻՐՈ» ՇԱՐՔԻՑ

❒

Կշառագունի երկինքն աստղացոլք,
Այգաբացը՝ մերկ ոտքերը շաղոտ,
Եվ ինձ կբերի օրը արթնացող
Անցած սերերի հուշերն անաղոտ…

Կպաշարեն ինձ խոհերն անհաճույք,-
Հոգնած ու նկուն, քայլքով երերուն
Ես կքաշվեմ իմ հոլիկն անպաճույճ,
Ուր մորմոքում է ոգին անտերունչ…

հունիս 2009թ.

❒

Ի՜նչ ցավի տեր արիր ինձ՝ դաժանությամբ անիմաստ,
Փլվեց տաճարն իմ հոգու՝ խորանը քո աղոթքի…
Ինչի՞ տեր եմ ես հիմա այս վիճակի մեջ նվաստ,
Էլ ո՞վ պիտի, ասա ինձ, խոցված հոգիս ամոքի…

Աղոտացան աստղերը երկինքներում իմ պարզկա,
Մառախուղված օրվա մեջ թոն է կաթում անարցունք,
Մղձավանջներ խուժեցին իմ հոգետունն արևկա,-
Այս վիճակում էլ քեզնից ես կարեկցա՜նք չեմ հայցում…

հունիս 2009թ.

❒

Դու իմ առաջին արշալույսն էիր,
Բացվող առավոտն ու արեգակը,
Ես քո հայտնությամբ լիահույս էի,
Հանգիստ էր խփում իմ զարկերակը…

Այդպես կամեցավ և Արարիչը,
Կանխորոշված էր այդ պատահարը,
Որ դառնաս սիրո առաջին ճիչս
Եվ… այգաբացիս շեփորահարը:

նոյեմբեր 2009թ.

❒

Փափուկ ձյուն իջավ իմ երազներին,
Իմ կարոտներին իջավ ձյունն անբիծ,
Բայց գարնանային տաք հալոցքներին
Նրանք կարթնանան, կխայտան նորից…

Հոգնած աչքերում իմ երանավետ,
Դու էլ քուն մտար անվրդով այնպես,-
Երբ փեղկերի պես կոպերս բացվեն,
Կշառագունես արշալույսի պես…

դեկտեմբեր 2009թ.

❒

Կարեկցում եմ քեզ
Եվ…որովհետև ինձ չես կարեկցում:
Կարեկցում եմ քեզ
Եվ…որովհետև
Ապրում ես դու իմ կարեկցանքից դուրս…
Կարեկցում եմ քեզ,
Որ դու իմ սիրուց առաջ էլ կայիր
Եվ ապրում էիր մի այլ աշխարհում…
Ուր ես չկայի:
Կարեկցում եմ քեզ,
Որ դու ինձ համար հայտնություն չեղար,
Սիրո հայտնություն,
Խնդության, խանդի, ցավի, տրտմության
Եվ…այդ ամենի համար այս ժամին
Դու՝ կարեկցանքի միա՞կ արժանի…

դեկտեմբեր 2009

ՄԵՆՔ

Մենք Նոյից սերված ու սերունդ Հայկի,
Մենք Քրիստոսից առաջ էլ կայինք,
Եվ ում չէ հայտնի թափից մեր զարկի,
Որ ժառանգորդն ենք Տիգրան արքայի…

Մեզ՝ մի Անահիտ կամ Աֆրոդիտե,
Էլ ինչ Շամիրամ կամ Ասարհադոն,-
Աստված է վկա, որ մեզ քաջ գիտեն
Թաթար ու մոնղոլ, և Հռոմ, և հոն…

Ինչ փույթ, թե մի նոր փակուղու մեջ ենք,
Բայց հողմերի դեմ մաքառող իմ սիրտ,
Մենք հարմարավետ մի ե՞լք կգտնենք,
Անհարմարավետ աշխարհում այս բիրտ…

Անցած ամեհի փորձություններով,
Մենք ընթանում ենք անքայլամոլոր,-
Թե ումն է դարը քսանմեկերորդ՝
Մեզ պատկանում են դարերը բոլոր…

մարտ 2008թ.

❒

Պահվում եմ մի պահ ես հեռու՝-հեռվում
Եվ համբերատար զննում ինձ համակ,
Թե մեկի աչքում ես կեղծ եմ թվում՝
Անտանելի եմ դառնում ինձ համար…

Արցունքն այնպես է կոպերս քանդում…
(Մաքրության անձրև, դու ինձ ողողիր)
Օ՜, հազար անգամ փառաբանվես դու,
Վաղորդյան իջած ցողի պարզություն…

Գիտե՞ք ինչ արժե վեհությունն հոգու,
Ինքնամաքրումը և հսկումը խիստ,-
Դա երանության պահ է երկնքում
Եվ… զարկերակի խփո՜ց է հանգիստ:

մարտ 2008թ.

❒

Ես երկու ոտքով կանգնած եմ հողին,
Կարծես երկիրը ինձնով է աճում,
Ես շունչն եմ զգում ինձ արարողի,
Ծնչառությունը խոտի հարաճուն…

Իմ մեջ շոգում է տապը հարավի,
Հյուսիսի սառույցն ու ձյունն է հալչում
Եվ անապատն է հևում ծարավից,
Եվ հևասպառ է ամեն մի թռչուն…

Ես մեկ հովիտ եմ դառնում բուրավետ,
Մեկ՝ հնձված արտի հասկի մի ցողուն,
Մեկ՝ դառնում զեփյուռ՝ գարնան հրավեր,
Մեկ՝ ինձ անձրևն է անվերջ ողողում…

Եվ ես դառնում եմ քնքուշ մութի թև,
Մեկ գիշերվա մեջ՝ բողբոջի պայթյուն,
Մերթ՝ արևմուտքի մարմրող կանթեղ,
Մերթ՝…արևելքի հրավառություն:

մարտ 2008

❒

Մի շտապեք հրապուրվել դուք ինձանով,
Ես մերթ օր եմ անհրապույր, մերթ՝ արևոտ,
Հիացմունքի արժանի եմ հենց նրանով,
Որ երբեմն ինձ համարում են անկարևոր…

Դուք չկարծեք, թե հակված չեմ հրապույրի,
Բայց դեռ թողեք հանուն սիրո ու հավատի՝
Ես նետեմ ինձ անապատի տապ ու հրին,
Բյուրեղանամ ավազի պես մանրահատիկ…

Ապա Մարիամ Աստվածածին ու սրբանուն՝
Տար ինձ օծիր սրբազան գետ Հորդանանում…

մարտ 2008թ.

❒

Անհանգչելի սիրո կարոտ դառնալեղի,
Ցավի մրմուռ ջղերի մեջ մորմոքածին,
Դու ինձ տրված վերուստ ընտիր կանանց ցեղից,
Մաքրամաքուր՝ ինչպես Մարիամ Աստվածածին…

Դու ինձ տրված որպես ակունք պատրանքների,
Տեսիլների հեղեղ, խաբկանք չշոշափվող,
Տրված որպես պատիվ, պատիժ՝ կամքով վերին,
Բացված երակ կամ վերք՝ երբեք չսպիացող…

ապրիլ 2008թ.

❒

Կանխատես էր երազն այդ՝ իբրև գալիս ես, ահա,
Քո դեմ բացում եմ իսկույն և՛ դուռ, և՛ գիրկ ամոքիչ,
Ոտքերիդ տակ փռում եմ բոլոր գանձերն իմ պահած,
Որ փայփայել տարիներ, չե՞մ շռայլել ոչ ոքի…

Օ՜, ի՜նչ գանձեր, սիրելիս, մարգարիտներ արցունքի,
Հուլունքաշար, որ կառնի պարանոցդ իր վրա,
Եվ ցնծագին կշողան քո աչքերը բերկրանքից,
Բայց կանխատե՞ս էր, արդյոք, իմ այդ երազը իրավ…

ապրիլ 2008թ.

ՔԱՌԱՏՈՂԵՐ

❒

Հոգիս չի սարսում կույր բնազդների սելավից պղտոր,
Ես այն տվել եմ ամեն տեսակի փորձությունների,
Կարող եմ անցնել նույնիսկ Հանդեսի Ստիքսն անխոտոր
Եվ մաքուր դուրս գալ դժոխքի բոլոր պարունակներից…

սեպտեմբեր 2007թ.

❒

Սկիզբը չի երևում՝ մեգ մշուշ է սաստիկ,
Մի կյանք էր՝ խենթ վազք ու տենդ (առարկություն չունի նա),
Որ հասել եմ ավարտին ու սա վերջն է հավաստի,
Բայց դեռ ինչե՞ր կանեի, թե որ Տերը կամենա…

դեկտեմբեր 2006թ.

❒

Հոգնել է սիրտս ու ձեռքս՝ երեր,
Միտքս առաջվա թռիչքը չունի,
Բայց դեռ ինձ կյանքից դո՞ւրս մի համարեք,
Եվ…մի վտարե՞ք հիշողությունից:

հունվար 2008թ.

❒

Քամին անտառի բացատը մտել,
Շուրջը ամեն ինչ խառնում է իրար,-
Մինչդեռ շիկահեր աշունը այնտեղ,
Վառ զգեստներ է փորձում իր վրա…

հունվար 2008թ.

❒

Ի՜նչ ես այդպես երկար խորհում ինքդ քեզ հետ,
Չես հագենա կյանքից՝ ապրիր թեկուզ մի դար,-
Դու՝ մայրամուտ ապրող հոգի իմ որբ ու հեգ,
Թե կարող ես՝ բռնիր, պահիր արևն արդար…

փետրվար 2008թ.

ՀՈԳԻ

Նա փոթորկվում է ամեն առիթով,
Եվ մորմոքում է նաև... անառիթ:
Նա մերթ տաճար է՝ դուռը բարձիթող,
Մերթ իշխանուհու ամրոց անառիկ...
Մերթ նրա շեմին օրն է շիկանում,
Մերթ մառախուղն է նստում անընտել,
Մերթ նվաղում է սուգ ու կականում
Եվ պաղ արցունքի կաթո՜ց է այնտեղ...
Եվ... թափառելով աշխարհից աշխարհ,
Երկրպագելով աջը Արարչի՝
Անակնկալիք ու նաև անշահ,
Բայց միշտ կարո՜տ է մնում փոխկանչի...

ԵՐԿՈՒ ԱՂԵՐՍ

1

Ո՛չ, ամենքին չէ վերուստ վիճակված
Լինել երդվյալն ատյանում խղճի,-
Այս դարասկզբի բարքերում խեղված,
Դու՝ խռովյալդ՝մաքառում ու ճիգ…

Առ իմ ճիգերն էլ՝ որպես հավելում,
Դարձի բերելու հոգիներ կավատ,
Բայց քո խռովքից ի՞նչ է փոխվելու
Այս ցոփ աշխարհում՝ մեղքերի գավաթ…

2

…Եվ չի փոխվի այս աշխարհում ոչի՞նչ, ոչինչ,
Մի՞թե, իրավ, այս աշխարհը չի՞ փոխվելու…
Խուլ ունկերում պայթիր, սակայն, դու որպես ճիչ՝
Մաքրազերծող… առանց պատրանք աղերսելու:

Բարությունը վախճան չունի, վերջ չունի,
Եվ հազիվ թե այսպես մնա աշխարհը բիրտ,-
Բացվելու է լազուրաչվի ծի՞րն անհունի…
Օ՜, քնքշաթով հոգիների տենչանք իմ սիրտ:

«ՊԱՏՐԱՆՔՆԵՐ ՍԻՐՈ» ՇԱՐՔԻՑ

Դու կարող էիր ձեռքդ ափիս մեջ տաքացնեիր,
Եվ ափերիս մեջ կծվարեիր՝ ինչպես քնքուշ լոր,
Եվ մի՞թե, ավաղ, դու չհասկացար ու չգիտեիր,
Որ ափերիս մեջ հանգիստ կառնեիր դու տարին բոլոր…

Քեզ կտանեի գիշերվա միջով ու առավոտի,
Եվ ալպիական մարգերի միջով ու սարերն ի վար,
Կհարբեիր դու ուրցի բուրմունքով ու խոռնխոտի,
Եվ քո նիրհի մեջ աշխարհը համակ երազ կթվար…

Թե ափերիս մեջ պահեիր ձեռքդ ու տարին բոլոր
Հանգիստ առնեիր ու ծվարեիր այնտեղ ինչպես լոր…

❒

Այն օրերը հեռու անվերադարձ անցան,
Ճամփաներին արդեն մառախուղ է, մշուշ,
Թե կարող ես՝ ապրիր անամոք ու անցավ,
Թե կարող ես՝ սրտից հանիր ամեն մի հուշ…

Էլ չի՞ հասնի ափս քո ուսերին նազուկ,
Մոտ է ձմեռն, անշուշտ, կիջնի և ձյունը սառ,-
Լռեցրու իմ մեջ քո կարոտը անզուսպ,
Խլացրու քո մեջ իմ կանչը՝ աղերսանք…

❒

Կարթնացնեմ քեզ հիմա ու կնայեմ աչքերիդ,
Այնտեղ աստղեր կան դարձյալ, ոչ թե մշուշ անսքող,-
Օ՜, աչքերն այդ հիասքանչ ու ժպիտը անթերի՝
Հափշտակում են ինձ միշտ իրենց անհագ հմայքով…

Կարթնացնեմ քեզ հիմա, մինչև նիրհից գաս ուշքի,
Լուսամուտի փեղկերը ես կբացեմ լայնորեն,
Որ ներս խուժեն բույրերը գարնան արբշիռ զարթոնքի
Եվ հովերը քնքշագին, որ բաց կուրծքդ համբուրեն…

դեկտեմբեր 2010

ԿՈՒՌՔ

Նա աշխարհ եկավ որպես Տեր մի նոր,
Ելնում էր ամեն վիճակից անել՝
Վեհացնելով երկիրն իրենով,
Նա այդպիսի՞ն էր, թե՞…հորինե՜լ են:

Բայց արդեն կու՜ռք էր և սուրբ էր ու վերջ,
Միահեծան էր, թեպետ և ծե՜ր էր,-
Նա ապրում էր շիկ արձանների մեջ
Եվ… այնտեղի՜ց էր վարում գործերը:

❒

Ոչ ոք ոչ ոքից գլուխ չի հանում,
Գոնե խելք խելքի տային մեկի հետ,-
Ինչո՞ւ են իրար ոտնակոխ անում
Այս համընդհանուր վազքում խելահեղ…

Համաճարակ է, ոգու սո՜վ կարծես,
Պատրաստ են իրար ոտնել անխնա,-
Հայտնվե՜ր մեկը՝ որպես սո՜ւրբ Մովսես,
Շուռ տար այս երթը մինչ… լե՜ռը Սինա:

ԽԻՂՃ

Որդեգրել եմ ես քեզ էն գլխից,
Ուղեկից դարձրել կյանքիս կարևեր,-
Եվ այս աշխարհի մեղքերում գերխիտ
Զույգ ափերիս մեջ պահել գլխից վեր…

Եվ իմ մարմինը, որ հողեղեն է,
Գուրգուրել է քեզ, որ չելնե՜ս հունից,
Իսկ ինչ էլ կյանքում արել-թողել եմ՝
Լոկ քո մղումո՜վ ու քո՜ անունից…

❒

Ում ի՞նչ է տրված՝ ով ի՜նչ իմանա,
Քոնը՝ մաքառում ու ճիգ է անվերջ,-
Երկնքից իջած տիրոջ մանանան
Չեն մատուցի քեզ սկուտեղի մեջ…

Մինչդեռ քեզ հասած տառապանքներից,-
Գիտեմ՝ թերևս ուժդ չի հատնի,-
Դու վա՜յր չես նետի բեռդ ուսերից
Եվ… ոչ ոքի մոտ ցավդ չե՜ս մատնի…

«ՊԱՏՐԱՆՔՆԵՐ ՍԻՐՈ» ՇԱՐՔԻՑ

Հանուն ինչի՞ զուր և ու՜մ հաղորդեմ,
Թե նախախնամ սեր էիր անբիծ…
Ինչ որ եղել է՝ անցել է արդեն,
Հիմա մի հուշ է մխում ու… թախիծ:

Եվ, անշուշտ պիտի տանջվեի երկար,-
Քո հարսանիքում ես ներկա՜ չէի՝
Հրավեր չկար… վիրակա՜պ չկար՝
Վիրավոր սրտիս արյու՜ն առնեի…

❒

Դու՝ Լիլիթի պես հպա՜րտ, առինքնող,
Եվ աննյութեղե՜ն, հրեշտակադեմ,
Ես՝ որպես Ադամ՝ հմայված քեզնով,
Մոռացած երկինք, երկի՜ր ու եդեմ…

Եվ… հանդիպեցինք Դրախտում մի օր,
Քանզի ուրիշ վայր մեզ չէ՜ր վիճակված,
Սակայն Սերովբեն գիտեր անգամ, որ
Չէինք վայելի պտո՜ւղն արգելված…

❒

Քո շիրմաքարին ձյուն է սառույցյալ,
Չի հալեցնի ոչ մի սեր հրկեզ,-
Հանգուցյալ, լսի՜ր, լսի՜ր, հանգուցյալ,
Ապաշխարանքն էլ չի՜ օգնելու քեզ…

…Եվ ուշ հասկացավ, իրավ՝ ու՜շ այնքան.
Երբ ինքը իրեն դատեց նա զգաստ,-
Սիրո արցունքիդ մի շի՜թը անգամ
Թանկ էր իր ամբողջ կյանքից անիմաստ…

❒

Մեր շուրջը՝ անտառ, խիտ, խորհրդավոր,
Ձյունանուշներով բռնկված բացատ,
Հուշ կդառնա այս օրն էլ արևոտ,
Կցնդի ինչպես ցողը հրացայտ:

Ծանր է խորհել՝ կսկիծ է անհուն…
Սիրով առլեցուն, մղումով ազնիվ,
Փարվի՞ր ինձ քանի կամ այս աշխարհում,
Այն աշխարհում ինձ… ձեռքդ չի՞ հասնի:

❒

Արքնացրու իմ մեջ չաղոտացող մի հուշ,
Արքնացրու իմ մեջ և մի հայա՞ցք ծավի,
Եվ մի ժպի՞տ պարզկա, որ դեռ ոչ մի մշուշ
Չի՞ աղոտել բնավ՝ առկայծում է ցավի՞ց…

Արքնացրու իմ մեջ մի սիգաճեմ հասակ,
Հեռվից պարզված մի ձե՞ռք, պաղատագին մի կա՞նչ,
Մի հեկեկո՞ց… որ հենց իմ ունկերին հասան,
Տակնուվրա արին հոգի՞ս անտիրական…

❒

Ստվերներն են երկարում՝ մի գունատվող երկինք մով,
Մի հեռաստան՝ նիրհի մեջ, աղոտացող Կաթն-ծիր,-
Այս հեռացող օրվա մեջ՝ ես մորմոք եմ անամոք,
Մայրամուտին վերահաս՝ ահի գունդ եմ ու կծիկ…

Չի հմայում իմ հոգին ո՞չ մի տեսիլ, ո՞չ մի կանչ,
Բվի կռինչ է միայն քարածերպի ճեղքերում,-
Մինչդեռ հեռու-հեռավոր այն օրերին հիասքանչ,
Հրավառվում էր սիրտս մայրամուտի ցոլքերում…

❒

Մենք բռնկված ենք մի անհուն սիրո
Մոլուցքով վայրի,
Ախոյանն՞ր ենք ասես հայտնված
Այս բարիկադին,
Կբռնեմ ոչ թե սրիդ դաստակից,
Այլ նրա սայրի՞ց,
Թեկուզ արնոտվեն ափերս հանուն սիրո ու խանդի…
Թշնամիներ չենք, և հակառակը
Ո՞վ կվկայի,
Իզուր ենք այսպես անհաշտ իրար դեմ
Ելել գրոհի,
Դու՝ Արաբզանգի, ես՝ ավարառու
Մի Շահ Իսմայիլ,
Նետում եմ, ահա սու՞րս ոտքիդ տակ
Որպես… քո զոհի:

հունվար-փետրվար, 2011թ.

❒

Աստղերը արդեն էլ չեն առկայծում,
Շառագունում է դեմքը երկնքի,
Եվ նորից հեռվում ուրվագծվում են
Բարդիներն առվի խոնավ եզերքին...

Թփակաղնուտով մի շշուկ անցավ,
Անտառն ականջեց, մտերմիկ ժպտաց...
Եվ իմ շուրթերն էլ շրշացին անցավ...
-Ողջո՜ւյն, հայրենի երկրի լուսաբաց:

հուլիս 2010թ.

❒

Հանդեսներում սգո, հոգեհացի ժամին,
Կամ հարսանիք լինի ու սեղանը առատ,-
Մենք հոտնկայս մի պահ խոնարհվում ենք լռին
Զոհվածների հավերժ հիշատակի առաջ...

Օ՜, սրբազան դու պահ՝ մարմնի դող ու սարսուռ,-
Երակներով արյան՝ Հայրենիքն է հոսում...

հուլիս 2010թ.

❒

Լսափողի մեջ ձայնդ դողացող,
Շնչառությունդ՝ ջերմ ու հրատիպ,-
Ես զգում եմ քո հևքը հրացոլք,
Ես խփոցներն եմ լսում քո սրտի...

Դեհ, հանգստացի՛ր, խաղաղվի՛ր, խոսի՛ր,-
Քո հեռուներից՝ անհանգիստ, անվերջ,
Տաք մշուշներ են ներս խուժում դրսից
Եվ... ես հայտնվում եմ անէության մեջ:

ապրիլ 2010թ.

❒

Ինչ էլ լինի, ի՛նչ էլ՝ քեզ չի խլի ինձնից
Ո՛չ ժամանակն անգութ, ո՛չ բուք, ո՛չ հողմ, ո՛չ տապ,
Եվ քունքերիդ վրա ինչ եղյամ էլ իջնի՝
Ես կհալեմ ձյունն այդ շնչառությամբ իմ տաք...

Ոչ մի գաղտնիք չունեմ արևի տակ անմար,
Գիտե ամեն աղբյուր, ամեն բողբոջ բացված,
Ամեն տաճար ու վեմ, ամեն մատուռ, խաչքար
Եվ... Աստված էլ գիտե, որ սիրվա՞ծ ես, սիրվա՞ծ...

ապրիլ 2010թ.

❒

Ես գնամ ինչպե՞ս որոնեմ հիմա
Արահետներին ոտնահետքերդ,-
Մաքրել է նրանց անձրևը հիմար,
Մաքրել են նրանց հողմն ու բքերը...

Երկինքը՝ մռայլ, մութ ու ամպամած,
Եվ... ունքամեջը չի բացում օրը,-
Ինչպե՞ս ե՛տ բերեմ՝ քարեքար ընկած,
Կաքավի նման օրոր-շորորդ...

Ձյունը ծածկել է և՛ հանդ, և՛ արոտ,
Լռել է վաղուց աղբյուրի տաղը,-
Ես գնամ ինչպե՞ս ե՛տ բերեմ կարոտ
Կանչդ՝ զիլ-զնգուն, խնդուն ծիծաղդ...

ապրիլ 2010թ.

❒

Ափսո՛ս, շա՛տ ափսոս՝ ցավի աստիճան,
Ափսո՛ս, շա՛տ ափսոս և առանց լացի,-
Քեզ չհասցրի պատմել ամեն բան,
Այնքա՛ն գաղտնիքներ անհայտ մնացին...
Պաղեցին նրանք սառցի տակ, ձյունի
Կամ ավար դարձան հողմ ու ավազի,
Տարան խրկեցին խորքը անհունի
Եվ ծվեններն իմ անխաբ երազի...

հունիս 2010թ.

❒

Ներիր, շուրթերս փակ են ու համր,
Լեզուս անզոր է քո անունը տալ,-
Ես մոռացել եմ համբյուրիդ համը,
Ես քեզ այլևս չե՞մ կարող ժպտալ...
Եթե երբևէ հանդիպենք իրար,
Իմ ժպիտը, որ բռնկող բո՞ց էր...

Այն, ինչ տարար դու՝ ադամա՞նդ էր, գա՞նձ,
Այն, ինչ թողեցիր՝ չփակվո՞ղ խոց է...

❒

Լեռները հեռվում՝ մի կտավ,
Տունը՝ առանց ջեռուցման,
Եվ չի հաշտվում սիրտը տաք
Դաժանության հետ ձմռան...

Ներսում՝ ոգին նազանիկ,
Տաքուկ անկյուն չգտած,
Բուքը՝ ինչպես գազանիկ,
Կաղկանձում է պատի տակ...

Քամին՝ անկոչ հյուրի պես
Ծեծում է կուրծքը դռան
Եվ շշնջում է կարծես.
-Հեքիաթն անսուտ չէ ձմռան...

❒

Ձմեռ սառցանիստ ու բքի ոռնոց,
Կարծես աշխարհն է քարանում ահից,
Առանց թիկնոցի ու առանց ձեռնոց՝
Չի սարսում թխկին՝ ինչ էլ պատահի...

Սառցալուլաներ՝ սրաշեղբ ու բութ,
Քիվերից առկախ մռայլ ու խոժոռ,
Չյան շեղջեր է անընդհատ խմբում
Չյունամրրիկը շեմից ներս խուժող։

Ճերմակության մեջ սակայն դյութական,
Ասես նախասկիզբ ինչ-որ աղետի,
Թմբկաթաղանթ է խոցում ու ականջ
Քամու սուլոցը՝ անդուր մեղեդի.-

Անիրական են թվում ու անգո
Շենքերը ձյունի վարարումներին,
Ի՞նչ հյուսվածքներ են, ի՞նչ անձեռագործ
Ժանյակներ՝ ծեփված լուսամուտներին։

Մայթերը ձուլել փողոցների հետ,
Օդն է խցանել ձյունի ամեն շեղջ,
Քաղաքն է սկվել անհարմարավետ
Իր ճերմակափառ հանդերձների մեջ։

❒

Ես իզուր այսպես պեղեցի հոգիս,
Եվ գտա հանգած մոխիրների տակ
Այն, ինչ այլևս պետք չէ ոչ ոքի,
Այն, ինչ խեղել է բախտը խեղկատակ...

Եվ, ավա՜ղ, սրտանց ես ափսոսացի
Անհոգեպահուստ ու անապահով
Իմ հոգուն՝ ծովից ափ նետված խեցի
Կամ լքված, վաղուց մարած կրահոր...

❒

Ես կջնջեմ քո հիշողությունից
Այն անունները, որ իմ սրտով չեն,
Նույնիսկ կխլեմ ես քեզ անհունից
Եվ կստիպեմ, որ իմ շնչով շնչես...

Ես կշղթայեմ անգամ ոտ ու ձեռ,
Կողպեք կդնեմ քո դռանն իրավ,
Արգելափակոց՝ այն ճամփի վրա,
Որ չի բերի քեզ երբևէ ինձ մոտ...

Կմակարդեմ իմ արյունն արցունքով
Եվ... մի՞թե պարզ չէ քեզ համար արդեն,
Որ կխցանեմ և ունկերը քո
Ինձ օտար ու խորթ շշուկների դեմ...

❒

Դու իզուր մի սարքիր խաղ ու ծես,
Քեզ անմեղ-մեղավոր չկարծես...

Թող թվա քեզ կյանքդ անձկալի՝
Կբացվի վարագույրն անցյալի...

Ով էլ իր թևերին քեզ առնի՝
Ստվերս քո դիմաց կհառնի...

Ամենուր՝ թե գիշեր ու թե տիվ,
Քեզ համար ես... քայլող նախատի՜նք։

❒

Երբ չի մոռացվում հուշը դառնագին,
Ճեղքվածք է տալիս սիրտը վիրավոր,
Հայցելով արդեն կյանքից փրկագին
Ու երազելով մի ափ հեռավոր...

Հավերժ է սերը ու վերքի պես թարմ,
Ցավ ու կրակի արանքում անվերջ,
Օ՜, սիրտ ու հոգի՝ միշտ անմխիթար,
Ինքնապաքինման խաբկանքների մեջ...

ՃԻՉ

Թոռանս Անիին՝ Արքուրիկի համար

Երազ չէր, ո՞չ, արթմնի
Բացվեց կապույտն անհունի,
Հանկարծ հասավ հմայիչ
Մի նորածին մանկան ճիչ,-
Արդ ո՞ւմ ասեմ՝ երանի՞,
Ով մայրացած իմ Անի...

4 հունիսի 2011թ.

ԱՐՄԻՆԵԻՆ

Իմ աղոթքները՝ հղված Հիսուսին,
Տաք շշուկները սիրո մի անմար,
Ցոլցոլանքները բարեբեր հույսի,-
Իմ Արմինեի սրբության համար...

Օգնիր, Արարիչ, օ՜, Տեր իմ աղվոր,
Տալ շունչս, ոգիս՝ տագնապի մեջ հար,
Եվ իմ թևերը՝ թռիչքի սովոր,-
Իմ Արմինեի սլացքի՞ համար...

նոյեմբեր, 2011թ.

2003-2006

❒

Մարմինս տված արևի հրին,
Բեդվինի նման լուռ իջած ծնկի,
Պարզած մի ձեռք էլ գուրգուրեմ նորից,
Ցաված մի սիրտ էլ ամոքեմ կրկին:

Եվ այնպես լինի, որ չմոռանամ՝
Վերջին պահուստն էլ տամ ու հեռանամ…

❒

Հանելուկ չեմ, Տեր, ոչ էլ՝ առեղծված,
Եվ չեմ տարբերվում քեզնից ոչնչով,-
Շիկահող ու կավ՝ կոփածո շինվածք,
Ես՝կենդանություն առած քո շնչով…
Եվ իմ պահվածքով՝ անշուք ու նվաստ,
Իմ իսկ բնույթով՝ քո նմանակը,
Խավարում անգամ՝ պարզ ու թափանցիկ
Եվ փխրուն՝ ինչպես բյուրեղապակի,
Թե ի սկզբանե, Բանն էր, հիրավի,
Ես՝ մարմին առած խորհուրդը քո խոր,-
Քո հողն եմ, ջուրը, և քո արևի
Մանվածքը՝ որպես ծիլ, ծաղիկ ու խոտ…
Քո մասունքներին ձեռքս չի՞ գնա
(Դողում է ձայնը քո աղամորդու),
Եվ թեպետ հոգիս մեղք չունի բնավ՝
Ապաշխարանքի իմ խորա՞նն ես դու…

❒

Կյանքի օվկիանում՝ ափնակոծ ու խոլ,
Դեռ ձիգ են նավիս կայմ ու առագաստ,-
Փառաբանվես դու՝ մաքառում ու ճիգ,
Նվիրումներս չանես անիմաստ…

Ես՝ հառնած խղճի փլատակներից,
Ճակատագիրս գիտեի անգիր,
Եթե մահն անգամ խլի ինձ կյանքից՝
Կապրեմ բաժանման գծից էլ անդին…

❒

Տարիների բեռը՝ ծանր առած նկուն ուսերիդ
Եվ աչքերիդ մեջ՝ սիրո մառախուղներ միգամած,
Ապրում ես դեռ, սիրելիս, ապավինած հույսերիդ,
Թեպետ ոչ ոք չի բացի, ավա՜ղ, դուռդ մոռացված:

Անողորմի մի վիճակ՝ հեռացողի տրտմությամբ,
Պատրանքների բեկորներ՝ գիշերներում անլուսին,
Մինչ քեզ կառչած ես պահում (իմ հեռավոր գոյությամբ)
Այս կյանքին, որ կարճատև մի երազ է խաբուսիկ…

❒

Ես մինչև գետին պիտի խոնարհվեմ
Եվ իմ աղոթքը՝ հղեմ առ երկինք,-
Այս ինչի՞ց է, որ իմ սիրտը այսօր
Բաց երակի պես զգայուն է խիստ…

Լեռները հեռվում բռնել են շուրջպար,
Ձլում է արևն, ասես «Քոչարի»,
Աշունը՝ քրոջ նման քնքշաբար,
Իր ծիրանին է փռում ուսերիս…

Ինչպե՞ս անմասն մնամ այս ծեսից,
Ձվարթ աշուն է հայրենի հողում
Եվ իրենց Սասնա պարահանդեսին
Ինձ հրավեր են լեռները հղում…

Առեղծվածային երկի՜նք հայրենի,
Հայրենի երկիր, իմ սու՜րբ ջուր ու հող,
Թող հավերժական պարս չհատնի
Քո սեգ լեռների գրկում հավերժող…

❒

Կա գիշերային սառնության մի պահ,
Որ նախորդում է արևածագին,
Մութը խտանում՝ անստվեր ու պաղ,
Աննկատելի ու գաղտագողի…

Եվ գիշերվա մեջ այդ ականակիր
Ծանր են շնչում ձեղուն ու տանիք,-
Տարածության մեջ ու ժամանակի,
Կարծես անգո են տուն ու ընտանիք…

Սակայն ինչքան էլ մութը՝ աներես,
Մեկ է՝ կլքի գիշերն անողոք,
Եվ կժպտա փակ լուսամուտից ներս
Ցայգալույսը ջինջ՝ ոտքերը շաղոտ:

❒

Երևի շատ բան ես չեմ ընկալում,
Գուցե տարիքն է զգացնել տալիս,-
Ներկայից ոչինչ չեմ ակնկալում,
Բայց և… խոցում է հուշը անցյալի:

Հայտնվել եմ այստեղ ոչ թե կուրորեն,
Կամ՝ իբրև մի այլմոլորակային,-
Ես ինչպե՞ս եզրերն իրարու բերեմ
Անցյալի միջև ու այս ներկայի…

Ով ինձ հետ իրեն ինչպես կպահի,
Ով է բարեկամ կամ ով՝ թշնամի,-
Թող ժամանակի այս թոհուբոհին
Դուրս չհալածի միջանցիկ քամին…

Եվ Աստված չանի, որ իմ դեգերող
Մտքին անողորմ, հոգուն անձկալի,
Տարված անմարմին իմ վերհուշերով՝
Խենթ կարոտախտը այրի անցյալի…

Կամ քառսի մեջ այս հրահրուն,
Ուր արժեզրկվում գինը երեկվա,
Չկործանվի իմ նավակը փխրուն՝
Իններորդ հախուռն ալիքի վրա:

Գալով դարերից, չելած իր հունից,
Փորձություններից անցած անվեհեր,
Բյուր սպիներիս վստահ անունից՝
Ողջո՞ւյն, գալիքի մարտահրավեր…

❒

Երբ հեռաստանը պարզի Անհունը
Եվ միտքս նրա խորքը թափանցի,-
Անվերծանելի այդ լռությունից
Հոգիս առաջին ծիրը կբացի…

Եվ այնուհետև թռի՜չք ու հրճվանք,
Բերկրանք սլացքի ու սավառնումի,
Եվ իմ խոյանքի պահին անվարան
Ինձ վա՜յր չի բերի սարսուռն անկումի…

❒

Մի ուրվապատկեր աշնան մշուշում,
Քեզ հիշեցնող տեսիլ մի աղոտ,
Որ բոլորովին ոչինչ չեն հուշում,-
Դու ե՜րբ ես եղել այդքան անողոք…

Ցավի կսկիծ է ու կարոտախտի,-
Չկանխատեսված ինչպիսի՜խզում,
Դու այս ի՜նչ քար ես նետել իմ բախտին,
Որ չես հայտնվում նույնի՜սկ երազում:

❒

Օրը երկարեց, ամպերը բոսոր
Երկնքի դեմքն են շղարշում արդեն,-
Ի՞նչ եղանակ է խոստանում այսօր
Ոգին՝ պատուհաս ընկած դես ու դեն:

Միգոտ հեռաստան, հորիզոն աղոտ,
Լեռները հեռվում դիմհար ու խոժոռ,
Խեղկատակ քամին իր անմիտ խաղով
Թռցնում է ընկնող տերևները չոր:

Աղոտանում է օրն՝ ինչպես երազ,
Չես փրկի բնավ, ուժդ չի պատի,-
Եվ նոյեմբերյան արևն հազիվհազ
Իր սառն համբյուրն է ծեփում տան պատին:

Իջնում է սրտիդ թախիծն անամոք,
Գերեվարում են ստվերներն ի դեպ,-
Ի՞նչ եղանակ է կռահում, արդյոք,
Ոգին՝ պատուհաս՝ ընկած դես ու դեն…

ՊԱՏՐԱՆՔ

Տան ներսում՝ անդորր, լռություն համակ,
Իրերի տեսքը՝ խիստ հանդիսավոր,-
Այստեղ ապրել են ինչ-որ ժամանակ,
Երգել են, հրճվել ու թախծել նաև:

Տան տանիքից վեր՝ երկինքը աստղոտ,
Լիալուսինն է այնտեղ տիրակալ,
Բակում՝ ծառերի ստվերներ աղոտ,
Եվ բվի կռինչ ձորում մոտակա:

Գոմի գոց դռան շունն էր շիկամորթ,
Կիսաքուն, դունչը՝ թաթերին իր զույգ,
Ականջը, սակայն, ձայներին հաղորդ
Եվ քնած էր նա ձևանում իզուր:

Հսկում էր՝ իր տակն առած մի խսիր,
Որ գիշերն անցնի առանց վթարի,-
Բուրում էր գոմը ներսից ու դրսից
Խոտի բուրմունքով, հարդ ու աթարի…

Տան ներսում հիմա անդորր է համակ,
Իրերի տեսքը խիստ զգուշավոր…
Եվ մի սարսուռ է պատում ահավոր…
Արթնացնելով հուշեր անհամար…

Քունքերն են խփում՝ սակավ արյան եռք,
Պատրանքների մեջ, թե կամքով վերին,
Քո իսկ թիկունքից դողդոջ երկու ձեռք
Կարծես իջնում են հոգնած ուսերիդ:

Ծոծրակիդ՝տաք շունչ, նաև փշաքաղ,
Այնքա՜ն իրական, այնպե՜ս հավաստի,
Որ թվում է, թե, ահա, անհապաղ
Կյանքով կլցվի տունը վերստին:

ՇԱՄԻՐԱՄԻ ՊԵՍ ԱՅՆ

Այդպես նայում ես ինձ Շամիրամի պես այն,
Նվաճելու համար Արա մի Գեղեցիկ,
Մինչ յոթ նվարդներ են քո դեմ հառնում միայն,
Եվ յոթ նահանգների որդիք արքայացի…

Այդպես նայում ես դու՝ ինչպես մի Շամիրամ՝
Արա մի Գեղեցկի, որ մահվան ես մատնել,-
Ոչ յոթ Բաբելոններ ետ կբերեն նրան,
Ոչ էլ…յոթանասուն հազար արալեզներ…

❒

Ոչինչ չասվեց, ոչինչ՝ հեռանալիս,-
Լացակումած շուրթեր, ցավի կսկիծ,
Աշնան օր էր տրտում, թոն էր լալիս,
Սիրո մառախուղ էր, ցո՞ղ էր հակինթ,
Թե՞ արցունքներ էին դառնաթախիծ…
Ոչինչ չասվեց, ոչինչ՝ հեռանալիս
Եվ… աշխարհը, կարծես, շուռ էր գալիս:

❒

Ինձ հանգիստ չեն տալիս շուրթերդ համրացած,
Աչքերդ թախծամշուշ, տառապանքից խոնավ,
Եվ քո տեսքը՝ սիրո մառախուղում կորած,
Ա՜խ, դու բախտից խոցված ու քո խաչին խոնարհ…

Ես քեզ ինչպե՞ս խլեմ քամիներից խելառ,
Անլուր մորմոքներից գիշերների սև-սաթ,
Որպես մխիթարանք, օ՜, տարաբախտ իմ լավ,
Ուշքդ պահիր վրաս և իմ կանչին անսա…

❒

Անհնարին է, որ ես կուրանամ
Արևի շողից ու շեղբից շանթի,
Երկինք, դեռ գործիր հրաշքներ անթիվ,
Անհնարին է, որ քեզ ուրանամ…

Անհնարին է, որ ես խլանամ
Տիեզերական քո զիլ զանգերից,
Անհունից խուժող ահազանգերից
Անհնարին է, որ ես համրանամ…

Անհնարին է, որ չխորանամ
Անդունդներիդ մեջ՝ ոնց իմաստուն բուն,
Անկասելի է հողմակոծ իմ չուն,-
Անհնարին է, որ ես մոխրանամ…

❒

Առ ուսերին քո ծիրանագույնը իրիկնամուտի
Եվ ափերիս մեջ ծվարիր՝ ինչպես միրհավ վախվորած,
Թող լինի այնպես, որ հոգիներս չմատնենք մութին,
Տես՝ ի՜նչ բոսոր են ամպերը ամեն ձև ու կերպ առած:

Աղոտանում են լեռները հեռու մթնշաղում պերճ,
Ստվերներ ձգում խոնավ կիրճերի խորշերն ապահով,
Ի՜նչ փույթ, սիրելիս, կսպառվի օրն էլ հոգեվարքի մեջ,
Ես կփարատեմ կասկածները քո… դու մնա անհոգ:

❒

Չասված խոսքերի սառույցների տակ,
Անթեղների մեջ ասված խոսքերի՝
Չիրականացված երազների տապ,
Ճրագների պեծ խամրող հույսերի…

Հոգին մի թռչնակ, որ չի ծվարում,
Կորցրած իր բույնը թևում է անվերջ
Չասված խոսքերի եղեգնուտներում,
Ասված խոսքերի անհուսության մեջ…

❒

Դու հեռու մի վայր ընտրիր ինձ համար,
Ուր քամու շշուկ չհասնի անգամ,
Ուր անքննելին քննելու համար
Ես Տեսանողի հայացք ունենամ…

Այս կյանքից ոչինչ չեմ տանի ինձ հետ,
Եվ կհեռանամ հանգիստ, խաղաղված,-
Ինչ էր անցյալն իմ՝ մի ասուպ անհետք,
Ողջը մի բարակ թել էր ու մանվածք…

Սիրել եմ, սակայն, երկիրն այս թովիչ,
Ճակատագրով հանդերձ իր ծանր,
Ու չհասկացա ես բոլորովին
Եվ ո՞վ կարող է, արդյոք, վերծանել…

Դու հեռու մի վայր ընտրիր ինձ համար,
Ուր քամու շշուկ չհասնի անգամ,
Ուր անքննելին քննելու համար
Ես տեսանողի հայացք ունենամ:

❒

Դրսում մարմրող կրակն է մխում
Խոնավության մեջ և նոյեմբերյան
Կեսգիշերվա նինջ, անհանգիստ ու խուլ
Նվոցներ հոգու և պիրկ ջղերի…

Աղոտ մի լույս է քո տանն հեռավոր,
Տեսնես՝ ինչ ցավ է քեզ զրկել քնից…
Ո՞ր իմաստունն է նկատել մի օր,
Թե… խաչված ենք մենք խղճի նույն սյունին:

ԱՊԱՇԽԱՐԱՆՔ

Ոչ ոք այս կյանքում ձերբազատված չէ իր արատներից,
Առավել ևս՝ երաշխավորված մեղքից ակամա,
Ինչքան էլ Տերը իր մատը թափ տա ու մեզ չների,
Հազիվ թե մեկը մեղք չանի հոգուն ու չերկնչի…
Ո՞վ է մեղավոր, երբ կյանքն այնքան է դարձել ախտակիր,
Մաքրության կածանն անհետացել է մացառուտներում…

Օ՜, պետք չէ մահից հետո վիճակն այն՝ հառնել հարությամբ,-
Մի հնար լիներ, որ հարկ չունենաս մեղսաքավության…

Մարդկային վշտի ու հոգսի քաոս այս խառնարանում,
Ամենաթողի ձեռքերն անկաշկանդ, կապանքներից զուրկ,
Հանուն զրկվածքի, նաև զարկվածի՝ սիրտ է քարանում
Եվ կարեկցանքի բոլոր ճիգերը անցնում են իզուր…
Դատ ու դատաստան չկա երբեք այս երկրում մեղսական,
Լպիրշի դեմքին թքիր, ասում է՝ անձրև է գալիս…
Ինչպե՞ս կարող է գործել անխափան օրենքն հորինած,
Անօրենների խաժամուժի մեջ…
Օ՜, պետք չէ մահից հետո վիճակն այն՝ հառնել հարությամբ,-
Մի հնար լիներ, որ հարկ չունենաս մեղսաքավության…

Հուշարձանների, մահարձանների սնարներից վեր
Ճախրում է ոգին, թփրտում անվերջ լոկ մի տենչանքով՝
Փրկելու գինն ու պատիվը արյան քաջ ու անվեհեր
Նվիրյալների, որ ընկան հանուն փրկությանը քո,
Երկիր հնամյա, երկիր օրորան դժվար մանկության,
Պատանեկության երազ ու տենչանք, հպարտ, աննվաստ,-
Ճեղքիր քարացած, մեղքից կարծրացած խիղճը մարդկության,
Սրբություն սրբոց, մաքրության հողմով լեցուն առագաստ…
Օ՜, պետք չէ մահից հետո վիճակն այն՝ հառնել հարությամբ,-
Մի հնար լիներ, որ հարկ չունենաս մեղսաքավության…

ՔԱՎՈՒԹՅԱՆ ԱՂԵՐՍԱՆՔ

ԱՆԻԻՆ

Ինչպե՞ս խուսափես շինծու բառերից,
Շինծու խոսքերի թափոնից նեխոտ,
Դատարկահնչուն, փքուն ճառերից,
Հակումից՝ շինծու բառերից բխող,
Եվ խոնարհումից՝ այնպես աննպաստ,
Ժպիտից՝ ասես լվացքի լեղակ,
Որի առջև քեզ զգում ես նվաստ՝
Անապաշխարանք, մեղքերից անքավ՝
Արժանապատիվ մնալու տեղակ…
Ինչպե՞ս խուսափես այն շավղից անճար
Կամ արահետից՝ ոտնակոխ այնքան,
Որ չի տանելու քեզ դեպի տաճար…
Գնա՜ս-հեռանաս ու ցողվես, իրավ,
Արշալույսների ցոլքերի մեջ ջինջ,
Ցայգալույսների շաղերի մեջ սառ,
Եվ, սթափվելով հովի տաք շնչից,
Արտույտի կանչը ոգեղեն անսաս,
Մի բուռ ափիդ մեջ,
Որպես քավության աղերսանք հոգու,-
Պարզես արևին
Քո տվայտանքի արցունքը մաքուր…

❒

Բացված էր երակն ու ցավն՝ իսկություն,
Եվ նվվում էր խուլ, առանց թրջոցի,-
Տառապանքի հետ Աստված խառնեց թույն,
Որ իմ հավատը ու կամքը փորձի…

Եվ ես ըմպեցի բաժակն ի մրուր,
Վիճակ էր նետված անելանելի,-
Ջորդանո Բրունո, դե, ինձ ձեռքդ տուր,
Նախանձիր և դու՝ Հոբ երանելի…

Հանուն հավատի ու դավանանքի՝
Տեղի չտվեց կամքս՝ ինչպես լեռ,-
Քո հարյուր տարվա հեռվից առաքիր՝
Ո՞վ էր մեզանից ճիշտը, Գալիլեյ…

❒

Հավքերի լեզուն գիտեմ ես անգիր,
Գիտեմ լորերի բները ողորկ,-
Հարցրու միրհավից, թե ինչու հանգիստ
Իմ ափերի մեջ ծվարել է լուռ…

Բախտիս մասին չէ հոգիս մտահոգ,
Հետապնդում է ինձ այն միտքն անվերջ,
Որ մնանք անբիծ, մնանք ինչպես հող,
Նույնիսկ արևի մոխիրների մեջ…

❒

Այդպես ցավագին մի նայիր դու ինձ,
Մեր ծերանալը՝ անխուսափելի,
Ընդունիր հանգիստ ու առանց թախիծ,
Եվ տագնապներդ վանիր, սիրելիս:

Տարիքն իր գործը կանի, անկասկած,
Բայց ո՞վ է տրվում դրանց խենթ վազքին,-
Ոչ ընկճվիր դու փաստից իրական,
Եվ ոչ էլ տրվիր դու սին պատրանքին…

Եվ փոխարենը հիշիր մեր անցած
Կյանքը՝ բուռն ու խենթ, սիրով առլեցուն,
Մենք տարանք այնքան խնդություն ու ցավ,
Որ կհերիքի… և ամենեցուն:

❒

Մանկության հրաշք-հեքիաթներ չեղան,
Ոչ էլ մանկության անուշ, խաղաղ քուն,-
Մայրդ միշտ չիր ու չամիչի տեղակ,
Մկրատ էր դնում բարձիդ տակ թաքուն…

Ի՜նչ երազ պիտի քո մեջ արթնանար,
Երբ քաղցած էիր մտնում անկողին,
Սիրտդ ծակոցներ պիտի ունենար,
Ցավի նվոցներ, ջղերի լարում…

ՀՈՒՇ

Ես ի՞նչ եմ անում այստեղ, ասա՝ ի՜նչ,
Այս քաղաքային աղմուկ-ժխորում,
Ամայության մեջ այս խլացուցիչ,
Որ ինձ երբևէ ոչինչ չեն հուշում…
Օ՜, փառաբանվես դու միահեծան
Հայրենի իմ տուն, իմ հանդ ու արոտ,
Անկոխ արահետ ու կորած կածան,
Իմ անծիր, անծայր, թախծագին կարոտ:
Լեռ իմ՝ կարոտի գործող հրաբուխ,
Արտ իմ, երազի ալեբախությամբ,
Քարափ իմ՝ ուրցի բույրով լիաբուռ,
Անտառ ու բացատ՝ քնած քնքշությամբ:
Աղբյուր ու առու, լորիկ ու կաքավ,
Միրհավ իմ՝ թխլիկ ու մորմոք անվերջ,-
Ա՜խ, ձեր կանչերը մեղքի պես անքավ,
Միախառնվել են իմ ունկերի մեջ…
Ես ի՞նչ եմ անում, իրավ, այստեղ՝ ի՜նչ,
Այս քաղաքային աղմուկ-ժխորում,
Ամայության մեջ այս խլացուցիչ,
Որ իմ հեգ հոգուն ոչինչ չեն հուշում:

❒

Իբրև դաշտ ու հող, իբրև արահետ,
Ես ընկած եմ քո ոտքերի տակ հար,
Որ ուր էլ գնաս հանդիպես ինձ հետ,
Իբրև մեղք անքավ, իբրև պատահար:

Գնա միրհավի կանչի վրա սուր,
Տես որտեղ է նա ծվարել անքուն,
Թե ցողը թրջի ոտքերը քո նուրբ,
Իմացիր, որ իմ արցունքն է մաքուր…

Թե ուրցի բույրով արբես լիաթոք
Եվ հրավառվեն աչքերը քո բորբ,
Եվ զեփյուռը քեզ փարվի քնքշանքով՝
Իմացիր, որ այն իմ հոգին է որբ…

Կծփան քո դեմ արտերը հրատ,
Գնա ու քաղիր ցավի ավելուկ,
Երբ գաս ու թեքվես աղբյուրի վրա,
Ես քեզ կժպտամ ջրի հայելուց…

Իբրև դաշտ ու հող, իբրև արահետ,
Ես ընկած եմ քո ոտքերի տակ հար,
Որ ուր էլ գնաս՝ հանդիպես ինձ հետ,
Իբրև մեղք անքավ, իբրև պատահար…

❒

Մաքրության կածաններ, մաքրության,
Պատել են ձեզ փուշ ու մացառուտ,
Այլևս ձեզ չեն կոչի հարության
Ո՛չ աղբյուր, ո՛չ գետակ, ո՛չ առու…

Փաթաթել անթափանց շղարշով,
Ծածկել են ձեզ մեգ ու մառախուղ,
Թավուտում՝ մգլահոտ ու անշող,
Թփերում՝ մամռապատ, պաղ ու խուլ…

Մաքրության կածաններ, մաքրության,
Երբեմնի ուրցաբույր ու շողոտ,
Մատնել է ձեզ ընդմիշտ լռության
Ժամանակն ավերիչ, անողոք…

Մաքրության ոտնակոխ կածաններ,
Կորսված հավիտյան ու անդարձ,
Եվ անբիծ, մայրանուշ գիրկը ձեր
Այլևս ես չունեմ վերադարձ…

❒

Ես ումո՞վ ստուգեմ ինքս ինձ,
Այս խղճուկ, հոգեզուրկ աշխարհում,
Մտագար, ստահակ, զուրկ մտքից,
Սնամեջ սին տարածք մի անհուն…

Լացը՝ խինդ անիմաստ, խինդը՝ լաց,
Ծիծաղը կեղծիք է ու տաղտուկ,
Ժպիտը լպրծուն է ու թաց,
Եվ խոսքը սահմաններ չի զատում…

Խլականջ, խուլ-համր ժամանակ,
Հիվանդոտ, հոգեվարք հևքի մեջ,
Կորչում են դիմագիծ ու դիմակ
Այս մրսած օրերի մեգի մեջ…

Անորոշ փակուղի ու միշտ շեղ,
Շուրջբոլոր հոգիներ ջղային,-
Ես ումո՞վ իմ կերպը որոշեմ,
Եվ պարզեմ տեսակս մարդկային…

ԵՎ ԾԱՌՍ Է ԼԻՆՈՒՄ ՓԽՐՈՒՆ ՍԻՐՏԸ ՀԱՆԿԱՐԾ

Այս բիրտ աշխարհից գլուխ չհանած՝
Կփակես դու քո հաշիվները մեծ,-
Ցիգ տարիներով հերկդ սերմանած
Ոչ մի ժամանակ չթփակալեց…

Քմահաճո՜ւյք էր ճակատագրի,
Թե՞ վերուստ տրված բախտի չար կատակ,-
Ուղեկից չէիր բախտավորների,
Քեզ ձախորդների մեջ էլ չգտար…

Ի՞նչ է ցանկանում բախտը հեղհեղուկ,
Ճակատագիրն անորոշ, այն ինչ
Օրերն անցնում են՝ տրտմաշուք ու գորշ,
Եվ չես սպասում գալիքից ոչինչ…

Ո՛չ սրտի մորմոք, ո՛չ արցունք սուտակ,-
Հանգած խարույկիդ՝ մոխրի մեջ խարկված,
Գիտես, որ ոչ ոք չի արծարծելու՝
Ո՛չ մարդը մեղսոտ և ո՛չ էլ… Աստված…

❒

Հոգնած, նկուն ճամփորդ,
Ճամփադ միշտ վար գնաց,
Հուզումներով քո հորդ,
Խզումներով անլաց…

Ճամփադ ոլոր-մոլոր,
Անհուսալի երկար,
Ընկած տեղդ մի օր
Ձեռքդ բռնող չկար…

Ում ինչ հոգն էր, ասա,
Թե ոնց տարա ես, ա՜խ,
Ճակատագիր մի սառ,
Անքննելի մի բախտ…

❒

Նախազգացում որպես ու կանխատես երազ,
Դու արթնացար իմ մեջ (ճակատագրի ի՜նչ խաղ),
Եվ սարսռաց հոգիս՝ ինչպես բացված երակ,
Երբ ափիս մեջ ընկավ արտասուքը քո պաղ…
Ես քո առջև հանկարծ խոնարհումի եկա
Ու ծնկեցի՝ ինչպես սուրբ Տիրամոր առաջ,
Իմ ափերում՝ մաշված տառապանքից երկար,
Անհուսալի դարձիդ հույսի մոմեր վառած…

ԶԳԱՅՈՒՄ

Կեսգիշերային անդորր թվացյալ՝
Հեգ հոգիներին անհասանելի,-
Ի՞նչ գաղտնիքներ ես պահում ծպտյալ
Եվ ի՞նչ տագնապներ անվերծանելի…

Մութի բիբերում՝ անաստղ, անկայծ,
Տիրակալում է ահը անմարմին,
Եվ ծառս է լինում փխրուն սիրտն հանկարծ,
Երբ դուռն է բախում թափառիկ քամին…

Երկինք սևակնած, խավար անկայուն,
Կորցրել է քունը ոգին անընտել,
Պատուհանի տակ՝ շշուկ ու շրշյուն,
Թվում է՝ պահ է մտել մեկն այնտեղ…

❒

Ո՞վ ես դու՝ անպատրանք, անցնորք, աներազ,
Ո՞վ եմ ես՝ մարգարիտ ցոլացող պատրանքի,
Ո՞վ եմ ես՝ զգայուն, թրթռուն զարկերակ,
Ո՞վ ես դու՝ անմարմին, անարյուն, անհոգի,
Ո՞վ եմ ես՝ բոցի ու կրակի հանդիման,
Ո՞վ ես դու՝ հերվա ձյուն, անթափանց ապակի…

❒

Ոչինչ չփոխվեց քո աշխարհի գալով,
Չհիշատակվեց, բնավ, ոչնչով,
Եվ ուսիդ վրա աջն իր դնելով՝
Չներշնչեց քեզ Աստված իր շնչով…

Մահկանացուի մուտք էր, հիրավի,
Սովորական ճիչ ու անմեկնելի,
Բայց աշխարհի գալուդ պահին երևի
Հայացքդ մանկան զարմանքով էր լի…

Որ մտապահեց բարուր մի անշուք
Եվ ցածրիկ մի տան տանիք ու ձեղուն,
Տանջահար մի մոր ժպիտ տրտմաշուք,
Որ նրա ամբողջ դեմքն էր ողողում…

Իսկ հետո՝ որբի մանկություն, ապա՝
Դժվար օրերի շղթա ընդերկար,
Կարեկցում էր քեզ սիրով անապակ
Տան պատից կախված մի դիմանկար…

Քո աշխարհի գալով ոչինչ չփոխվեց այս հին աշխարհում,
Ցնորք էր, պատրանք ու երազ անհաս,-
Հիրավի, ոչինչ չի էլ փոխվելու,
Երբ մի օր էլ այն լքես-հեռանա՞ս…

❒

Նույն տունը, բակը, նույն այգին թափուր,
Նոյեմբերյան ցուրտ մշուշների մեջ,
Մի քար լռություն՝ դեմի քարափում,
Ուր որ հավքերի երգը չուներ վերջ…

Նստել ու տան մեջ խորհել անշշուկ,
Անցյալի մասին անդարձ ու տխուր,
Երբ դեռ տակավին տանը և քո շուրջ
Հարազատներիդ բույրերն են մխում…

Անձկություն, տագնապ, թախիծ հոգեմաշ,
Մտերիմների կորուստ ոգեղեն,-
Խելացնոր է աշխարհն ու անհաշտ,
Եվ հեղհեղուկ է բախտը միշտ եղել…

Անմխիթար է այս վիճակն անել,-
Ա՜խ, նրանց առջև, որ անիմաստ է,
Դուռը կրնկի վրա բա՞ց անել,
Ովքեր այլևս մուտք չունեն այստեղ…

❒

Տաս, քսան, հիսուն կամ հարյուր տարի,
Մի քիչ էլ դենը ապրեմ, ինչ կա որ,
Մեկ է, իմ կյանքի հուրը կմարի
Եվ հուշ կդառնամ հեռո՜ւ-հեռավոր:

Կինձի անգութ մահվան գերանդին,
Ինչպես ես էի հնձում խոտն հասուն,
Տեղահան արած լորերին հանդի,
Երբ զրնգում էր գերանդին իմ սուր…

Ուրեմն, մարդիկ, սիրեցե՜ք իրար,
Ձեր մեղքերը բյուր՝ եղած ու չեղած,
Տառապանք ու ցավ փոխանցեք իրար,
Ես կապաշխարեմ նաև ձեր տեղակ…

Ո՞ւմ տառապանքը չեմ ըմպի կում-կում,
Ո՞ւմ վշտի պահին չեմ լինի նեցուկ,
Եվ ձեր ամեն մի վերելք ու անկում
Չի՞ խլի ինձնից օրհնանք ու արցունք…

Բոլոր մատուռներն իմ հետքերն ունեն,
Բոլոր աղոթքներն իմ ձեռքերն ունեն՝
Առաքած երկինք-երկնային տիրոջ,
Երբ սիրտս է վառվում ձեր ցավ ու սիրով…

❒

Քամու սուլոցը ոռնոց է մի շան,
Որ գուշակում է իր վերջն ինչ-որ տեղ,
Որպես կործանման մի նախանշան՝
Խամրեց երկնքում մի աստղ-ստեղ…

Փողոցում թափվող տերևներ դեղին,
Գունաթափ, ինչպես հանգուցյալի դեմք,
Իսկ ես փռում եմ ճիշտ ու ճիշտ տեղին,
Ծաղկունքի դիմաց՝ քնքշանքս քո դեմ…

Հողմի գալարքը հոգեվարք է, տե՛ս,
Իր շունչն է փչում և օրը, իմ քույր,
Երկնքից աղոտ երեկոն անտես
Իջեցնում է մի սև վարագույր…

❒

Մորմոքված սերե՞ր…կարոտնե՞ր անտակ,
Անթեղված կրքեր, արցունքներ որբի,-
Ձեր տառապանքի ծվեները տաք
Մշուշների պես մնացին ճամփին…

Անամոք սերե՞ր…անհուսության մեջ,
Դուք լացակումած ու պաղատագին,-
Ձեզ՝ արտասուքս մխիթարության,
Ձեզ՝ իմ մեղսական սիրտը և հոգին…

❒

Ի՜նչ զարմանալի ճակատագիր՝
Ուրիշի ներփակ տրտունջն եմ ես,
Ուրիշի դատի վկայագիր,
Չփակված վերքի մրմունջն եմ ես…

Եվ մի համարեք շեղված մի բախտ,
Թե ընդվզում եմ ընդդեմ ստին,-
Բռունցքի հետք կա իմ ճակատին,
Եվ մեջքիս վրա իջնում է լախտ…

❒

Ո՞վ գիտե՝ սերը երբ կծագի,
Եվ որ տարիքում կբռնկի ձեզ,
Հրդեհի նման հանկարծակի,
Կամ՝ անակնկալ անձրևի պես…

Կարապի ե՜րգ չէ, մի զարմանա,
Այս կնոջ սերը աստղալույս,-
Ի՜նչ փույթ, թե արդեն քայլում է նա
Աշնանավերջի իր շավիղից դուրս…

❒

Կրքերիս մոխրից մի բուռ առնեի,
Աշնան մեգի մեջ, տրտմությամբ նրա,
Կորած կածանի եզրին նստեի
Ու մորմոքեի սերերիս վրա…

Իմ մորմոքները՝ ափսոսանք ու ցավ,
Մառախուղ՝ իջնող կածանի վրա,-
Ա՜խ, իմ սերերը՝ անդարձ հեռացած,
Ե՜տ դառնային ու սգային վրաս…

❒

Ոչինչ չմնաց, ոչինչ առավել,
Մի բուռ մոխիր է ափիս մեջ հիմա,-
Հույզեր ու տենչեր, թռիչք ու թևեր՝
Ողջը պատրանք ու ցնորք է հիմար…

Դու էլ չես քայլում իմ հովիտներով
Հանդերձների մեջ քո ծիրանավառ,
Դու էլ չես փայլում շաղոտ ոտքերով
Արշալույսների ցոլքերի մեջ վառ…

Թավ անտառներից, լեռների մովից
Հովն էլ չի բերում քո կանչն անքուն,
Էլ քո ծիծաղի ողողանջին թովիչ
Հեռաստանները չեն արձագանքում…

❒

Տարիքի ծանր բեռ է ուսերիդ,
Վաղը, ապագան անհավանական,
Մխանք ու ծուխ է խամրող հույսերի,
Փլված է տաճարը հոգու դյուքական…

Մոտ է ձմեռը՝ ահասաստ ու ցուրտ,
Էլ ոչ մի տեսիլք քո դեմ չի հառնում,
Ո՞վ է լինելու քո սրտին նեցուկ,
Երբ հեռուները աղոտ են դառնում…

Էլ ի՞նչ ճիգ ու ջանք, կամ ի՞նչ մտահոգս,
Կյանքի կծիկն ում ետ է հյուսել,-
Անհոգեպահուստ և անապահով,
Անմխիթարին՝ կարեկցա՞նք ու սե՞ր…

❒

Հանդիսավոր՝ ինչպես սգո թափոր,
Դու ելնում ես ահա իմ եզերքից,
Հեռանում ես ընդմիշտ եկած ճամփով,
Անգետ՝ տառապանքի իմ արցունքին…

Դու բքաշունչ եղար ու խիստ ձմեռ,
Քիչ էր մնում սիրտս սառույց կապեր,-
Ձյունի մի շեղջ թողիր քունքերիս մեջ,
Որ չի՞ հալչի նույնիսկ ամռան տապից…

❒

Քո աչքերը՝ երկինք առավոտող,
Որ հառված են վրաս մեղմիվ ու սուրբ,
Եվ շուրթերդ՝ մեղրի համ ու հոտով,
Ծշնջում են սիրո խոսքեր անսուտ…

Եվ հայացքդ՝ պարզ հրավեր անբառ,
Այնպես խոստումնալից, անկիրք, անձիրք,-
Գիտեմ՝ կգրավեմ քո բերդն անառ,
Էլ ինչիս է պետք տրոյական քո ձին…

❒

Սիրո մշուշներ էին ու տառապանք,
Անարձագանք կանչ, որ տեղ չէր հասնում,-
Յոթանասուն տարվա իմ տենչանքը
Չծվարեց, ավա՜ղ, ոչ մի բնում…

Պատրանքներիս ձիերն իրենց վարգում՝
Ավազներում կորան անշնչացած,-
Անդարձ կորուստներիս սարկոֆագում՝
Մի-մի փարավոններ մումիացած…

❒

Օ՜, գյուղական իմ տուն՝ հեռու դղյակներից,
Անշուք, սովորական, ոչինչ առանձնակի,-
Ես եկել եմ ահա այցելության նորից,
Դեկտեմբերյան ցրտաշունչ այս եղանակին:

Տանիքիդ՝ ձյուն ճերմակ՝ անասելի մաքուր,
Պատերդ՝ սառն ու մունջ, բայց իմ ձեռքն են այրում,-
Ես ձյան նման եմ հալվում քո հայացքում,
Ու երբ քո մեջ չկամ՝ դու նմա՜ն ես այրու…

❒

Իմ ժամանակը հատնում է արդեն, երևի վերուստ
Ապրելու համար կտրվի ևս մի կարճ կյանք վիատ,-
Տվել եմ մարդկանց այն, ինչ ունեի անհոգեպահուստ,
Գնում եմ այնտեղ, ուր ճակատագիրն ու բախտն են անհայտ…

Իմ կոպերի տակ ու իմ աչքերում մեգ է ու մշուշ,
Եվ ունկերիս մեջ բոլոր կանչերը լռել են անհետ,-
Մի ամբողջ կյանք էր, մի կյանք, որ արդեն անցյալ է ու հուշ,-
Եվ այն աղջիկը, որ պահմտոցի չէր խաղում ինձ հետ:

❒

Մի քիչ քնքշանք՝ կարեկցանքի հետ խառն,
Թող թևերդ իջնեն իմ ուսերին,-
Ինձ խոցել է ժամանակն այս դառն,
Եվ պահում է դեռ երկսայր իր սուսերին:

Հեղձուկ օդ է, հոգեվարք է սրտի,
Համաճարակ հոգու, խորշակ ու սով,-
Դու ինձ նեցուկ եղիր օրերում այս պատիր,
Մինչև որ բացվի առավոտը լուսո…

❒

Փեղկերի նման բաց լուսամուտի,
Մեր հոգիների փեղկերն էլ են բաց,
Անձրևի, ձյան, մառախլապատի,
Ձանձրույթի կաթոց թոն օրվա դիմաց:

Եվ ներխուժում են մշուշներ ու մեգ
Մեր հոգիների երկիր ու երկինք,
Մինչև որ բացի օրը ունքամեջ,
Եվ փայլատակի արևը կրկին:

Եվ ինչպես սենյակ պայծառակերպվող,
Ուր թափանցել է շողն արեգակի,-
Կճառագայթվեն մեր համակերպվող
Հոգիներն ինչպես բյուրեղապակի…

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻՆ

Մի աղերսական հայացք՝ ինձ հառված,
Մի անմեղ զոհի նայվածք դառնաղի,
Իմ հոգու մեջ սուր շեղբի պես խրված,
Որ սիրտս է լցնում արցունքով աղի:

Ինչպես հայացքը խոնարհ աղջկա,
Հառել է վրաս հեռու անհունից,
Ուրկից այլևս վերադարձ չկա,-
Կարծես ասում է, «Հոգի՜ս մեղք չունի,

Չեմ էլ հղվում ձեզ որպես նախատինք,
Հառնելու համար սերունդների մեջ,
Որպես գալիքի լիության հատիկ,-
Պիտի մեռնեի Սև ցելերի մեջ…»

Ով դու հեռավոր, քաղցրահունչ անուն,
Եվ Այու սարի հովի զով համբույր,
Որ գալիս հեռվից ու մեզ ես հասնում,
Ոնց Ալպիական մանուշակի բույր…

Է՛լ մի նայիր մեզ այդպես տրտմագին,
Թող հրապուրի հայացքդ լազուր,
Ինչպես Սինայի հյուսած գորգը հին,
Ինչպես Կյորեսի քաղցրաբա՜ռ լեզուն…

Ա՜խ, դու Միրհավի կանչ հոգեպարար,
Ա՜խ, դու Մթնաձոր տանող արահետ,
Աշխարհին կապող միա՜կ ճանապարհ,
Որ չի՜ փակվելու ոչ մի ձյան հետ…

❒

Երգը մեր ոգու խոյանքն է իրավ՝
Բիլ ոլորտներում տիեզերական…
Երգը՝ կեղծիքի հանդեպ ոխակալ,
Երգը՝հեռավոր և, ճիչ է, և, կանչ,
Կարոտի կսկիծ, սուգ է ու կական:
Երգը՝ մերժվածի տրտունջ ու բողոք,
Թև ու թռիչք է սիրո կուսական,
Եվ…սպանի՜չ է երգը անողոք:
Մեր հոգու, սրտի տագնապն ու հևքն է,
Մեր գիշերային մղձավանջների
Կուրության, թախծի, թանձրո՜ւյթն է երգը:
Ճակատագիր է, մկանի թրթիռ,
Անարդարացի խոցվածի վերք է,
Մերթ հոգեվարք է, մերթ տանող հրթիռ,
Մերթ աղերսանք է, մերթ գո՜ւթ է երգը…

❒

Փետրվարյան երկինք, ձյունաբուք ու հողմեր,
(Չի ցնդի մշուշը մառախուղված հոգու),
Ջսպված հառաչ ու ճիգ, մատներ՝ հալչող մոմեր,
Անցնող-դարձող օրեր և…գիշերնե՜ր անքուն,
Մի թևածող ուրու՝ չմոռացված անո՜ւն,
Եվ երգեր…վերքերն իմ՝ տառապանքի ծնունդ:

❒

Վաղը կարթնանամ ես ցայգալույսին,
Եվ իմ հոգու մեջ կարթնանա նորից
Արևը՝ նման դեռատի կույսի՝
Ողջ էությունս մատնելով հրի…

Կբացվի իմ դեմ հեռաստանն անծիր,
Եվ կփարվի ինձ հովը մեղմօրոր,-
Ոչ ոք այլևս չի էլ կասկածի,
Որ երազել եմ այդպիսի մի օր…

Ոտից դուրս թռած՝ վեր է ճախրելու
Արտույտը՝ երգով մի հոգեհմա,
Արտերն այդ երգով տուն են դառնալու՝
Հերանց գնացող հարսերի նման…

Նամակներ հղած հորիզոններին՝
Հերքելով բախտը անճար-անհույսի,-
Ավետելու եմ բոլոր-բոլորին,
Որ…չի՞ լինելու օրը խաբուսիկ…

❒

Ով է ասել՝
«Օ՜, ժամանակներ, օ՜, բարքեր»…

Նույնն է վիճակը՝ անկյալ ու նսեմ,
Ե՛վ անողորմի, և՛ ողորմածի,-
Փակեք աչքերս, որ ես չտեսնեմ
Նվաստացումը մարդ արարածի…

Ո՞ւմ է պետք հիմա խելքն ու միտքը սուր,-
Անարժեքների ինչպիսի՜ աճուրդ,-
Մինչ շողոքորթի բացած ակոսում
Հասկի փոխարեն որոմն է աճում…

Հուշից լայն բացված աչքեր արցունքոտ,-
Հավերժ է սերը և անանցավոր,
Սակայն ի՜նչ արժե վեհությունը քո,
Երբ ժամանակն ու դարն է հանցավոր…

❒

Ինձ վայր բերեիր այս երկինքներից թևաբախումի,
Այս անհուններից խլեիր ու տուն բերեիր նորից,
Այս քամիների առճակատումից ու բիրտ բախումից,
Վերադարձնեիր քարեքար ընկած սարից ու ձորից:

Մոր նման կանչիր, տուն հրավիրիր ու փաղաքշիր,
Առ ինձ գիրկը քո, ամոքիր հոգիս դավից ու ցավից,
Մոռացիր անցյալն ու մեղքերը իմ, երբեք մի հիշիր,
Թող ինձ փաղաքուշ ու անքեն նայեն աչքերդ ծավի:

Ես չգիտեի, որ կարթնանայիր իմ մեջ վերստին,
Ինչպես արևի կրքոտ համբույրից հողն է արթնանում
Ձյուների տակից, մոտալուտ գարնան հոգեգալուստին,
Որ երանելի քո հոգեդարձն է կարծես խոստանում…

Մի նայիր այդպես նվաստացուցիչ քո այդ հայացքով,
Քո նախատինքը երկակի շեղբ է ու սուր է հատու,-
Ես մինչև հատակ ըմպել եմ խորունկ տրտմությունը քո,
Քեզ կվկայի ապաշխարանքս ամեն մի մատուռ…

❒

Ցավի ծովից իմ հանած մարգարիտներն արցունքիս
Քեզ վզնոց եմ անելու՝ ուլունքաշար հուրհուրան,
Որ մորմոքիդ մեջ անձուկ և օրերիդ անուրախ
Թալիսմանի դեր խաղան և ամոքեն քո հոգին…

Գիշերներում անհանգիստ քո մրմունջը երկնառաք
Հասնում է ինձ ոնց աղերս և Տիրոջը երկնային,
Երջանկության գին ունեն տառապանքդ ջղային,
Տենչանքներդ հուսաբեկ, պատրանքներդ սիրառատ…

Փակ շուրթերդ անբարբառ և աչքերդ միշտ խոնավ,
Համբուրում եմ այս հեռվից, ուր մառախուղ է սիրո,
Անջատումն այս՝ բախտի խաղ, գուցե խաղ է և Տիրոջ,
Հեռավորս, մենավորս, ուխտավորն իմ խոնարհ…

Ա՜խ, դու անդավ, ակամա կրքի խարույկ ուրիշի,
Ում մահճի մեջ ձյունաբուք ու մրրիկ ես մոլեգին,
Ով քոնը չէր երբևէ, նրանը չէր քո հոգին,
Նստեմ գլխիս վար ցանեմ մոխիրն այդ անհուշի…

Ա՜խ, ինձ համար դու դեռ կույս ու գարուն ես հմայիչ,
Երբ էլ որ գաս՝ կընդունեմ չպղծվածիդ որպես կին,
Կարոտաբաղձ մորմոքով, տառապանքով անմեկին,-
Միայն թե քեզ փրկեմ այդ սառցադաշտից ամայի…

❒

Պահ տուր ինձ սերդ, գնա և ազատ
Թևածիր այնտեղ, ուր բախտն է բուրում,
Սավառնիր՝ ինչպես տենչ ու երազանք,
Ինչպես աղավնի կամ որպես ուրու…

Հավերժական չի աշխարհում ոչինչ,
Դիպվածը՝ աղետ անխուսափելի,
Ուր էլ որ լինես՝ անսա ետկանչիս,
Ես քեզ ընդառաջ կգամ, սիրելիս…

Բայց մինչ այդ՝ երկնի անհունում անծիր
Եվ ոլորտներում նրա հիասքանչ,-
Մինչև ետդարձի պահը թևածիր,
Իմ հոգու թռիչք, իմ սրտի փոխկանչ:

❒

Ես զարկերակիս խփոցից գիտեմ այս ժամանակը,
Շավղից դուրս ընկած ու ափից ելած սելավ մի պղտոր,
Սա երկիր ու տուն հիմքից խարխլող մի ուժական է,
Երբ դարն է խառնակ, և բախտը՝ խոտոր…

Կառչած չեմ հնից ու կարոտախտից տոչոր չեմ բնավ,
Ոչ էլ անցյալից հեղեղի բերանն ընկած մի տաշեղ,
Բայց ստույգ գիտեմ՝ կանցնի սելավը, տիղմը կմնա
Եվ այնժամ կզգանք, թե մեր կողերն ինչքան է տաշել…

❒

Առօրյա, տաղտուկ կացություն հիմար,
Տակնուվրա է հոգիս հիմնովին,
Նույնիսկ հեռավոր կանչերդ հիմա
Ինձ ետ չեն բերի պատրանքներ թովիչ…

Քամին լուրեր է հղում անուրախ
Եվ կաղկանձում է որպես անտեր շուն,
Աշունն այնպես է նայում ինձ վրա,
Կառծես այդ դու ես թախծում մշուշում…

Անհնարին է սրտիցդ հանել
Խանդի քորոցը, որ խորն է խրված,-
Անցողիկ չէ այս վիճակն անել,
Ինչպես չի բացվի ունքամեջն օրվա…

Ամպերը ծոր-ծոր մուժով են պատում
Ձորերն ամա, քարափ ու անդունդ,
Ես քեզ համար եմ հիմա տագնապում,-
Իմ մինուճարս, արդյոք, ո՞ւր ես դու…

1997-2002

ՏԵՍԼԱԿԱՆ

Կեղեքված, ինչպես Սիոնի աղքատ՝
Ես կանգնել եմ փակ դարպասների դեմ,
Ափիս եղածը գրոշ չէ, այլ՝ քար,
Ո՞ւմ քունքին կիջնի՝ ավա՜ղ, չգիտեմ:
Տառապանքների սյուներից առկախ՝
Մշուշների մեջ ու մառախուղի,
Մարմինս է ճոճվում, անաստղ, անկայծ,
Հեռվում անթափանց, անհայտ, անուղի…
Մխիթարե՜ք ինձ խոսքերով քնքուշ,
Խոսքերով անսուտ, որ ես հավատամ…
-Ամեն ինչ արդեն անցյալ է և հուշ,
Եվ ոչ ոք ոչինչ ինձ էլ ե՜տ չի տա…

❒

Թավուտը սուզվեց մեգ ու մշուշում,
Կածանը կորավ մառախուղի մեջ,
Քո գալու մասին ոչինչ չեն հուշում
Թուփ ու արահետ, անտառ ու գետակ:

Իմ շուրջը վաղուց մթնշաղ է պաղ,
Իմ հոգում անհույս՝ ափսոսանք ու ցավ,
Որ քո մարմինը չի ճոճվի, ավա՜ղ,
Իմ թևերի մեջ՝ սիրուց արբեցած:

❒

Մեկ է՝ խոստանան ինձ և՛ Հինդ, և՛ Չին,
Չեմ էլ հիշելու դրանք մտովի,
Ուխտավորի պես գամված եմ խաչին
Քո այս անտարածք հողակտորի:
Թե Սահարայի տապից էլ կիզվեմ
Եվ կամ ջրերում լողամ Նեղոսի,
Թե հրապուրի Հիմալայն էլ վես,
Սքանչանամ էլ բուրգով Քեոփսի,
Մեկ է՝ գալու եմ քո առաջ ծնկի,-
Ըմպելու խնկի բույրը բուրվառիդ,
Դարձի եմ գալու նորից ու կրկին,
Շիկնելու եմ ես քո Վարդավառից…
Երգի, ճախրանքի, հրճվանքի, խղճի,
Անգամ անկումի, կորստի միջից
Դառնալու եմ քեզ՝ որպես մոր մի սուրբ,
Համբուրելու եմ ձեռքերը քո նուրբ…

❒

Կասկածներ չունեմ և ստույգ գիտեմ,
Որ սերը սեր է կյանքում, մահը՝ մահ,
Սիրել՝ սիրում եմ, մեռնել՝ կմեռնեմ,
Բայց այդ պահին էլ ես չեմ ասի՝ ա՜հ…:

Հազիվ թե մնամ դիպվածի հույսին,
Լավ օրվա հույսին հազիվ թե մնամ,
Երազներ չունեմ, ցնորք ու տեսիլ,
Վիատ պատրանքի տեղ էլ չմնաց…

❒

Երազ կլիներ, տեսիլք ու ցնորք,
Քնել մահիճում օրերի անցած…
Արթնանալ մի օր գուցե նորից-նոր՝
Առաջվա պես խենթ ու ջահելացած,
Դուրս նետվեիր քո տնից հայրական,
Հարբած՝ սիրուց ու աստղոտ երկնքով,
Ես էլ, կիսամերկ ուսերդ գրկած,
Քայլեինք լուսնի ցոլքերի ներքո:
Հետո ամպ ծածկեր լուսնի դեմքն աղոտ,
Գիշերը լիներ անսկիզբ, անվերջ,
Անցնեինք այգու շավիղով շաղոտ
Լուռ սարսռայիր իմ թևերի մեջ…
Հատեինք այգին, մտնեինք թավուտ,
Եվ այն կրկնվեր, ինչ եղավ մի օր,-
Անարատության ճիչ՝ այգու հեռվում…
Բայց, ափսո՜ս, որ սա երազ է, ցնորք:

❒

Անտրտունջ, անմրմունջ, անսքող՝
Իմ սիրտը կապված է միշտ քեզ հետ,
Դու իմն ես և առանց հարսնաքող,
Եվ առանց մատանու ոսկեղեն:
Եվ անզարդ, և զվարթ, ոգեղեն,
Քո դեմքը լուսնի պես բոլորած,
Դու այնպե՜ս ընտանի, հողեղեն,
Ուրիշին՝ դու անհայտ մոլորակ:
Եվ այնքան առօրյա, հասարակ,
Եվ այնքան արտակարգ, անսովոր,
Մերթ՝ մարմին մատներիս տակ՝ փխրուն,
Մերթ՝ ոգի ու ցնորք հեռավոր…
Դու՝ անչար, և՛ բարի, և՛ ներող,
Եվ, սակայն, երբեմն դավադիր,
Քո քայլքը՝պատրանքից վա՜յր բերող,
Հնչում է և որպես մեղեդի:
Դու՝ և՛ բախտ, և՛ հավատ, և՛ պատիվ,
Խանդի զոհ՝ արժանի իմ ներման,
Դու՝ խոցվա՜ծ խոսքերից իմ պատիր
Եվ շոյված քնքշանքից անսահման:

ԱՂՋԱՄՈՒՂՋԻ ՄԵՋ ԱՐԵՎՆ Է ՀԱՆԳՉՈՒՄ

1.
Աղջամուղջի մեջ արևն է հանգչում
Ու խտանում են ստվերները պաղ,
Թվում է՝ հեռվից մեկն ինձ կանչում
Եվ մորմոքում է, մղկտում մի պահ,
Որ ես ունկնդիր այդ հեռու կանչին,
Մութ ստվերների միջով դեգերող,-
Չեմ հասնի նրան, և ինձ կտանջեն
Կարոտի ցավն ու կսկիծն այրող…

2.
Հանգչում է արևն աղջամուղջի մեջ,
Ձորերը պատում մշուշ ու ամպեր,
Եվ օդում կախված՝ թվում են անտեր
Բոլոր կանչերը՝ քնքշագին ու պերճ:
Եվ հեռանում են ստվերներն անթև,
Եվ հետզհետե վերից ու վարից
Գույները խամրում՝ մաղում է անձրև՝
Մղելով սիրտս գիրկը խավարի…

3.
Ու սարերն իրար եկան ու դիպան,
Մեգի մեջ կորան թուփ ու արահետ,
Եվ աղոտ հույսի նվաղ մի ծփանք,
Իրիկնային մեղմ ցոլանքների հետ,
Պատրանքախռով ու տեսիլքներով,
Մորմոքումներով և՛ պղտոր, և՛ հորդ,
Ստվերների մեջ պաղ ու վեհերոտ…
Գերեվարեցին, ա՜խ, իմ հոգին որբ:

❒

Ողջ գիշեր չեկավ քունը աչքերիս,
Պատրանքնե՞ր թափուր, տեսիլներ ավեր,
Եվ տագնապների սուրսայր սրերին
Արյունոտվում էր սիրտս կարեվեր…

Ո՞վ է մնացել դուրսն անապաստան,
Հոգեվարքի մեջ ո՞վ է տվայտում,
Կամ սպառվում են մոմերն ո՞ւմ տան,
Մղձավանջներն ո՞ւմ են ծվատում…

Ո՞վ է մնացել տապին ու պաղին,
Ո՞վ է, որ աստծուն հավատ չի տածում,
Ում մերժված սերն է՝ վհատ ու դժգույն,
Գալարուն ցավի գիրկը հալածում…

Ողջ գիշեր չեկավ քունը աչքերիս,
Պատրանքներ թափուր, տեսիլներ ավեր,-
Եվ տագնապների երկսայր սրերին
Արյունոտվում էր սիրտս կարեվեր…

❒

Ես մատնվել եմ ցավ ու կրակի
Կամ երքուղին է դժվար ու խափան,
Կամ չնայելով չվացուցակի՝
Գնացք եմ նստել մի պատահական…

Քո սպասումը՝ անվերծանելի՜,
Սիրո կսկիծը վերջ չի ունենա…
Սիրելիս, ների՜ր, ներիր, սիրելի՜ս,
Թե ժամանումս քիչ-ինչ ուշանա:

❒

Մեկը կանչում է հեռավոր հանդից,
Արցունքոտվել են կոպերը մեկի,
Բոցով բռնկված շամբուտից անդին
Խրխինջն է թնդում նարինջ զամբիկի…

Գնաց հայրս ու չեկավ էլ դարձի,
Մայրս մարմրեց կարոտից անդին,-
Էլ ո՞ւմ ես կանչում, օ՜, իմ աշխետ ձի,
Իմ հեռո՜ւ, հեռո՜ւ, հեռավոր հանդից…

❒

Իրիկնային մրմունջ
Ու գիշերվա կսկիծ,-
Հոգո՜ւս մեջ են քամվում
Տրտմություն ու թախիծ:

Մի ցավատանջ հայացք,
Մի տրտմագին ժպիտ,
Տարտամ մի շող՝ բեկված
Հոգուս խորքը դեպի…

Աչքեր՝ երկու լճակ,
Ու մշուշվող մի դեմք,
Մի սիգաճեմ հասակ
Օրորվում են իմ դեմ…

Ճեմում լուռ ու դանդաղ,
Որպես և՛ խինդ, և՛ վիշտ՝
Հեռանում են անդարձ՝
Ստվերանում ընդմիշտ…

ՎԵՐԱԴԱՐՁ

Բակում թթենին մտորում է լուռ,
Դեմքին՝ շղարշը գարնան մշուշի,-
Նա տուն է մտնում հոգնած ու հլու,
Հոգին խռովված հեռու մի հուշից…

Մանկության բույրեր՝ թունդ հարբեցնող,
Խոռնխոտի հոտ ու տարեկանի,-
Միախառնվեցին տեսիլք ու ցնորք
Իսկության մեջ ու անիրականի…

Մահճակալներն են դավադիր լռում,
Անկողինները՝ սառն ու խոնավ,-
Ոչ հոր հոգին է տանը թևածնում,
Ոչ էլ՝ տաք շո՞ւնչն է բուրում մոր խոնարհ…

Տիկնիկի հայացք՝ անիմաստ ու չոր,
Լուսանկարներ՝նախատինք անլուր,
Վարագույրների քղանցքի միջով
Թափանցող լույսն է հատակն ավլում…

Իրերի ծանր լռություն խոցող,
Համր ժամացույց, որ պատից առկախ՝
Ժամեր էր հաշվում, օրեր հեռացող
Ու մոխրացնող տարիներ, հարկա՞վ:

…Դուռ ու լուսամուտ բացեց կրնկին,
Չէ՞ որ վերջապես իր տունն էր եկել,-
Եվ ունկերի մեջ կրկին ու կրկին՝
Հնչեցին լռած կանչերը մեկեն…

1992-Ը

Միգոտ երկնքով ստվերներ անցան
Եվ ուրվականներ ահի ու մահի,
Զրահավորված հեծյալներ անցան,
Եվ վրնջացին ձիերն ամեհի…

Շառագունեցին հեռուներն անծիր,
Ղողանջեցին զիլ զանգեր պղնձե,
Եվ սարսռացին դաշտում խոտ ու ծիլ,
Կարծես թե մեկը մահեր է հնձել…

Բյուր փլատակներ ավեր գյուղերի
Եվ սրբապղծված շիրիմներ անթիվ,
Ելնում է ծուխը լքված շենների,
Որ կուլ գնացին մահտարաժամին,-

Ծանր ճնշումից կասկածանքների,
Այս հանցախռով աշխարհից անդին,
Չար ոգիների հալածանքներից
Ես քա՜ղշ եմ տալիս մահահոտ իմ դին…

❒

Վաղ առավոտից մառախուղ ու մեգ,
Հեռուն՝ անթափանց ու աղոտ երկինք,-
Չեռք չի տալու քեզ այս օրը երբեք,
Քմահաճ՝ ինչպես քնահարամ կին…

…Փողոցներ թափուր, մայթեր ամայի,
Խանութներ՝ դատարկ ցուցափեղկերով,
Մերկացած, խոնավ ծառերի վրա
Մշուշ է իջնում պաղ ծվեններով…

Եվ անձկության մեջ՝ քայլեր երերուն,
Անհոգեպարար մտորում ու խոհ,-
Հոգուն սևակնած երկինք է բերում
Նվաղոտ սրտի տրտմությունը խոր…

Կնոջ լվացքը՝ հույսին արևի,
Մառախուղի մեջ, պարանին պրկված,
Ամուսինը չի գալու երևի,
Թե չէ՝ կբացվեր ունքամեջն օրվա…

Տան վրա բացվող օրը՝ սնապարծ,
Տան ներսում՝ բեռը հոգս ու կարիքի,-
Ուր է, թե հանկարծ, ուր է, թե հանկարծ
Մի շող թափանցեր հոգու նրբանցքից…

Վաղ առավոտից՝ մառախուղ ու թեն,
Որ սարսռում է խոնավությունից,
Եվ…ծանրանում են կոպերն արդեն
Կնոջ գիշերվա անքնությունից…

❒

Ամեն ինչ ունի խորհուրդն իր վերին,
Նախանշված չէ դերը ոչ ոքի,
Եվ կյանքում նույնիսկ անշունչ իրերին
Առաջնորդում է միմիայն ոգին…

Խոստովանանքիս համար ինձ ներիր,
Պետք չեն անհարկի բառեր ու երդում,
Թե նախանշված խորհուրդով վերին
Ինձ քո ոգին է միշտ առաջնորդում:

Ո՞վ է ցանկալի, ո՞վ անանձկալի,
Ո՞վ է խոցողը, ո՞վ սպեղանի,-
Երբեք չեմ գալու անակնկալի,
Եթե կանչես էլ զոհասեղանի…

Ահ չունեմ, կարիք և հենարանի,
Ալիքն ինձ ափ չի նետի քո հոսքից…
Ոմանք օգտվում են քո հանդերձարանից
Եվ…փա՜յլ ու շուք են առնում քո խոսքից:

Աչք չունեցա քո պահուստի վրա,
Պահիր այն, պահիր քեզ՝ վաղվան վայել…
Հագեցնում է ինձ բերնեբերան
Քո ցավն անգամ, որ…իմն է նաև:

❒

Ո՛չ մարմին, ո՛չ իր ոգեղենացած,
Դու սավառնում ես պատրանքի թևին,
Անկումի ահը քեզ չի քաշում ցած,
Քեզ՝ խռովյալիդ՝նյութից կարծր ու սին…

Եվ շոգիացած հառաչանքներից,
Տանջահար, լքված հոգիների հեգ,
Իրերի միջև ու անցումների,
Դու՝ ամբողջովին մառախուղ ու մեգ…

❒

Իմ կյանքը եղավ մի ներկայացում,
Տեսարաններով ձանձրալի, անգույն,
Անիմաստ մի խաղ…ոչ մի հագեցում,-
Շուտով վայր կիջնի մի սև վարագույր…

Մահով կավարտվի ամեն բան, իրավ,
Կհանգչեմ հողում անվիշտ, անզգա,-
Եթե հրեշտակ չիջնի էլ վրաս,
Ոչ մի սատանա ինձ էլ մոտ չի՞ գա…

❒

Բարեկամ, արդեն հուշերի մի բեռ
Մեր նկուն ուսերը հազիվ են տանում,
Դրսում այնպիսի բուք է ու ձմեռ,
Որ ցանկապատից ցցեր է հանում…

Եվ մեր քունքերին ու մազերի մեջ,
Ուր անցյալ տարվա եղյամն է մնում,-
Ձիգ տարիների տառապանքն անվերջ
Կրկին ու կրկին նոր ձյո՜ւն է դնում…

Սևեռուն է դեռ ցավն անամոք…
Լուսամուտն ո՞վ է բախում այս ժամին,
Այդ մեր հուշերի խարույկից բորբոք
Կայծոռիկնե՜ր է թռցնում քամին…

Հակված օջախի բոցին մարմրող,
Խառնելով կայծեր մոխիրում պաղած,
Մենք մորմոքում ենք կորուստից այրող՝
Երանությունն անցյալում թողած…

Իսկ մեկն այնտեղ սպասում է դեռ,
Օրորվում վաղվա երազանքներում,
Քմծիծաղում է ձյուն ու բքի դեմ,
Եվ…մեզ նվոցի համար չի՜ ներում…

Մեզ ի՜նչ գալիքի բերկրանքն անձկալի,
Փառքի ծիրանին կամ թե մի նոր ցավ,
Շիրմատան ճամփով՝ ձյունոտ սոսկալի,
Մեր երազների դիակա՜ռքն անցավ…

ՈԳԻ

Արարշավ եկող, գրոհով անվերջ
Գարունն է ահա հողին տիրանում,
Եվ իմ ապրիլյան մաքառումի մեջ
Դու ծաղկաթա՜փ ես դառնում ծիրանու…

Բաց փեղկերից ներս ափերդ պարզած,
Ուր աղավնու պես իջնում է հոգիս,-
Կարծես ծիրանու ճյո՜ւղ ես աստղազարդ,
Բռնկված բույրով գարնան զարթոնքի…

Ինչպե՞ս Ամուրն իր նետը չզարկի…
Պարզ կապույտ երկինք ու լուրթ հեռաստան,
Թռի՜չք է հոգու, ծառի ու ծաղկի՝
Ելած առմուտքից ու շեմից իմ տան…

❒

Ժամանակն ինչ-որ բաներ է հերքում,
Փակում հաշիվն իր մեր անցյալի հետ,
Իսկ մենք էլ արդեն երես ենք թեքում
Մեր նվաստացման տարիներից հեգ…

Եվ ի՜նչ մեղք է, որ երես առ երես,
Մեր դեմքին անլուր նախատինք առած,-
Զգուշավո՜ր ենք դառնում այգու պես,
Վաղ գարնանային ցրտերից առաջ…

ՊԱՏԿԵՐ

Քաշվեց իր բույնն ամեն արարած,
Հավքը պահ մտավ ծառի մի խորշում,
Իրիկնամուտի կածանի վրա
Հողմապտույտ է ու սյուն է փոշու:

Թավուտը հանկարծ լռեց խստագույն,
Բացատում՝ կոճղեր խառնված իրար,
Քարափն իր դեմքը խոժոռեց մի պահ
Քամու դիմահար սուլոցի վրա…

Անտառի եզրին մռնչաց կաղնին,
Եվ ձորում հնչեց արձագանքը զիլ,
Ուր կապը կտրած եզան պես քամին
Պոզահարում էր հանդապահ դեզին…

❒

Պատուհան մի բաց ու գրասեղան,
Եվ այնքան նման զոհասեղանի,
Արտասվող մի մոմ, մի սիրտ տեղահան,
Եվ հոգու մի խոց՝ անսպեղանի…

Թող հեգնի վրադ լուսինը նորեկ,
Քեզ համար՝ գիտեմ (ոչ ոք չի՞ հերքի),
Որ կես գիշերից մինչև լույս ցերեկ՝
Մի աստեղային մանվածք է երգի…

❒

Մեր հեռացումն աշխարհից հոգնած՝
Երբեք չի բացի գաղտնիքն անհայտի,
Գուցե թե մնա և որպես վարկած,
Եվ օրվա դեմքը՝անարտահայտիչ…

Անցած, մոռացված ու անկարեկից
Ջահելությունը՝ոչինչ չգտած,-
Ցիգ տարիների մշուշի տակից
Իր հրաժեշտի ձեռքը թափ կտա…

Չմտապահած ո՛չ հուշ, ո՛չ երազ,
Դեմ առած փաստի մի անակնկալ,
Եվ չիմանալո՞վ, թե ինչի համար՝
Մեր մանկությո՞ւնը լուռ կհեկեկա…

❒

Արահետների վրա ամայի
Մայրամուտ իջավ լուռ ու անտրտում,
Խեղեց անտառի դեմքը հմայիչ,
Եվ մի մեղմ զեփյուռ դողաց բացատում…

Քարափը, ձեռքը ճակատին հենած,
Մտորեց երկար ու նոր մտավ քուն,
Միհրավը, օրվա կանչերից հոգնած՝
Ձագերին առավ թևի տակ տաքուկ…

Մութը ներխուժեց քարատակ ու խորշ,
Վայրի ծիրանին կախ ընկավ քերծից,
Բվի կանչից խուլ ու խորհրդավոր
Սարսռաց բարակ լանջը քարայծի…

Եվ անտառ տանող նեղ արահետին
Իրարու անցան, լսվեց ձայն լացի…
Պահուստից զո՞ւրկ, թե ահից անհայտի՝
Ո՞չ ոք չնստեց իրիկնահացի…

❒

…Եվ ոչինչ, ոչինչ, ոչինչ մի ասա
Ցախորդությունների մասին ինձ հասած,
Ես՝ կորուստներով հարուստ ու…հաստ՞ւն,
Ցեռքբերումներիս մասին չե՞մ խոսում:
Թափանցիկ էի, ինչպես ապակի,
Ցանկացած օրվա ու եղանակի…
Բայց ինչքան ասես՝տագնապի ամպե՞ր,
Ինչ սիրտ էլ լիներ, սառույց կկապեր,-
Ինչպես կենդանի երակ ու վտակ,
Իմը՝ խայտու՞մ էր հալչող ձյունի տակ,
Կարծես ոչինչից չէր է՞լ երկնչում,
Եվ…ինչպես հիմա՝գարուն էր տենչում:
Ի՞նչ կա գալիքում…դեռ տեղ չհասած՝
Ինձ ոչի՞նչ, ոչինչ, ոչինչ մի՞ ասա:

ԱՐԵՎՆ ԻՄ ՅԱՎԻՑ
ՊԻՏԻ ՃԱՌԱԳԻ

❒

Գարուն, ծաղկանց բուք ու պտղով հղի,
Բողբոջներ պայթող ու դեռ չբացված,
Դու ինձ անծրար նամակներ հղիր,
Ինչպես բալենու այս ճյուղը ծաղկած:

Այո, նամակներ՝ բաց ու անծրա՜ր,
Եվ…մայրամուտի մեր այս տարիքում,
Մոտ ու օտարից, աշխարհից արար
Էլ թաքցնելու ի՜նչ ունենք կյանքում:

❒

Խամրող գույների հոգեվարքությամբ,
Առուներն ի վար արծաթահնչուն,
Մեզ հրաժեշտ է տալիս տրտմությամբ
Աշնան դողացող տերևների չուն…

Քամին կկառչի մեր երազանքից,
Մեկ-մեկ կհանի հանդերձները մեր,
Եվ մենք կմնանք աշնան եզերքին՝
Որպես երամից ընկա՜ծ կռունկներ…

❒

Հոգնել եմ արդեն նեղվելուց անվերջ,
Ապրելուց երկար՝ խուլ ու համրությամբ,
Հարազատների օտարության մեջ
Եվ օտարների հարևանությամբ…

Ավերումներում այսքան եռանդուն,
Եվ կանխագծված, և որոշակի,-
Ես սարսռում եմ, ջերմում ու տենդում
Մեղկ հոգիների այս թունդ խորշակից…

❒

Իմ հրեշտակը եկել է ահա,
Գարնան մի ասք է շշնջում ունկիս,-
Հյուսքերը քանդել լուռ ու գլխահակ,
Ուռին գետափին իջել է ծնկի…

Տաք մշուշներ են գետից բարձրանում,
Ծաղկած ծիրանու թերթաթափ անվերջ,
Ջրահարսներ են, կարծես, լողանում
Ծաղկուն ջրերի փրփուրների մեջ…

Նետ ու աղեղով ու ելած որսի,
Ամուրը պահ է մտել դարանում,
Ո՞ւմ է խփելու, ո՞ր ջրահարսի՝
Հարբած բուրմունքով ծաղկած ծիրանու…

❒

Ցավալի է, որ հաշտ չենք իրար հետ,
Ցավալի է, որ խռո՞վ չենք նաև,
Ցավալի է, որ չենք ընդհարվել գեթ,
Երբ իրար հաճախ հանգիստ չե՞նք նայել…

Ցավալի է, որ մակերես է հարթ,
Առանց չափումի, խորք ու ծավալի,
Ինչ այնքան պարզ չէ, ո՞չ էլ այնքան բարդ,
Դա առանձնապես շա՞տ է ցավալի…

Ո՛չ սրտի նվոց, ո՛չ ծակոց է սուր,
Դիպվածն, ով գիտե, մոտ է, թե հեռու…
Ցավալի է, որ ցավից ենք խոսում,
Բայց այնուհանդերձ՝ցավ չի պատճառում:

❒

Տառապանքի մեջ, հոգս ու կարիքի,
Մառախուղում այս, մեգի մեջ, ամպի,-
Հույսը լույս անել, վա՞ռ պահել հոգին,
Որպեսզի սիրտը սառույց չկապի…

Եվ օրվա համար, որ պիտի ծագի,
Գիշերից հետո՝ սպառվող արդեն,-
Արևն իմ ցավից պիտի ճառագի,
Եվ աղբյուրները՝ արցունքի՞ց հորդեն…

❒

Ձյունը ծածկել է և՛ առմուտք, և՛ բակ,
Սառույց է կապել տանիք ու ձեղուն,
Եվ կաղկանձում է դռան առջև փակ
Շան պես անտերունչ՝բախտը հեղհեղուկ…

Քմահաճույքին թողնված դեմ առ դեմ,
Շուրջն ամայի և բուք ու բորան,
Ամենից լքված ու դա քիչ է դեռ՝
Բքի մտրակն էլ կդաղի նրան…

Մի բարդ հանելուկ ու մութ առեղծված
Հանգիստ չեն տալու հոգուս ալեհեր…
Ում ի՞նչ գործն է, թե խռովքս մնաց
Իմ մաքառումի տարիների հետ:

❒

Աննկատելի, ինչպես պատահեր՝
Մեր քունքերին ձյունն իջնում էր անվերջ,
Երբ մոլեգնում էր բուքը խելահեղ
Մեր հասունացման տարիների մեջ…

Գարունն ինչքան էլ որ առաջ մղի
Իր գրոհները ու բուրի անվերջ,-
Հավքերն այլևս էլ չե՞ն ճռվողի
Մեր ցրտահարված սաղարթների մեջ…

❒

Մոռացված բույրեր անմոռուկների
Եվ…տարիների սրարշավանքով,
Հիշատակների փլատակներին՝
Մամու՞ռ է անբույր, խավ ու քարաքո՞ս…

Ավազ է նստած ու փոշի՞, փոշի՞,
Եվ իմ երբեմնի շենշող Պերգամում
Պաղ մշուշներ են հեռու մի հուշի,
Եվ մի խլականք սուլոց է քամու…

❒

Անսահման՝ ինչպես ծիրը երկնքի,
Ճակատագիրը, ինչպես մի թռչուն,-
Դեպի անհունը ճախրում է հոգիս,
Դեպի անկումը դատարկահնչուն…

Վաղ այգաբացի ցոլքերում հրե
Կվառվեն սև-սաթ թևերը նրա,
Եվ անկումի մեջ կռինչը զորեղ՝
Սարսու՞ռ կդնի աստղերի վրա…

❒

Փորձված էր ընթացքն իմ ճանապարհի,
Ետևում թողած բարքերը նսեմ,
Երբ իմ դեմ ելար ինչպես քրմուհի,
Աֆրոդիտեի տաճարից վսեմ…

Չխոցեց հոգիս հեգնանքդ անսուտ,
Սերը կատա՞կ չէր նորովի կամ հին,
Ես որսում էի սրածայր ու սուր
Ամուրի նետը թռիչքի պահին…

❒

Ադամի մեղա՝ վկայություն պերճ
Իմ չարչարանաց ու տարաժամի,-
Ապաշխարանքի ծվեններով մեջ
Եկել, հայտնվե՞լ եմ դրախտի շեմին…

Առ ինձ՝ որպես զոհ կամ որպես ընծա,
Քեզ քի՞չ է, արդյոք, Տեր իմ չներող,
Որ Քավարանիդ հասնելիս՝ անցա
Դժողքի բոլոր պարուրակներով…

❒

Խաբկանից այն կողմ, պատրանքի թևին
Ես սավառնում եմ գիրկը հայտնության,
Եվ հավատում եմ իմ աստղի փայլին՝
Իր հավերժությամբ ու…անգոյությա՜մբ:

❒

Փորձություններից անցա՜ծ, սիրելիս,
Մեղանչումներից խոցվա՜ծ, սիրելիս,
Խանդի ցցերին խաչվա՜ծ, սիրելիս,
Կրկին հարությո՜ւն առած, սիրելիս…

Երդվում եմ բոլոր հրեշտակներով,
Վարարումներով սիրո խենթ ու հորդ,-
Դու Տիրոջ տասը պատվիրաններով՝
Պատվիրա՜նն ես իմ տասնմեկերորդ…

ՈՐ ՓԱՅՓԱՅԵՍ, ՓԱՅԵՍ ԻՆՁ

1.
Ես՝ անմարմին մի ցնորք՝ այս հեղհեղուկ աշխարհում,
Եվ թափանցիկ մի երազ՝ հողմերի մեջ ու բքի,
Անմեղսունակ ու անքուն ու թափառիկ մի ոգի՝
Կապույտներում քո անծիր, ոլորտներում քո անհուն…

Անապաստան, անպաշտպան, անապահով, աններում,
Տրված բախտի քմայքին, դիպվածներին ես գերի՞…
Դու՝ նրբագեղ մի շղարշ՝ նրբահյուսված աստղերից,
Մրրիկների մեջ ու բիրտ այս աշխարհի հողմերում…

Ստվերի պես հեզասահ՝հովիտներիդ եմ իջնում,
Ծաղիկներիդ շուրթերը համբուրում եմ, անրջում
Քո անդորրը վարդագույն, վաղնջական ու արդար…

Պահ եմ մտնում ծոցիդ մեջ՝ծաղկաբույր ու վարդազօծ,
Քնքշանքներով հրակեզ, հուզումներով ալեկոծ,
Որ փայփայես, փայե՞ս ինձ՝դու իմ քնքուշ Տիրամա՞յր…

2.
Որ փայփայե՞ս, փայես ինձ՝ ինչպես քնքուշ Տիրամայր,
Եվ մարմին տաս երազիս ու ցնորքիս՝հեռաստան,
Եվ թափառիկ իմ հոգուն՝ մի ապահով մենաստան
Այս դառնագին աշխարհում՝ և՛ անհանգի՞ստ, և՛ անծա՞յր…
Շուռ տուր անիվը բախտիս՝ ի հեճուկս հողմերի,
Արեգակվիր իմ հոգու երկինքներում արնավառ,
Աստվածուհու պես Աստղիկ՝ դարձիր խորհու՞րդն իմ վերին…
Զգամ, որ այս աշխարհում ինձ բնավեր չի՞ անի

Անագորույն ո՞չ մի հողմ, ո՞չ մի մրրիկ ու սամում,
Եվ իմ երազն անմարմին միտվա՞ծ լինի անհունին…

Ուղիներում անհամար, անվերջ ոլոր ու մոլոր,
Թող հովանի լինի ինձ քո հայացքը իմաստուն,
Եվ ուղեկից լինի հար քո ժպի՞տը Տիրամոր…

ԴՈՒ՝ ՀԻԱՍՔԱՆՉ ԱՎԵԼԻ

1.
Օ՜, սիրելի՜ս, սիրելի՜ս, կարապավիզ իմ հուշիկ,
Աղջամուղջիս մեջ ահա դու հառնում ես վեհորեն,
Եվ արթնացող սիրտն իմ քե՜զ է հղվում քնքշորեն՝
Թոթափելով վրայից մոռացումի հին փոշին…
Ի՜նչ ես, արդյոք, խոստանում, կործանո՞ւմ, թե՞ բարի լուր,
Վերադարձի հրավե՞ր՝ թևաբախման թռիչքի,
Թե՞ անկումի սարսափից, տառապանքի մեջ կրքի,
Ես պիտի գամ գիշերվա տրտմությո՜ւնդ ըմպելու…

2.
Օ՜, սիրելի՜ս, սիրելի՜ս, դու վեր հառնած գահերից,
Երկնավորի շնորհից օծված դու սո՜ւրբ ավելի,
Ապաշխարանք տենչացող ես՝ մեղքերո՜վ ցավալի,
Դու՝ հիասքանչ ավելի պայծառացման պահերիդ…

Ուր էլ լինես՝ ես կգամ, ընծա բացված շուրթերիդ,
Ծնկի կգամ քո առջև, գիտեմ, ինձ չես նախատի,
Կողողի քո հոգին և կտեղա քո սրտին՝
Աստվածահաճ-աստղաբույլ արտասուքը մեղքերիս…

3.
Օ՜, սիրելի՜ս, սիրելի՜ս, արբեցումի է նման
Իմ այս պահն անվախճան՝ մառախուղում ու ամպի,
Եվ թվում է՝ ուր որ է՝ սիրտս կամար կկապի
Ծիածանի գույներով, որ գաս առա՜նց վարանման…

Դու՝ արթնության մեջ սիրո, ես՝ հրի մեջ ու տապի,
Երկընտրանքի սուսերով մի՜ խոցոտիր իմ հոգին,-
Կասկածներս փարատիր և ցավերս ամոքիր,
Ե՜կ, մի դառնա դու, ավա՜ղ, վերջին երգն իմ կարապի…

ԻՄ ԿԱՆՉԻ ՎՐԱ ԵԿԱՆ

❒

Հեռացողի տրտունջ,
Մոռացվածի կսկիծ,-
Որի՞ն կանչեմ ես տուն,
Հանեմ ցավը կրծքից…

Ինձ չի՞ օգնի ոչ ոք,
Նույնիսկ ինքը՝ Աստված,-
Օ՜, լքվածի մորմո՞ք՝
Հանիրավի զարկվա՞ծ…

❒

Հոգիների այս պաղ
Մշուշներում անկար,-
Մի ակնթա՞րթ, մի պա՞հ
Ինձ Ծավի տե՞ր արա…

Մի կուց երկի՞նք պարզկա,
Ցողոտ-շողոտ մի կու՞մ,-
Թեկուզ մի դա՞ր երկար
Ինձ ցավի տե՞ր արա…

❒

Մի ոգեղեն անդորր,
Իրիկնային մարմանդ,
Մի զով զեփյուռ խանդոտ,
Հոգնած կածան ու հանդ…

Ոչինչ էլ չի՞ հայցում
Հոգիս՝ միայն անդորր…
Արցո՞ւնք, արցո՞ւնք, արցունք՝
Իմ կոպերը քանդո՞ղ…

❒

Մթամած երկինք ու օր,
Հորիզոն՝ սևով ներկված,-
Տեղահան միրհավ ու լոր
Իմ կանչի՞ վրա եկան…

Եվ մեկը՝ լքված ու լուռ,
Փուլ եկավ, տնքաց երկար,-
Արցունքի շիթե՞ր բուռ-բուռ
Իմ կանչի վրա եկան…

❒

Անամոթ գնչուհու պես՝
Կրակոտ, սևորակ աչքերով,-
Գերեցիր իմ հոգին մեղսունակ
Եվ…տարար շամբուտը գիշերով:

Ամպը քող արավ երեսին
Հրեշտակն ապշահար երկնքի,-
Գիշերվա ամպերի տակ՝ լուսին,
Շամբուտում…խրախճա՜նք էր կրքի:

❒

Ձեզ համար, որոնց մեղքերն անքավ
Սիզիֆի քար են հոգու ափունքին,
Թեպետ տառապեց սիրտս արնաքամ,-
Տրոփում է դեռ երա՜կն իմ քունքի…

Եվ գիտեմ՝ ովքեր որ հոգեդարձ են
Դեպի Հիսուսը՝ հարություն առած,-
Երուսաղեմի դռները բա՜ց են,
Եվ…ճամփաները Սինայի լեռան…

❒

Անուրջնե՞ր ոսկի՝ մշուշնե՞ր դարձած,
Երազնե՞ր անխառ՝մոռացվա՞ծ վաղուց,
Պատրանքներ թովիչ, որ անէացան
Ու փոշիացան մի նեղ ծառուղում…

Անդարձ հեռացած օրերի բիրտ ցավ,
Մրմունջնե՞ր հուշի ու ներկայության,-
Ամե՞ն ինչ այնպես տխուր վերջացավ,
Ավարի տրվեց ու մոռացությա՞ն…

❒

Հեռվում՝ սևակնած երկինք Անհայտի,
Ամպեր՝ կուտակող ու ծանրամարմին,
Մի անհորիզոն տափաստան ու տիվ-,
Ուր փոշեգունդ է գլորում քամին…

Իսկ ճանապարհը ձգվում է անվերջ,
Եվ…ապահով տեղ հասնելու համար,-
Հովանի դրեք աչքերիս վրա՝
Անձրև է գալու դիմհար ու վարար…

❒

Սիրեցյալներիս չհասցրի ասել
Իմ հրաժեշտի խոսքը՝ տրտմագին,
Եվ հիմա նրանք որտե՞ղ են հասել,
Եվ տե՞ղ կհասնեն, արդյոք, մինչև ե՞րբ…

Անհայտության մեջ ու տագնապների,
Պատահարների, դիպվածների դեմ,-
Ոտնաձայները հեռացածներիս՝
Իմ ունկերի մեջ տրոփո՞ւմ են դեռ…

❒

Մոմակալներում հալոցք չէ մոմի...

Միգապատ աշնան օրվա տրտմություն,
Պատուհանից դեն անձրև է մաղում,
Տան տիրակալն է մի խուլ համրություն
Եվ… աղմուկներն են մոռացվել վաղուց…

Ես հիմա երկչոտ իմ շուրջն եմ դառնում,
Արդեն իմ սրտին սիրելի ու մոտ,
Հարազատներիս դեմքերն են հառնում
Սեղմաբար իջնող մշուշից աղոտ…

Եվ այնուհանդերձ, և այնուհանդերձ
Տան խորշերի մեջ ու տան իրերի,
Հեռացածների բուրումներ կան դեռ
Եվ… սարսուռնե՞ր կան հիշատակների:

❒

Աստված իմ, Տեր իմ, բախտս չի՞ բերում,
Բախտ հորինողիդ չա՞րն էլ ես տանեմ,
Ցավի ճիչերս ինչպե՞ս վերծանեմ
Խլականջների խրթին ունկերում…

Արեգակներն իմ ժպիտների,
Պարզ ու թափանցիկ իմ երկինքների
Բուռ-բուռ աստղերն ինչպե՞ս վերածնեմ
Հավկուր կույրերի մթի՞ն բիբերում…

❒

Մեր աղոթքների տարաժամն է սև՝
Իրիկնահացից առաջ հոգեթով,
Էլ ժամերգություն չի լինի, իմ սե՞ր,
Ինձ ու քեզ համար ոչ մի առիթով…

Հառիր Տիրոջը հայացքդ մեղմիկ,
Եվ…ո՞չ մի հայցում, և ո՞չ մի հարցում,-
Մոմակալներում հալոցք չէ մոմի՝
Արյուն է, արցո՞ւնք, արյո՞ւն է, արցունք…

❒

Սուրճի բույր, սև-սաթ մրուր հատակում՝
Մինչև վերջ ըմպած փխրուն բաժակի,-
Իմ աստղն այնտեղ չի փայլատակում,
Եթե կարող ես՝ բախտս գուշակիր…

Ի՞նչ կա բաժակում քո այդ սնամեջ՝
Մեկ է ինձ համար, եղած ու չեղած…
Անսքող, խոցող հեգնանքների մեջ
Մի պտղունց կյանքով գոյաքա՞ղշ եղա…

❒

Ծիծեռնակաթև ու սաթ իրիկուն,
Անհայտին միտված հայացք հանցապարտ…
Նետիր ուսերիդ՝ նվաղ ու նկուն,
Վերջին աղոթքիս ծվեները պաղ…

Անդարձ հեռացող ստվերներ անձև,
Դեպի անհունի գիրկն անհատակ…
Ա՞խ, մալաքիտե արցունքներն են ձեր
Վերջին աղոթքիս մրմունջները տաք…

❒

Իմ հեռացած սերերի մեջ
Միակը, որ ինձ չէր սիրում,-
Մնաց տառապանքս անվերջ…

Տարիների թավագլոր
Գետը նրան տարավ հեռու,
Ուր մշուշ է տարին բոլոր…

Հասնում է ինձ մի ձայն լացի,-
Տեսնես ո՞ւմ է հեռուներում
Նա որոնում…ինձնից բացի:

❒

Ա՜խ, ոգու, մտքի սով հոգիների
Այս գորշության մեջ չոր ու ամայի,
Իրարանցման մեջ հացկատակների
Ես նախամարդու ճի՞չն եմ հմայիչ…

Այս խառնամբոխի ճիչերի միջից,
Ուր հայտնվել եմ ես ակամայից,
Փորձում եմ որսալ բա՞ռն այն առաջին,
Որ մի օր Ադամն ասաց Եվային…

ԲԱՅՑ ՀԱՐՅՈՒՐ ՀԱԶԱՐ ԱՆԳԱՄ ԷԼ ԿԱՍԵՄ

❒

Նեղ արահետին՝ հուշիկ մի քայլ,
Հուշի երամ է վեր թևածում…
Եվ արթնանում է ամեն մի քար,
Շառագունում են արտ ու ածու:
Հեռուն՝ թափանցիկ, երկինքը՝ պերճ,
Աչքիդ պատրանքն է հին օրերի…
Ա՜խ, իմ խցանված ունկերի մեջ՝
Արտույտի կանչ է ու լորերի:

❒

Չընդունված զոհեր՝ մատուռներում պաղ,
Մեղսաքավության խոսքե՜ր անիմաստ…
Ապաշխարանքդ ի՜նչ արժե, ավա՜ղ,
Իմ հավերժական կականի՜ դիմաց…
Արյուն-արցունքո՜վ լեցուն սիրտ ու խոց,
Աղե թրջոց է երակին իմ բաց…
Ի՜նչ ապաշխարանք, մոմի լու՜յս ու բո՜ց՝
Իմ հավերժական ականի՜ դիմաց…

❒

Բաց-կապույտ երկինք՝ անծիր ծիրի պես,
Վառվում է աշնան գույների բոցում
Մի երկիր, որ ինձ տրվում է որպես
Տառապանքի ու սիրո՞ մարմնացում…
Ուր մաքառում են հույսն ու հավատը՝
Օծված մեռոնով սուրբ ավազանի,
Եվ ուր…համբույրի տե՞ղ չէ ճակատը,
Այլ նախատինքի՞ ու խարազանի…

❒

Կարեկցանքից զուրկ, համբերանքի գունդ,
Ջսպանակված ցավ՝ ելքի դռան գոց,
Խլացրած ճի՞չ, ոտնահարված հու՞նդ
Կարկտահարված արտից ալեկոծ…
Խորտակված պատրա՞նք, մոխրացած ցնո՞ղք,
Թափուրված և սի՞րտ, և հոգի ցավո՞տ,-
Սև-սքեմակիր ու խելացնո՞ղ,
Կորսված խղճի աշխա՞րհ հանցավոր…

❒

Հեռացողների հայացքնե՞ր տրտում,
Մոռացվողների ստվերնե՞ր հուշիկ,-
Մնացողներին հազի՞վ նկատում
Եվ նայում են դեռ…որպես օտարի:
Ապշահա՞ր, կարկա՞մ, նաև մոլորա՞ծ,
Քամահրանքից խոցված առավել,
Կարծես ընկել եմ մի այլ մոլորակ,
Ուր հայտնվել եմ առանց հրավեր…

❒

Երկինք գորշավուն ու անհրապույր,
Փշե ցանկապատ՝ վանդակե դռնով,
Հանկարծ մեգի մեջ ես դեմ եմ առնում
Հանգած խարույկի ու մգլահոտի…
Ծնոտը հոգնած թաթերին դրած,
Կարծես աշխարհից մի պահ վերացած,-
Սառն, օտարոտի նայում է վրաս
Շունն իմ հոգնատանջ ու շա՞տ ծերացած…
Հոգուս մեջ՝ խամրող գույներ են անցոլք,
Ոտքիս տակ՝ խոնավ խաշամ անշշունջ…
Պաղ մշուշներում՝ կոճղեր լողացող,
Ցանկապա՞տ, ցցե՞ր, հարդե բո՞ւյն ու շո՞ւն…

❒

Աշնան եղյամ ու խաշամ է նստած
Ճեմուղիների նստարաններին,
Եվ զբոսայգում մի համատարած
Ամայություն է, լռություն խորին:
Համր ու խլացած ծառ ու ծառուղի…
Իրենց երեկվա փառքը հիշելով՝
Պատվանդաններն են լքել գիշերով
Եվ բրոնզացած կուռքերն անցողիկ…
Հանցանքի դիմաց՝ արած ու չարած,
Առանց հատուցման խոսք ու հնչյունի,-
Ժամանակն ավլում հետքերը նրանց
Եվ…դո՞ւրս է մղում հիշողությունից:

❒

Ոչ ոք չգիտեր, ոչ ոք չի տեսել
Ոչ երազի մեջ, ոչ էլ արթմնի…
Բայց հարյուր հազար անգամ էլ կասեմ,
Որ համբուրել եմ ծավի՜ շուրթերդ…
Ոչ ոք մեզանից չի կանխատեսել
Ոչ տարանջատում և ոչ էլ խզում…
Բայց հարյուր հազար անգամ էլ կասեմ,
Որ համբուրե՜լ եմ ցավի շուրթերդ…
Եղել է և կիրք, և եղել է սե՜ր,
Եվ…խորտակվել են պատրանք ու ցնորք,-
Բայց հարյուր հազար անգամ էլ կասեմ,
Որ համբուրել եմ դավի՜ շուրթերդ…

ՄԱՆԴԵԼՇՏԱՄԻՆ

Թե ինչ դարերում հարություն կտաք

Մեզ չի հասկանա օտարերկրացին:
Վահան Տերյան

Հավերժին պարզած երգեր ու վերքեր,
Լիքը, լեփ-լեցուն տողեր արնաներկ,-
Ո՞վ մեզնից, արդյոք, կփորձի հերքել,
Թե նա մեր հոգուց չթափանցեց ներս…
Նա եկավ ավեր մեր երկիրն այցի,
Խոցվեց մեր ցավից որպես յուրային,
Հասկացավ մեզ այդ օտարերկրացին,
Ավելին, քան մե՞նք…կհասկանայինք:
Մինչ ցավը՝ որպես վերք, կխորանար,
Բյուրեղ օքրայից կառներ գույն ու ներկ,
Եվ ներշնչանքը մինչ կամբողջանար,-
Նա ներշնչա՞նք էր արդեն տեղով մեկ:
Սիրեց մեր լեզուն՝ «վայրենի կատու»,
Որ կուլ չգնաց օտարի մուժին,
Տենչաց՝ չլինենք, որ էլ հարկատու,
«Վստահ մեր թաթի նախնական ուժին…»
Եվ տապակվելով մեր վշտից անձուկ,
Քար ու կրի մեջ, տապի մեջ կրակ
Նա Արարատից աղերսեց՝ ձյո՞ւն, ձյո՞ւն,
Եվ ձյունը հալվե՞ց շուրթերին նրա…
Եվ հեռանալով Հուր-Հայաստանից՝
Նա մի նախնական բնազդով զգաց,
Որ էլ չի՞ նայի՝ աչքը կկոցած,
Արարատ լեռան կապույտ վրանին…

ԻՆՔՆԱՄԱՔՐՈՒՄ

Աշուն է դեղին հեղեղատից դեն,
Եվ ձորալանջի զառիթափն ի վեր
Թփակաղնուտն է բոցով բռնկվել՝
Ինքնահրկիզման որպես հրավեր…
Կաղնիներ վերձիգ ու արքայական,
Բոխիներ՝ իրենց խշշոցով անվերջ,
Ճակատագրի դեմ ու հանդիման,
Մեռնող խաշամի բուրումների մեջ…
Ինքնամաքրում է, քրտինք ու հրկեզ
Արցունքներ զղջման, ցավի մորմոքում,
Երբ քո մարմինն էլ տնքում է, ինչպես
Կոճղահան արվող անտառն է տնքում…

❒

Կայծակը զարկեց սրաշեղբերով,
Եվ շառագունեց դեմքը մացառի,
Մի խուճապ անցավ արահետներով,
Քամին ներխուժեց խորքն անտառի:
Ամպրոպը ճայթեց ու անձրև տեղաց
Եվ կաղնիները նիրհից արթնացան,
Անտառը շնչեց թարմությամբ չեղած,
Երաշտի տտիպ խանձահոտն անցավ:

❒

Քամին վայր ընկավ իր հոգեվարքում
Եվ կտրեց հանկարծ վնգստոցը թույլ,
Լռեց թավուտը անտառի խորքում,
Ուր պահ է մտել մոշահավը թուխ:
Կաղնիներ՝սգո հանդերձների մեջ,
Ստվերներ ծործոր՝ բացատի վրա,
Ուր հատվող ամեն մի ծառի համար
Թաղումի ծե՞ս է, սուգ ու պատարագ:

❒

Ես արդեն առա թախծի համն անեղծ,
Սքեմակիր եմ, խցի մեջ ու վերջ,-
Մնաց ինքն իր հետ արահետը նեղ
Աշնան թաց օրվա մառախուղի մեջ:
Էլ չեմ մխրճվի խորքը շամբուտի,
Չի քաշի մացառն էլ իմ փեշերից,
Եվ իմ մատներից արյուն չի՞ կաթի
Ցախի, մասրենու, մոշի փշերին…
Կորավ խնդությունն անցած օրերի,
Թափառումների հրճվանքը-հաճույք,
Հիշողությունը թախիծ կբերի
Իմ սրտին, որտեղ խռովքն է աճում…

❒

Արցունքոտվեցին աչքերս ցավոտ,
Հիշեցի հանկարծ պատերով իր հաստ
Մեր տունը հեռու, հեռու-հեռավոր
Մշուշների մեջ սուզվող առագաստ:
Եվ այս աշխարհում՝ որբացած ու հեգ,
Պղտորվեց հոգիս ու խառնվեց մութին,-
Ա՜խ, չկար մայրս, որ ինձ տո՜ւն կանչեր,
Ինչպես մանկության իրիկնամուտին:

❒

Մի ամբողջ կյանք էր՝ կրքեր ու վերքեր,
Թռիչք ու անկում, հույս ու երկմտանք,
Եվ…ի՜նչ խաբկանք էր՝ երգեր իմ, երգեր,
Թե ինձ դարերում հարություն կտաք…

…ԵՎ ԵՍ ՍՐԲԵՑԻ ՍՈՒԳԸ ԻՄ ԴԵՄՔԻՑ

1.

Մեր ժամանակը…
Հավուր պատշաճի՝խոսել ենք երկար,
Համը հանելիս ասել են՝ կարճի՞ր,-
Ընդդիմանալու ոչ մի հարկ չկար…

Հավուր պատշաճի սիրել ենք, ատել,
Պահել ենք ստույգ մեր տեղը հարմար՝
Նախագահության սեղանի հետև՝
Հարյո՞ւր մոմանոց ջահի տակ անմար:

Գաղափարները հավուր պատշաճի,
Կարգախոսները՝ճշմարտանման,-
Ծիլի պես մատաղ՝ ելի՞ր ու աճի՞ր,
Կար և միջավա՞յր, և հո՞ղ ու պայման…

Նայել ենք մահվան դեմքին անվեհեր,
Կտրել օվկիաներ, ծովեր ալեկոծ,
Կերտել քաղաքնե՞ր, ավաններ՞ր, գյուղե՞ր,
Եվ տիեզերք ենք նվաճել աստղազօծ…

Ծափահարել ենք բուռն ու հոտնկայս,
Անակնկալիք, մի՞տք չկար հետին,
Գլխից վեր պահած բաժակ՝ ի փա՞ռս
Տոնախմբության, օրվա բանկետի…

2.
Քեզ քիչ էր տրված կյանքում այս երկար,
Կարճատև էին պահերը սիրո,
Դրա փոխարեն՝ սկիզբ-վերջ չկար
Տառապանքներին…երկնային տիրոջ:

Զրկանքների մեջ ու տագնապների
Հոգս ու կարիքի ծիրի մեջ անհուն,-
Փայփայում էիր քո հույսը՝ինչպես
Տոնական օրվա զգեստն են պահում…

Երազնե՞ր, հույզե՞ր, հույսե՞ր ցանուցիր
Եվ…հատնում վերջին առկայծո՞ղ լույսի,-
Մխիթարվիր գեթ՝ ինչպե՞ս խամրեցին
Երեկվա կուռքերն ու փառքերը սին…

3.
Ամեն ժամանակ քեզ համար մեկ էր,
Կույր ու խուլ չէիր, ոչ էլ մունջ ու լալ,
Շապիկդ տվիր նրան, ով մերկ էր,-
Ի՞նչ խիզախություն՝ոչինչ չափսոսալ…

Երանության մեջ խոնարհ քայլել ես,
Թեպետ և հարուստ, ո՞չ թե մուրացկան,
Եվ այն գանձերից, որ շռայլել ես՝
Հիմա ափիդ մեջ մի գրո՝շ չկա…

4.
Ամեն ինչ կանցնի, և մահը նույնպես,
Սուտը, կեղծիքը, զառանցանքը սին,-
Ես սպասում եմ անհամբե՞ր այնպես
Հարության լույսին ու արշալույսին…

Թե եղանակներն ինձ չխոտորեն,
Մարտյան ցրտերը չսպառնան մեկեն,-
Կելնեմ ապրիլյան օրվա փոխարեն
Եվ…իմ տաք շնչից ծառե՞ր կծաղկեն:

5.
Մեր ժամանակը հասավ ավարտին,
Եվ ժամը հնչեց՝ էլ ի՞նչ հապաղում.
Քո դեմքին գունատ, դալուկ ճակատին
Արևի վերջին շունչն է նվաղում:

Մենք հեռանում ենք իրարից անվերջ,
Անհետանում ենք կարծես թե ծխում,
Եվ մայրամուտի ստվերների մեջ
Անէանում է քո տեսքը տխուր…

Եվ հեռացումը չունի փրկագին,
Հավաստի կորուստ՝ երբևէ չեղած,
Անհունի ավար՝ քո՞ւյր իմ տրտմագին,
Սեր իմ՝ մա՞յր մտնող արեգակ, ավա՞ղ…

6.
Ո՞ւր են կրքերը՝ հրից մոխրացան,
Ո՞ւր է արցունքը՝ ցամաքեց ակում,
Ո՞ւր են հույսերը՝ եղան ցիրուցան,
Ո՞ւր է արյունը՝ պաղե՞ց երակում…

Ո՞ւր են վարսերը՝ խիտ ու հրաշեկ,
Ո՞ւր է հասակը՝ շիկ ու տիրանուն,-
Այն հանդերձները վաղո՞ւց մաշվել են,
Որ կարված էին սիրո ծիրանուց…

7.
Ո՞վ էր – վայելեց սերն իր բախտավոր,
Ո՞վ էր – փոթոթվեց կարոտի հրին,-
Մենք՝ նետված տարբեր ափեր հեռավոր,
Մեր սերը՝ կանթեղ թունելի ծայրին…

Բախտն ո՞ւմ էր երես տալիս իր խաղում,
Անտեսած նրա մեղքն աղաղակող,
Եվ նույնիսկ նրան, ով կո՞ւյս չէր վաղուց,-
Շուքով տուն տարան՝ թագ ու պսակով…

Ում համար սերը՝ խրախճա՞նք ու խա՞ղ,
Ում համար ցա՞վ էր՝հոգի ավերող,-
Ո՞վ գիտե և ո՞ւմ մեղքով էր, ավա՞ղ,
Որ մենք…անջատվա՞ծ էինք դարերով:

8.
Արհավիրքն անցավ, մրրիկն ափնեկոծ,
Կյանքն օրվա բարուն ընդառաջ գնաց
Եվ արդեն խաղաղ ընթացք է հունով,
Որ էլ ափերից չի՞ ելնի բնավ…

Բացեց անհունն իր ծիրը խորունկ,
Մոր նման ժպտաց փրկված մի երկիր,
Եվ ես սրբեցի սո՞ւգը իմ դեմքից
Դիմափոշու պես ու արնաներկի…

Օ՜, ՄԱՅՐ, Օ, ԴՈՒ՝ ԿԻՆ

Երկրպագության իմ ծեսն այսօր և՝ահավասիկ
Ես բերում եմ քեզ: Իմ սիրտը՝ինչպես արև մի հրատ,
Որպես Տիրամոր՝ իմ օրհնանքը քեզ, արցունքն անբասիր,
Որպես հատուցում քո տագնապների,
Ու զրկանքների համար՝ քո կրած:
Օ՜, մա՜յր, օ, դու կի՜ն, օ, գեղեցկության տիպար անմեկին,
Եվ սիրո ակունք, որ սկիզբ ունի ու չունի հատնում,-
Անահի՞տ կոչեմ, Աստղիկ դիցուհի՞, թե՞ պարզապես կի՜ն,
Որ ամբողջովին հոգի է ու սիրտ,
Որ ողջակիզվում մասրենու նման, ցավը չի՜մատնում
Աշխարհին այս բիրտ:

Օ, մա՜յր, օ, դու՝ կի՜ն,
Կերտվածք հանճարի,
Որ ինձ թվում է, թե տառապանքի քանդակ ես ու սյուն,
Աստծո տաճարի:

Օ, մա՜յր, օ, դու՝ կի՜ն
Որ արևի հետ արթնանում՝ սակայն անհոգ քուն չունի,
Պահապան ոգի հոր ու զավակի,
Ճակատագրի տիրուհի անգամ,
Որ վերծանում է գաղտնիքն անհունի…

Օ՜, մա՜յր, օ, դու՝ կի՜ն, օ, աստվածային հրաշք-հայտնություն,
Օ՜, դու՝ Մեծամայր՝ տիեզերական առկայծումներով,
Վաղորդյան շող ու շաղի մաքրություն,
Թեպետ և…անցար դժոխքի բոլոր պարունակներով:

ՀԱՎԻՏՅԱՆ ԽԱՉՎԱԾ
ՄՆԱՄ ՔՈ ՍՅՈՒՆԻՆ

1.
Դատապարտված ենք ճակատագրով
Եվ քմայքներին բախտի՝միշտ գերի,-
Ես ինչպե՞ս փրկեմ քեզ կապանքներից,
Որ դու թևածե՞ս զորեղ թևերով:
Իրավունք տուր ինձ, որ քո անունից
Նախատի՞նք դառնամ, խարա՞ն աններում՝
Աշխարհի ճակտին…նաև դարերում,
Հավիտյան խաչվա՞ծ մնամ քո սյունին:

2.
Քո ցավն իմն է ու վերքը խորունկ,
Դու ամբողջովին ի՞մն ես, ես քոնը,
Եվ ես ո՞չ ոքի չեմ տա անարյուն՝
Քո օրն արևոտ և…օրվա թոնը:
Շնչերակի պես ու զարկերակի՝
Դու ինձ ես տրված վերուստ, էն գլխից,
Որպեսզի շունչդ ներշնչես իմ մեջ,
Որպեսզի արյո՞ւն ներարկես դու ինձ:
Հրկիզված ինձ հետ ու վերընձյուղված
Փշատենու պես ծաղկի՞ր ու բուրի՞ր,-
Կյանքում այս դառն, հոգեվարքում իսկ՝
Խնդությո՞ւն մի այլ, ցա՞վ չունեմ ուրիշ:

3.
Հոգնած և հոգսից, և տենդից օրվա,
Օրվա կեղծիքն ու սուտը հերքելուց,-

Ա՜խ, մենահացից առաջ իրիկվա՝
Ձեռքս չի՜ գնում խաչակնքելու…
Ձախողակ, նկուն և անհաջողակ,
Եվ բեկված՝ինչպես լորի քնքուշ թև,
Փույթ չէ՝ո՜ւմ համար քո սիրտը դողաց,
Մեկ է՝ ո՜ւմ ցավից պիտի աղոթես…

4.
Երազների բույլ ու ցնորքների,
Պատրանքաշաղոտ հովիտ ոսկեղեն,-
Ո՜չ ոք չիմացավ, որ անքննելի
Դու ոգի էիր մի աննյութեղեն…
Ավազի ավար ու քամու տոչոր,
Եվ…այս ոգու սով սահարաններում
Ո՜չ մարմին ունես, ո՜չ միս ու ոսկոր,
Դու մի ափ նետված խեցի՜ ես փխրուն…

5.
Անառարկելի՝ ինչպես երդում,
Անխուսափելի՝ որպես դիպված,
Որպես պատահար՝իմ գլխին դու
Սրի պես, քրի՜նման կախված…
Անողորմ՝ ինչպես ստվեր ահի,
Անիմաստ՝ որպես խելացնոր,-
Այսօր չէ, վաղը թե պատահի
Անխուսափելին…սկի՜զբ է նոր:

6.
Կարոտախտի երկի՜ր, կարոտախտի՜,
Ուր վերադարձ չկա վերադարձի,
Դու՝ կորուսյալ-անցյալ առավոտի

Ափսոսանքի ծխում՝ մուժո՞ւմ անծիր…
Կարոտախտի երկի՞ր, կարոտախտի՞,
Չնաշխարհիկ ու պերճ իմ Կրետե,-
Ինչպես արև հրշեջ մայրամուտի՝
Գլորվեցի՞ր մի սև լեռան ետև…

7.
Ոչ մի հարկ չկա նվաստանալու,
Երբ ծնկերիդ մոտ իջնում եմ ծունկի,
Եթե հի՞մք ունեմ խոստովանելու
Եվ սիրո համար, և…դա՞ռն արցունքի:
Մեզ բաժին ընկած ճակատագրի
Տառապանքի դեմ, որպես հատուցում,-
Գեհենի միջով անցած ու հրի,
Ես-ամբողջովին մոխի՞ր ու արցո՞ւնք:

8.
Շնորհ արեք ինձ մի փունջ մանուշակ,
Փույթ չէ՝ մի օրվա թե կյանք ունենա,
Մի ժպիտ՝տա՞ք ու միանշանա՞կ,
Որ նաև ուրիշ հասցե չունենա…
Ինձ շնորհ արեք ամպի մի ծվեն,
Որից ցող առներ իմ մի բուռ ածուն,
Որպեսզի ես իմ կրակն արծարծեմ՝
Ինձ շնո՞րհ արեք թեկուզ մի կայծի…
Զարկվածիս համար, նաև զրկվածիս,
Շնորհ անեիք թե հավքի մի թև,
Թեկուզ վիրավոր լինի դիպվածից՝
Ես կունենայի երկի՞նք ու եթե՞ր…

9.

Օրերի երթից
Փոշի է նստում ճամփեքի վրա,
Երկինք է ճաքում որոտ ու շանթից
Եվ հոգինե՞ր են մխում անկրակ…
Դժվար ե՞րթ, հոգնած մարմի՞ն ու մկա՞ն,
Եվ…վերջալույսի մուժի մեջ անցոլք
Առին դեմ առած հողվո՞ր ու լծկա՞ն,
Շնչերակի մեջ՝ ցավը նվացող…
Խաչափայտ ցցեր՝ նահատակության,
Սքեմակիրներ՝ սև ու արնացոլք,
Հայացքներ-աղերս վերի՞ն օրհնության,
Վերջին քավության մորմոքնե՞ր խոցող…
Դեպ անէության ոլորտներ մթին,
Դեպի անհունը՝ անծիր-անծրար,-
Օրերի երթից
Փոշի՞ է մաղվում ճամփեքի վրա…

ՆՈՒՅՆ ՔՆՔՇԱՆՔՆ ԵՍ ԲԵՐՈՒՄ ԻՆՁ

1.
Ես անգիր գիտեմ տառապանքների դասերը հիմա,
Սիրո պատմության սև ու սպիտակ թերթերն էջ առ էջ,
Եվ ես չեմ ուզում քո խռովքներից անմասն մնալ,
Չէի ցանկանա նորից տագնապներ հարուցել քո մեջ:

Քնիր, սիրելի՜ս, ամեն ինչ խաբկանք ու սուտ էր հիմար,
Մեր քունքերի մեջ եղյամ է սառը, ձյու՜ն է հերվա,
Թող լուսնին հանգիստ, ու աստղերը ջինջ թող այլոց համար
Հորինեն արդեն հեքիաթներ հազար ու մի գիշերվա…

2.
Ոչի՜նչ, ոչի՜նչ չի փոխվում՝
Նույն սիրտն է իմ, նույն հոգին,
Ուր սև ամպն է արտասվում՝
Ու հեկեկում տրտմագին:

Եվ օրերից երբ մի օր
Դեմս ելնես դու նորից,-
Ինձ կթվա՝ մեղմօրոր
Նույն քնքշա՜նքն ես բերում ինձ…

3.
Իզուր ես այդպես դու շառագունում,
Փորձում իրարու բերել ինձ ու քեզ,-
Մինչդեռ երբեմնի շքեղ պատանու
Պարզ հիշեցումն ու նմանա՜կն եմ ես…

Հաճելի խաբկանք՝ կարճատև մի ծես,
Չէ՞ որ մեր ժամը վաղուց է հնչել,-
Մենք հայտնվել ենք, քույր իմ, պարզապես
Իրականի ու պատրանքի՜ միջև…

4.
Վաղուց պիտի լռեին տագնապներս հոգեմաշ,
Խլանային կանչերս՝ արձագանքներ չունեցող,
Աղոտանար դեմքդ ծեր հեռուներում միգամած,
Ուր չի՜ հասնում այլևս իմ արցունքը որպես ցող…
Մթագնեց արևն իմ, մարեց վերջին շողն հուսո,
Փայլատակում է վրաս մահվան սուրսայր գերանդին,
Բայց թափառիկ իմ հոգին քե՜զ է փնտրում մինչ այսօր,
Ո՜վ հեռավոր քույր՝ իմ սեր, անվախճանից էլ անդին…

5.
Ամեն ինչ այնպես պիտի ընթանար,
Որ կյանքս հատներ ու դարը անցնող,
Վերջանար այնտեղ ամեն մի հնար,
Ուր մարմին չառներ երազ ու ցնորք…

Օրերի շղթա և արցունքաչափ
Մորմոքնե՜ր ու ցավ…Հոգի իմ անհաս,
Երբ աշխարհն այսքան և՜ բիրտ է, և՜ չար,-
Էլ ինչո՞ւ պիտի հեկեկաս ու լա՜ս…

ՆՎԻՐՈՒՄՆԵՐ

1.
Գիշեր ու լուսին, աստղեր անհամար
Կապույտ պաստառին երկնակամարի,
Ես աղոթում եմ նորից քեզ համար,
Որ սիրո հուրը քո մեջ չմարի…

Գիշեր ու լուսին, դեռ արթուն եմ ես,
Պատուհանիս տակ վարդեր են տրտում,
Քո կարոտն իմ մեջ խլրտաց այնպես,
Ինչպես աղբյուրն է գարնանը խայտում…

2.
Դու առանց այն էլ պատրանք ես եղել,
Երազ անցողիկ, հեքիաթ հմայիչ,
Եվ ո՞ր քամին է նորից ինձ հղել
Քո տեսիլքը սուտ, որ ինձ խնայի…

Նույն օրն ու ժամն է ու վեհարանի
Անդորրն անխախտ և հանդիսավոր,-
Դա՜ռն է խորհուրդը, համն իմ բերանի,
Աղոթք-մրմունջը շուրթերի՜ս ցավոտ…

3.
Պաղ շուրթեր, դեմքի կնճիռներ համակ,
Խիտ քունքերի մեջ՝փաթիլներ ճերմակ,
Երկչոտ մի հայացք անորոշության,
Միտված անհունին ու անհայտության…

Անքնության ճիչ, տագնապներ անվերջ,
Գիշերների մութ հյուսվածքների մեջ՝
Վախվորած աչքեր…Անփայլ, աներես
Միջանցիկ քամի, ո՞ւմ ես կանչում ներս,
Ծերության՞նն արդյոք, օ՜, դու՝ անիրավ…
Ցուրտ է՝ բրդե շա՜լ գցեք ինձ վրա:

4.
Ինձ համար մեկ է, թե ուր են թռչում
Այս աշնանային օրերը թախծոտ,
Թե ուր կտանի քամին հալածող
Գունաթափ, դժգույն տերևների չուն…

Ինձ համար մեկ է, սատանա՜ն տանի,
Տաք ու պաղի մեջ ես չեմ երկնչում,
Երբ այս տարիքում անգամ տակավին
Հոգիս սիրո բուք ու տա՜պ է տենչում…

5.
Ես մոռանում եմ անունդ արդեն,
Որ մի ժամանակ վարդ էր շուրթերիս,-
Մեգի շղարշ է կախված եթերից,
Եվ…քունքերիս մեջ ձյո՜ւն է արծաթե:

Հատնում է օրը խաղաղ ու անչար,
Աղոտանում են գույներն իմ հոգու…
Անցածի համար ես չեմ մորմոքում,
Բայց ափսոսո՜ւմ եմ արտասվելու չափ…

Երբ գիշերն իջնի հուշիկ, անաղմուկ՝
Ես տագնապներս ինձնից կվանեմ,
Կգամ ծնրադիր քեզ խոստովանեմ,
Որ հորինվա՜ծք չէ այս սերը տամուկ…

6.
Փոքրիկ մի տնակ՝ հաճելի ու տաք,
Աշնան գունագեղ սաղարթների տակ,
Եվ թոն է կաթում քիվից տնակի
Լուսամուտների պաղ շրջանակին:

Կուչկուչատում է ճնճղուկ մի ճստան՝
Պատի ճեղքի մեջ գտած ապաստան…
Եվ այդ տնակում՝ անզարդ ու անշուք…
Դու թագուհի ես, ես՝ արքա, անշուշտ…

7.
Ամեն ինչ անցավ հապճեպ ու արագ,
Այլ է հիմա կյանքն ու եղանակը,-
Ա՜խ, հնար լիներ, Աստված երկնառաք
Վերադարձնե՞ր ինձ քո նմանակը…

Որպես կարեկցանք մեկներ իր աջը,
Ետ բերեր մեր սերն ու բախտը միակ,-
Ինձնից ետ առած՝ տար ինձ այն խաչը,
Որով խաչվեցիր դու մի ժամանակ…

1990-1997

❒

Ձեռքդ դիր ճակատիս՝ որպես բալասան,
Թող ապաքինվեմ ցավից այս անել,
Տե՞ր իմ, երկնային, ինչո՞ւ ես, ասա,
Ինձ տառապանքի ցցերը հանել…

Ճակատագիրը երկնքից առկախ,-
Ոչ մարմին ունի, ոչ խիղճ ու ոգի,
Անարդարությունն աշխարհում, ավա՜ղ,
Ավերում է դեռ և՛ բախտ, և՛ երկիր…

❒

Ճակատագիրը տրվում է վերից,
Եվ քմահաճ են խաղերը նրա…
Բայց ընկրկումը քո ես չեմ ների
Ո՛չ տիրոջ առաջ, ո՛չ երկրի վրա:
Եվ ամեն մի ժամ, ամեն մի վայրկյան
Թող միտքդ դառնա քո սրտին համառ,
Թե հերի՜ք է քեզ մարդկային մի կյանք,
Դժվարին մի բախտ փրկելո՜ւ համար…

❒

Անտանելի է լինել ոխակալ,
Բռունցքը սեղմած պահել գրպանում,
Ատելությունից, նույնիսկ հեռակա,
Մարդ դիվոտվում է, քունը չի տանում…

Անտանելի է լինել փոքրոգի,
Մանրախնդիր է դարձնում և ուտիճ,
Մոռացիր դրանք, դու և իմ հոգին,
Եվ ազնիվ կավը եղիր բրուտի…

❒

Տվեք համբուրեմ ձեռքերն այն անքուն,
Որ ինձ երբևէ կշոյեն կյանքում…

Թողեք համբուրեմ աչքերն այն ծավի,
Որ անտեղյակ չեն մնալու ցավիս…

Ա՜խ, համբուրեի շուրթերն այն բացված…
Որ կարտաբերեն խոսքերն իմ չասված…

❒

Խփիր ինձ, խփիր, արժանի եմ ես,
Թեկուզ ցից հանիր խեղճ ու կրակիս,
Որ մատնեցին իմ հոգին ջինջ ու վեհ,
Միջակությունների համաճարակին:

Թե ուրիշներին խփես մի անգամ,
Ինձ տասնապատիկ խփիր և քունքի՜ս…
Ոչ նրա համար, որ պատժես այնքան,
Որքան որ դառն է ցավն ամոքիչ…

Խփիր վթարի համար իմ խղճի,
Եվ հոգու, մտքի ծռումի համար,
Եղծումի համար ժպիտի վճիտ
Եվ կուրացումի մրմուռի համար…

Խփիր ինձ որքան հարկ է ու հարմար,
Բայց մի հարվածն էլ պահիր քեզ համար:

❒

Դու չես կարծրանում ու չես դառնում բիրտ,
Ցավի մեջ անգամ քնքշանում ես, սիրտ,

Քեզ ինչ կրակի, հրի էլ մատնում,
Բոցկլտում ես միշտ ու չունես հատնում,

Լույս դառած վառվում մոմի պես մթնում,
Դրա մեջ ես քո հանգիստը գտնում:

❒

Փոթորկված ծովն է զարկվում ափերին,
Բախվում է նավը խենթ ալիքներին:
Իսկ նավի վրա խուճապ է, տագնապ,-
Ո՞վ է սուզվելու, ո՞վ կհասնի ափ…
Եվ նավի վրա՝ մաքառում ու ճիգ,-
Քմահաճույք է բախտի ու խղճի,
Եվ միտք է անում երկինքն անհաս,-
Կփրկե՞ն նավին կայմ ու առագաստ…

❒

Սևակնած երկիր, երկինք սևակնած,
Հեռաստան անծիր, անթափանց ու մութ,
Եվ ճնշում է մեր հոգին մթամած
Անորոշությունն խարխափող ու բութ…

Ճակատագիրն անընմբռնելի,
Հանելուկ է դեռ մեր բախտը խստիվ,-
Մենք ակամայից սահում ենք լռին
Դեպի քաոսի գիրկը վերստին…

❒

Վանում են ինձնից խոհերս խավար,
Բացում եմ դեմս պատուհան հույսի,
Որ մոռանամ ես ավեր ու ավար
Այս գիշերի մեջ մութ ու անլուսին:

Եվ ամոքում եմ տառապանքներս
Մարմրող մոմի բոցի մեջ, լույսի,
Բայց, այնուհանդերձ, մղձավանջներս
Վրա են հասնում գիշերվա կեսին:

Կրակահերթեր՝ փողոցից այն կողմ,
Գնդակներն, արդյոք, ո՞ւմ են խոցոտում,-
Խուժում է հոգիս ցավը որպես հողմ,
Ուրվականներն են սիրտս հոշոտում:

Եվ միտք եմ անում գիշերում այս պաղ,
Ասա, երկնային, ինչպե՞ս իմանամ,
Թե ո՞ւմ բիրտ ոգին, ո՞ւմ ձեռքը, ավա՞ղ,
Արցախս այսպես դարձրեց արնաքամ…

❒

Չարի շունչ կա պահ մտած դարանում,
Օտար ոտնահետք՝ նեղ արահետին,-
Ահից եղնիկիս քունը չի տանում,
Աչքը չի կտրում հովիվս հոտից…

Ձմռան բքի մեջ ու սառը շնչից,
Ինչ էլ լինի, սիրտ, դու մի համբանա,-
Միրհավ իմ, կանչիր, միրհավ իմ, կանչի՞ր,
Միրհա՞վ իմ, կանչիր…տեղդ իմանամ:

❒

Արցախաճիչ է և արցախականչ…
Բայց վերևներում՝ համր, խլականջ,
Չեն լսում սֆինքս տերերը երկրի
Մռունչը հոգու փլատակներից:
Մեր տառապանքն ու տվայտանքը մեր
Գոնե հասնեին քե՞զ..ամենայն Տեր:

❒

Այս ի՜նչ տարաժամ է,
Մթնժոր է խոնավ,
Մոլեգնում է դավը…
Գտնենք ելք ու հնար:
Կայծակներ են խաչվում
Իմ Արցախի ճակտին,
Փակուղու մեջ սուզվել՝
Դեմ ենք առել պատի…
Տարաժամին այս բիրտ
Հոխորտում է մահը,
Ինչ էլ լինի, իմ սիրտ,
Մեր միրհավն է ցավս:
Հավատք է առ Աստված
Մռավա սեգ սարս,
Հոնքերն իրար տված
Դիզափայտն է ցավս,
Որպես վերուստ տրված
Ճակատագիր ու բախտ՝
Դարեր դիմակայած
Գանձասա՜ռն է ցավս:

Ա.ՍԱԽԱՐՈՎԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Բացախոսությունն ի՞նչ էր խոստանում…
Մի՞թե կարթի սև խայծ էր, Աստվա՞ծ իմ,-
Խաչերի միջով այս ո՞ւր են տանում
Խաչերից մեկի վրա խաչվածիս:

Մի՞թե Գողգոթա, մի՞թե Գողգոթա,
Ինչպես Հիսուսին, որ միածին էր,
Բայց ի՞նչ երաշխիք ունի հարության
Ճակատագրով դատապարտվածս…

❒

Դու ոչ վերջինն ես, ոչ առաջինը,
Գիտեմ, որ հարթ չէ ճամփադ զառիվեր,
Ըմպիր մրուրը քո գավի միջից
Եվ…գոհ մնա, որ մաքառում ես դեռ…

Հիշիր, որ հեշտ չէ և խաչ կրելը,-
Մինչև քո ձեռքն այդ խաչն էր հանում,
Պիղատոսներն ու փարիսեցիները
Քանիսի՞ն էին Գողգոթա տանում…

❒

Մարդն արարվել է Աստծո պատկերով,
Որ ապրի իր իսկ Տիրոջ պատվերով,
Որ այնպես անի՝ բարին շատանա,
Հրեշտակ լինի, ո՞չ թե սատանա:

Խախտվել է, Տեր իմ, պատվիրանը քո,-
Ընչաքաղց է մարդ ու կույր է մտքով,
Մի ձեռքը խաչիդ, իսկ մյուս ձեռքով
Հափշտակո՞ւմ է մասունքները քո…

❒

Բռնություն է մի բիրտ,
Ոնց դիմանաս, իմ սիրտ:

Հոգեվարք է, ոճիր,
Դու՝մաքառում ու ճիգ…

Վախճան չէ, ո՞չ, թեպետ
Շուրջս՝ավեր, աղետ…

Տուր ինձ մի դաս, որ տար
Գոյության հնար…

❒

Ի՜նչ եմ տանելու ես այս օրերից,
Տենդով բռնկված տարաժամներից:

Մկանի լարում ու նյարդերի՝
Ցնցում է հոգու, սրտի, ջղերի:

Ցնցում է հողի, ու հիմնահատակ
Աղետ է, ավեր, փլուզում է տան…

Ես ոչինչ, ոչինչ էլ չեմ երազում,
Այս տարաժամի վախճա՜նն եմ ուզում…

❒

Չարաշահում են անունդ անվերջ,
Շահարկում են մերկ, նենգ ու ջղային,
Բայց ո՞վ է, Արցախ, մխում ցավիդ մեջ
Քո փրկության սուրբ զոհասեղանին…

…Այնտեղ, ուր խաղ է, խաղի մեջ չկա՜մ,
Այնտեղ, ուր ցավն է, ցավիդ մե՜ջ եմ ես…

ԱՐՑԱԽ

Ես գրում եմ անունը քո...
Պոլ Էլյուարի նմանությամբ

Ճամփիդ վրա ու կածանիդ,
Քարափիդ ու ծիածանիդ,
Բարդուդ վրա երազանքոտ՝
Ես գրում եմ անունը քո…
Քո թևավոր երազների
Եվ հույսերի թոթովանքով
Առավոտիդ վրա բացվող՝
Ես գրում եմ անունը քո…
Քո վանքերի խաչքարերին
Եվ զանգերին՝ ցավ ամոքող…
Արծիվներիդ բաց թևերին՝
Ես գրում եմ անունը քո…
Որպես բարի ճակատագիր
Ու բախտ՝որպես փրկության ծես՝
Քո ճակատի վրա անբիծ
Ես գրում եմ անունը քո…
Մահն ընդունած զավակներիդ
Դագաղների վրա սգող,
Վրեժ տենչող սրտով նորից՝
Ես գրում եմ անունը քո…
Արցունքներիս վրա բուռ-բուռ,
Մորմոքներիս վրա տնքող,
Կրծքիս վրա՝ վշտերի բուն,-
Ես գրում եմ անունը քո…
Առևանգված քո ուստրերի
Եվ վերքերին քո դուստրերի,

Սրտի անհուն տառապանքով՝
Ես գրում եմ անունը քո…
Այգիներիդ վրա անքաղ
Եվ արտերիդ՝ հրո ճարակ,
Եզերքներին քո երկնքոտ՝
Ես գրում եմ անունը քո…
Ռմբակոծված քո շենների
Ու շենքերի վրա փլված,
Վերհառնումի աղերսանքով՝
Ես գրում եմ անունը քո…
Քաջորդիներ ծնող արի
Քո բյուրավոր մամիկների
Պատգամների մեջ առինքնող՝
Ես գրում եմ անունը քո…
Մարդկայնության պաղատանքով,
Կործանարար այս աշխարհի
Անմխիթար խղճի վրա՝
Ես գրում եմ անունը քո…

❒

Բռնագաղթ է, Տե՜ր,
Ցիրուցան է հոտդ,
Եվ սուրբ հոգիների
Ծանր խանձահո՜տ է…

Չարի ձեռքը՝ մեղսոտ,
Հարեհաս ու հաղթ է,
Խղճի խորշակ ու սով
Ու բիրտ բռնագա՜ղթ է…

❒

Կես արթուն եմ ու կես քնած,
Ի՞նչ արեցի և ի՞նչ մնաց,
Ի՞նչ տարան, ի՞նչ թողին տանս,-
Տվեք հարցիս պատասխանը…

❒

Քո ցավի համար ես եմ մեղավոր,
Կսկիծիդ համար՝հազարապատիկ,
Սակայն դու էլ ինձ ներիր, իմ աղվոր,
Ես էլ քո մե՜ղքն եմ ու ցավը պատիր…

Մենք նույն դավից ենք խոցված, վիրավոր,
Եվ նույն սաղրանքով կռվի մեջ նետված,
Անարդարության զոհ ենք, երկնավոր,
Դավադիր ձեռքից փրկիր մեզ, Աստված…

❒

Զարթնում եմ, Արցախ, օրս նույն օրն է,
Հոգուս նույն մրմուռն ու վերքս խորն է…

Ճակատագիրդ դարձյալ մատնում է,
Օրը ցերեկով լույսս հատնում է…

Քո վաղվա հույսով քնելս ո՞րն է…
Երբ էլի ցավիդ խելացնո՜րն եմ…

❒

ԵՍ ԺԱՅՌԻ ՆՄԱՆ ԿԱՆԳՆԱԾ ԵՄ ԱՄՈՒՐ:

Ավ. Իսահակյան

Նետված երախն ահի ու մահի՝
Դավադիր ձեռքից ցավի մեջ եմ ես,
Եվ ինչ էլ լինի, ինչ էլ պատահի՝
Տե՞ր իմ, քո Հոբն եմ, բավ է ինձ փորձես…

Անագորույն է զարկը թշնամու
Այս արհավիրքի ժամին դժնդակ,
Բայց ժայռի՜նման կանգնած եմ ամուր,
Թեկուզ ժայռն էլ փլվի ոտքիս տակ…

❒

Թոնրի մեջ եմ, ինձնից
Ճենճահոտ է գալիս,
Երբ ամեն օր կռվից
Մի նոր բո՜թ է գալիս…
Աստված էլ է մեզնից
Երես թեքում արդեն,-
Մեր սևակնած բախտից
Մահահո՜տ է գալիս:

❒

Թոռանս՝ Մարի-Լույսին

Մարի-Լույս իմ, Մարի- լույս,
Ով թագուհիդ իմ հայոց,
Խավարի մեջ՝ որպես հույս
Ու ճառագիր որպես բոց…

Արհավիրքում այս դժնի,
Աստվածային որպես շունչ,
Միաբանիր մեզ էլի
Մի խորանի, խաչի շուրջ…

Մեզ մի աջ է հարկավոր
Եվ լոկ մի սուր զորավոր,
Որ համբույրով հավատի
Օծեմ, դնեմ ճակատիս…

Չկա այլ ելք ու հնար
Ու փրկության ոչ մի հույս,-
Ո՞ւր ես, հայտնվի՜ր, Մեծամայր,
Մարի-Լույս իմ, Մարի-Լույս…

❒

Մի լիալուսին
Երկնի կամարում,
Լույսի և հույսի
Մոմեր է վառում…

❒
Մռավ սարս՝ վիրավոր,
Էլի ծնկի չի գալիս,
Ա՜խ, միրհավս՝ սգավոր,
Մորմոքում է ու լալիս:

Կուչ է եկել իր բնում
Լորս՝ ահից հալածված,
Ա՜խ, աղվորս չի քնում,
Քեզ ի՜նչ ասեմ, տեր Աստված:

ՔԱՐԻ ՆՄԱՆ

Քարի նման դեն եք նետում,
Հրում մի կողմ ճանապարհից,
Քարի նման լուռ եմ մնում,
Քարի նման սրբավայրի…
Չի՞ լինի, որ մի անգամ էլ
Քարի նման դնեք պատում,
Ժպտայի ձեզ մարդավարի:

ՊԱՐԶ ՄԻ ՕՐՎԱ

Պարզ մի օվա համար եմ ինձ
Պահել անեղծ,
Եվ անբարբառ մի աղոթքի,
Հաղորդության համար մի ստույգ,
Օրհնվելու և օրհնելու
Մի սրբազան պահի համար…
Ո՞ւր ես, հայտնվիր, որ քո անսուտ
Եվ դեռ անխառն հայացքի տակ
Ես աղոթեմ քեզ ծնրադիր…

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Սև սգի մեջ են վերձիգ լեռներդ,
Քարանձավներդ ողբի մեհյան են,
Կուց-կուց արցունքի մեջ են լորերդ,-
Չկա այլևս Համո Սահյանը:

Մի սև ամպ եկել ու փաթաթվել է
Քո արևամերձ Սալվարդի վզով,
Քարափի վրա ուշաթափվել է
Քո վաղնջական մասրենին նազող:

Մշուշի փոխվել ձորերիդ տապը,
Ցողը մյուռոն է դարձել հավատի,
Ուշքի չի գալիս քո Խաչի պապը,
Ինչքան էլ շաղ են ցողում ճակատին…

Դեմս գահավեժ անդունդի ահն է,
Սակայն չի սարսում իմ սիրտը անվախ,
Ինչքան ասում եմ Սահյանն անմա՞հ է,
Չի՞ բացվում էլի ունքամեջն օրվա…

ՀԱՅՐԵՆԻ ԵԶԵՐՔ

Խանձված դաշտերի մգլահոտ ու տապ,
Եվ հրո ճարակ այգիների նիրհ,
Եվ գիշերների լուսնի հայտնություն
Քո տարածքներում՝ անխոհ ու անկիրք:

Մի ահասարսուռ, խորունկ լռություն,
Հեղձուցիչ տապ ու խլություն հուշի,
Եվ միապաղաղ մի ամայություն
Քո տարածքներում՝ երբեմնի արբշիռ:

Ի՞նչ են մտորում քո ձորերի հետ
Սգի մեղեդի աղբյուրներդ պաղ…
Առայժմ չկա ոչ մի ոտնահետք
Արահետներին քո ականապատ:

Մեգ ու միգապատ Հարավ ու Հյուսիս
Եվ չի շիկնում դեռ Արևելքդ թանկ,
Եվ դեռ մնում են հարության հույսին
Նահատակներիդ շիրիմները թարմ…

Արքայավայել, անխոց ու անվերք
Եվ այն երբեմնի հանդերձով քո շիկ,
Ե՞րբ ես հառնելու, հայրենի եզերք,
Այս համատարած ու պաղ մշուշից…

❒

ՅՈԼԱ, ՑՆՈՐՔ, ՆԱԻՐԻ՜…

Վ. Տերյան

Տրտմագին է քո դեմքը լուսե,
Ճակատագիրդ՝ մութ, խճճված,
Սուրսայր սրերի վրա պարզված
Անարատ դու զոհ-երկի՜ր վսեմ:

Դեռ ինչքան պիտի վառեմ, ինչքա՜ն,
Անլույս հույսերս՝ջահեր որպես,
Եվ ինչքան պիտի մնամ դեռ ես
Ցցերի վրա արյունաքամ…

Որպես բոթ, որպես ստվեր ահի՝
Ես տրվում եմ քո հողին հրկեզ,
Որպես Տիրամոր՝ փարվում եմ քեզ
Եվ ծառանո՜ւմ եմ ընդդեմ մահի…

Օրերում այս բիրտ ու անխնդուն,
Ես ինչպե՞ս վանեմ ահը քեզնից,
Ես ինչպե՞ս հառնեմ ինքս ինձնից
Ու բացվե՜մ որպես փրկության դուռ…

Ես, որպես մի հունդ, նետված հերկիդ
Ակոսների մեջ՝ արյամբ ոռոգ,
Որպես հարության աղոթք-աղերս,-
Ցոլա, ցնորք իմ, խոցվա՜ծ երկիր:

ԻՆՉ-ՈՐ ՏԵՂ

Ինչ-որ տեղ ոտքդ դեմ առավ քարի,
Ինչ-որ տեղ ճամփիդ՝արևը շողաց,
Ինչ-որ տեղ մեկին սիրտդ բաց արիր,
Իսկ նա՝ տմարդի, հոգուդ հե՞տ խաղաց…

Ինչ-որ տեղ ճամփան քո մոլոր գնաց,
Եվ ինչ-որ մեկի՝ աչքը ջո՞ւր դառավ,
Ինչ-որ կանչի դեմ ունկդ խուլ մնաց,
Ինչ-որ տեղ մեկը ցավդ ներս առավ…

Ինչ էլ որ լինի՝ պիտի տեղ հասնես՝
Կանխորոշված է վերից ու վարից,-
Ինչ-որ տեղ, անշուշտ, նախախնամ ես,
Ինչ-որ տեղ՝գուցե դիպվածի՞ն գերի…

ՆՈՐԵԿՆԵՐ

Հրանտ Ալեքսանյան

Հախուռն՝ ինչպես գարունն անզուսպ,
Որ գրոհում է գետերի հունով,
Ձեր կապանքներն ու կապերն եք խզում
Մեր անցյալի հետ՝ դառն ու թունոտ…
Այնպես անզիջում, այնպես չներող,
Ինչ-որ տեղ որպես նախատինք սաստիկ,
Անխուսափելի հեղեղումներով
Բերում եք դուք ձեր երգը հավաստի…
Եվ մաքառելով կրքոտ ու հրկեզ,
Հերքելով և՛ կերպ, և՛ կեղծիք, և՛ սուտ,
Գիտեմ՝երբևէ կբերեք և մեզ
Ձեր կարեկցանքի նշխարնե՛րը սուրբ…

ԵՍ ԱՅԴՊԻՍԻՆ ԷԼ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՄ ՔԵԶ

Տրտմագին՝ որպես մորս դեմքը հեզ,
Որ նայում է մեզ սև շրջանակից,-
Ես այդպիսին էլ ընդունում եմ քեզ՝
Տարածոթյան մեջ ու ժամանակի…
Հավուր պատշաճի խոսքեր ու խոստում,
Երդումներ սիրո ու դավանանքի,
Որ բոլորովին չեն էլ հավաստում
Բարեհաջող երթ ու ե՞լք այս կյանքից…
Եվ անառագաստ կլողանք այսպես՝
Տարածության մեջ ու ժամանակի,-
Տրտմագին՝ որպես մորս դեմքը հեզ,
Որ նայում է մեզ սև շրջանակից…

❒

Ողբերգություն է՝ ծաղիկը մեռավ,
Քնքշագին ծաղիկն իմ աչքի առաջ,
Գնաց աշխարհից՝
Իր աղերսագին հայացքն ինձ հառած…
Շուրթերին բեկված մի ժպիտ ու ցավ,
Ի՞նչ էր շշնջում իր մահից առաջ,
Ոչ ոք չգիտեր, ես է՞լ չիմացա…
Ի՜նչ ողբերգություն՝ ծաղիկը մեռավ:

ՎԻՅՈՆԻ ՀԵՏ

Երբ ձեզանից ես հեռացա՝
Հուսախաբված ու դառնացած,
Վիյոնի հետ ընկերացա
Քանի՜դարի միջով անցած…
Բացեց իմ դեմ նա իր հոգին,
Պարզեց սիրտը նվիրական,
Տարավ ինձ իր անմահ երգի
Պարտեզներն արարչական…
Նա իր կյանքը տվեց քամուն,
Մեռավ բանտում թշվառական,
Բայց զրկանքից մե՜ղր էր քամում
Երգի համար իր թովչական…
Ես Վիյոնին հարցրի մի օր.
-Ի՞նչ է երգը:-Նայեց ուշիմ,
Աչքերի մեջ մտամոլոր՝
Տառապանքի արցունքի շիթ…
Եվ Վիյոնին մի օր հարցրի
-Ո՞րն է դրախտի ճամփան լուսե,
Նա ցույց տվեց մտացրիվ՝
Կախաղանի օղակը սև…

❒
Մի նայեք դուք իմ վշտին անհատակ,
Ցավին աննահանջ, որ տանում եմ լուռ,-
Ճակատագրի հարվածների տակ
Ես դիմանո՞ւմ եմ հլու-հպատակ…
Եվ նայում եմ ձեզ, ժպտում աջ ու ձախ,
Ձեր ողջույններն եմ առնում փառահեղ,
Եվ նորից մնում ես ինքս ինձ հետ…
Բայց և մի խաբվեք դուք իմ աչքերի
Տանջանք սքողող փայլերով անվերջ,-
Ես փո՞ւլ եմ գալիս հեկեկանքներից
Մի խուլ նրբանցքի կիսամութի մեջ…

ԳԱՆՁԱՍԱՐ

Կապույտ միգում, որպես տեսիլ, որպես հույս,
Թող շողշողա քո գմբեթը երկնասույզ:

Թող ողողանջի քո զանգը զիլ, շառաչի,
Եվ ճառագի հարության լույսը խաչիդ…

Երկրի վրա իմ՝ թշնամուց փրկված հար,
Եվ սփոփիր նրա սիրտը վշտահար:

Կապույտ միգում հոգուս ճիչը դու անսա
Եվ ամոքիր իմ վերքե՞րն էլ, Գանձասար:

❒

Մռայլ երկնքում՝ դառը մգլահոտ,
Օդը՝ վառողի հոտով հագեցած,
Մայթերի եզրին բարդիներն ահով
Գլուխները լուռ խոնարհում են ցած:

Հրթիռակոծված շենքեր, տանիքներ,
Կույր խոռոչներ են պատերում բացված,
Փողոցահայաց բութ լուսամուտներ,
Առանց ապակի, չվարագուրված:

Անցել է արդեն հողմն ավերումի,
Ներսում տեղահան դուռ ու պահարան,
Հատակն ավլող միջանցիկ քամին
Սենյակում ողջը խառնել է իրար:

Դաշնամուրն, ասես, դագաղ է մի սև,
Եվ կափարիչն ահից չես բացի…
Նա, որ հրճվանք էր պարգևում վսեմ,
Հիմա վկա է սև սուգ ու լացի:

ԱՅՍ ԽԱՉԸ

Չի ձլարձակում ոչ մի սերմ ու հունդ,
Ոչ մի հույս ու լույս կամ խոսք ամոքիչ,-
Առեղծվածների կծիկ է ու գունդ
Այս կյանքը, որ դեռ խեղում է հոգի…

Եվ օրերում այս դառն ու անիմաստ,
Որ ճնշում են մեր հոգին կապարե,-
Այս խաչը, որ ես կրում եմ հիմա,
Ուրիշը երբեք չի՞ կարող կրել…

ՀԱՏՈՒՑՈՒՄ

Ես հատուցում եմ իմ սիրո համար,
Նրա երդումի դրժումի դիմաց,
Այրվում կարոտի կրակին մարմանդ
Եվ մխում, նվում անարցունք, անլաց:
Ես հատուցում եմ իմ բախտի համար,
Ճակատագրի դիմաց իմ խեղված,
Իմ անվան համար անբիծ, հալածված…
Ես հատուցում եմ հոգով ու սրտով
Հուսախաբության համար իմ ծանր,
Ինչո՞ւ հույսերիս անձրևից հետո
Կամա՞ր չկապեց իմ ծիածանը…

ԻՄ ԺԱՄԱՆԱԿԸ

Իմ ժամանակը բարդ ու խրթին էր,
Եվ շուրջս տիրող քաոսը խառն էր,
Երգս փխրուն էր, հավքի շրթին էր,
Մինչ եղանակը խիստ ձյունախառն էր:
Իմ բողբոջները երբ պայթում էին՝
Խաբուսիկ էին հովերը մարտի,
Եղանակները բարեխո՞ս չէին,
Ո՞նց դիմանայի վերահաս ցրտին…

ԼՈՒՅՍԵՐ ՉԿԱՆ

Ետ դառնամ անդարձ սերերիս ասեմ՝
Ինձ համար ուրիշ էլ սերե՞ր չկան,
Ետ դառնամ անցած օրերիս ասեմ՝
Ինձ համար ուրիշ էլ օրե՞ր չկան:

Նստեմ, մորմոքամ ցավերիս վրա,
Ճակատագրիս վրա չարակամ,
Բախտի հասցրած դավերի վրա,-
Ինձ համար վաղվա էլ հույսե՞ր չկան:

Գնամ Աստծո ոտը բողոքի,
Որ ինչ տվել է, առել է նորից,-
Դրախտը գոց է, շեմին դժոխքի
Խարխափում եմ ես, ու…լույսե՞ր չկան:

ՆՈՐԱՎԵՊ

Երբ դու սենյակ ես մտնում անշշուկ,
Ու դուրս ես ելնում հուշիկ քայլերով,
Քո շրջազգեստի ամեն մի շրշյուն
Լցնում է հոգիս անթիվ հուշերով…

…Նորահարս էիր, դեռատի ու նուրբ,
Եվ այս սենյակում երբեմնի անշուք,
Բախտավոր էինք մենք՝ մաքուր ու սուրբ
Եվ մեղեդի էր ամեն մի շշուկ…

Օրորոցի մեջ՝ հասարակ ու հին,
Առաջնեկի բույր ու խայտանք արբշիռ,
Եվ բոլոր լուսնի նման քո այտին՝
Երջանկության բիլ արցունքի մի շիթ…

Իսկ դրսում՝ գարնան արևի նվագ,
Սենյակը խուժող ծաղկունքի մի բույլ,
Հոգիս իջնում էր ուսերիդ նվաղ՝
Որպես քնքշանք ու սիրո համբույր…

Եվ տարիները մեր երկար ու ձիգ,
Հոգսերով լեցուն, այն էլ ի՜նչ գնով,
Որպես կախարդի անխարդախ վրձին,
Մեր սաղարթները ներկեցին ձյունով…

ԻՆՉ ԷԼ ԼԻՆԻ

Դաժանությամբ մի բիրտ
Եվ բռնությամբ համառ,
Քեզ Գողգոթա տարան՝
Խաչ հանելու համար:

Ինչ էլ անի քեզ դեռ
Շուրջդ տիրող քաոսը,-
Կապրի քո մեջ անմեռ
Հիսուս Քրիստոսը…

ՆՎԻՐՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Հայտնի է՝ ով էր դավով քեզ մատնել
Ընթրիքի պահին այն խորհրդավոր,
Սակայն ուրիշ է իմ վիճակն անել,
Եվ անհայտ է իմ մատնի՞չն ահավոր…

Բայց ինչ էլ լինի՝ մեղք չեմ գործելու,
Միայն թե տուր ինձ այնպիսի հնար
Կամ թե գաղտնիքն՝ այդպե՞ս խաչվելու,
Այդպե՞ս հարություն առնելու համար:

ՉԵՍ ԿԱՆԽԱՏԵՍԵԼ

Չես կանխատեսել դու այդ բախտը սև,
Ճակատագիրն այդ՝ դառն ու մահահոտ,
Եկել ես, ահա, Գողգոթա հասել,
Մինչ գնում էիր Սինա՜ լեռան մոտ…

Անարդարության զոհ ես դու, իրավ,
Աղաղակներդ ոչ ոք չի լսում,
Եվ տագնապների ցցերի վրա
Արյուն ես ծորում որպես մի Հիսուս…

ԲԵՌՆԱՁԻ

Դեռ տառապանքի այս ուղիներով
Շատ ես քայլելու որպես բեռնաձի՝
Ճամփեքի փոշոտ խոտը հածելով,
Մսխելով քո մեջ հույսը տունդարձի…

Եվ քիչ է մնում ծալվեն ծնկներդ,
Խցանվեն քրտնած ռունգ ու շնչերակ,
Մինչդեռ հոգնատանջ ուղեկիցներդ
Իրենց լաթե՜րն են բարդում քեզ վրա…

ՄԵԶՆԻՑ ԱՄԵՆ ՈՔ

Աստված իմ, տեր իմ, պագնեմ քո ոտը,
Առաջնորդիր մեզ, օրհասից փրկիր,
Ինչպես Մովսեսն էր տանում իր հոտը
Եգիպտոսից մինչ Ավետյաց երկիր…

Մեր ծուխն ու մուխը երկինք է հասել,
Մի՞թե չես առնում դու մահահոտը,
Մեղա քեզ, տեր իմ, թույլ տուր, որ ասեմ
Անտերության ես մատնում քո հոտը…

ԶԱՆԳԵՐԸ

Ղողանջում են զիլ զանգերը կյանքիս,
Դարձել է հոգիս մի զանգակատուն,
Վերքերն են նվում իմ հայրենիքի՝
Ցավով լցնելով ամեն սրբատուն:

Ուր գիշեր ու տիվ մոմեր են վառվում,
Ամեն մոմ, ասես, հույսի մի ճրագ,
Մեր աղոթքներն ենք Տիրոջն առաքում,
Որ պահի զորեղ աջը մեզ վրա:

Վաղ այգաբացից մինչ իրիկնամուտ,
Կարծես փրկության ճիչ աղեկտուր,-
Հոգիս զանգերն է իր հնչեցնում
Որպես փրկության մի զանգակատուն:

ԲԵԿՈՐԸ

Բացատից ելնող մշուշ է ճերմակ,
Շողերն արևի անտառն են սանրում,
Ձնծաղիկները՝ցողոտված համակ,
Իմ սրտին հիմա թախիծ են բերում:

Արկի բեկորը խոցել է կաղնուն
Եվ մնացել է մարմնի մեջ նրա,-
Արյո՞ւն է, արդյոք, թե՞ լույս է ծորում
Հպարտ, վիրավոր իմ կրծքի վրա:

❒

Զա՜րկ բաժակդ բաժակիս,
Եվ մի նվա, իմ անգին,
Ըմպիր, մի՜ թող հատակին
Մրուրն անգամ դառնագին:
Թող աչքերում քո խոնարհ,
Հույսի ճրագը վառվի,
Քանզի երկար չենք մնա
Ճիրաններում այս կռվի…

ՏԵՐ ԻՄ

Ոչինչ չասող մի բախտ,
Ճակատագիր մի խորթ
Դրոշմել ես անխախտ
Խորշոմներում իմ խոր…

Ինձ մատնելով հրի՝
Հետ ես քաշել աջդ,-
Չես էլ տեսնում, տեր իմ,
Ոնց եմ տանում խաչդ…

ՀԵՏ ՏՈՒՐ

Հետ տուր ինձ բոլոր իմ աղոթքները,
Հետ տուր քեզ ընծա բերած զոհերս,
Ա՜խ, մատաղացու ամլիկ գառներս
Մեղքի մայուն են լցված ունկերս…

Հոտս մաղվում է, սպառվում է, տես,
Էլ ո՞ւմ անունից քո ոտքը գամ ես,-
Հավատն անզոր է, հույսերս զուր են,
Իմ ու քո միջև այս ի՞նչ խզում է…
Թե վերջը սա է, ուզածս չեղավ,
Հե՜տ տուր իմ սրտի օրհնանքն ու մեղան…

ՆԵՐԲՈՂ

Պարույր Սևակին

Որպես լույսի մի շող
Հույսի նշույլ անգին՝
Բռնությունից այն կողմ,
Նենգ ու դավից անդին,
Ամայացող ու հեզ
Հոգիներում, Պարույր,
Դու բռնկվիր որպես
Քնքշանքների խարույկ…

❒

Ոչ ոք չի շոյում գանգուրները քո,
Չի փաղաքշում:
Զու՞ր են խոսքերը,-
Այս հին հնամյա արևի ներքո
Էլի դու՞ ես, դու՝ քո ցավի տերը:

Նույնն է կարիքը, հոգսի շեղբը սուր,
Նույն պատրանքների բյուրեղապակին…
Խաբկանք է: Ոչ ոք ճիչդ չի՞ լսում,
Երբ շագանակ ես հանում կրակից:

ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔ

Ինձ գուշակի դեր չի վիճակվելու,
Կանխատեսելու ձիրք չունեմ իրավ,
Թե վաղը քեզ ինչ փորձանք է գալու,
Թող հարվա՜ծն իջնի իմ գլխի վրա…

Եվ առ ինձ հրի մեջ քավարանիդ,
Թեպետ ոչ մի մեղք չունեմ քավելու,
Թե ողջակիզվեմ զոհասեղանիդ՝
Ինձնից մո՜ւր անգամ չի էլ մնալու:

Ես ո՞ւմ եմ բերում անակնկալի,
Երբ մի երկյուղած աղոթք իմ շրթին,
Սպառվող մոմից քո մոմակալի
Ծորում եմ որպես արցունքի՜ կաթիլ…

Որտե՞ղ եմ, արդյոք, ընդդեմ ու ներհակ,
Չներդաշնակվելով որպես օտար ձայն,
Երբ վեհարանիդ կամարների տակ
Ես պատարա՜գ եմ դառնում եռաձայն…

ԱՆՏԱՌՈՒՄ

Անտառ էր, բացատ էր ծաղկազարդ,
Բացատի վերևում՝մի քարայր,
Անտառում՝ երկնքի տակ զվարթ,
Եղնիկն էր ջուրն իջնում ձորն ի վար:

Անտառ էր, բացատ էր, ծաղկավառ,
Անտառում վիթի պես դու ինձ հետ,
Ծփում էր քո բարակ լանջն ի վար
Ալիքը մազերիդ սևահեր:

Անտառ էր, հեքիաթ էր ու տեսիլք,
Հայացքդ, ժպիտդ անմարում,
Զնգում էր ծիծաղդ այնպես զիլ,
Հնչում էր արձագանքն անտառում…

Իմ դիմաց անտառն է էլի նույն,
Հոգնաբեկ նստել եմ մի քարի,
Հնչում է իմ կանչն ապարդյուն,
Խլանում խոռոչում քարայրի:

Եվ աշնան օրերին այս տրտում
Հիշում եմ պահերն այն հեռացած,
Երբ միգով թաթախված բացատում
Սինձ էինք հավաքում հիացած…

ՏԵՍԻԼՔ

Եվ օրը էլի դուրեկան է, պարզ,
Եվ բարեհաճ է երկինքը կրկին,
Եվ առվի շուրջը բռնել են շուրջպար
Ուռենիները՝ հեզ ու քնքշագին,

Վառողի հոտն է ցնդել դաշտերից,
Եվ խանձահոտը երեկվա մարտի,
Երամն է իջել աղավնիների
Կածանի եզրին չհնձված արտի:

Արտում երգում են տափածիտ ու լոր,
Հեռուն անամպ է ու խաղաղ շնչով,
Եվ դու գալիս ես օրոր ու շորոր
Իմ վաղնջական երազի միջով…

Մարմին են առնում պատրանքները ջինջ,
Հուսավառվում են հոգուս լույսերը,
Եվ ես հերքում եմ այն ամենը, ինչ
Փորձում է հերքել երազն ու սերը…

❒

Ոչ ոք էլ ինձ չգտավ…
Թարթիչներիս ստվերում
Տխրությունս անկուտակ
Մի՞թե ձեզ չի երևում:

Ես՝ տրտմություն հարահոս,
Դժբախտություն առկա,-
Ափսոսանքի ո՞չ մի խոսք
Իմ շուրթերից առկախ…

❒

Ամեն մի դիպված կամ թե պատահար
Չես էլ վերհիշի հիմա մտովի,
Չես էլ ուրանա, որ դու խելահաս
Վազել ես ամեն կնոջ ետևից…

Ինչ ապաշխարանք կամ իրարանցում,
Եվ ինչ քներակ շոշափել հիմի,-
Եղել է, այո, կիրք ու մոխրացում,
Ոչ վա՞զք է եղել, ոչ՝ քայլք խելամիտ;

❒

Մի տուր ինձ, Եվա, մոլուցքին վայրի,
Կրքի մոխրացման մի տուր ինձ բնավ,-
Մարմանդ կրակի բոցով ինձ այրիր,
Եվ հավերժական սիրո հուր մնա…

Մենք համը առանք արգելված պտղի
Եվ իմացության գինն իմացանք,
Աստծո զայրույթից լոկ այն հասկացանք,
Որ վտարվել ենք դրախտից անտեղի…

❒

Ամեն ինչի մեջ փորձել ենք իրար,
Նույն խաբկանքի մեջ ու նույն պատրանքի,
Օրն արևոտ է, թե ամպածրար՝
Ոչինչ չպակսեց մեր տառապանքից…

Սիրո մեջ տանուլ տված, թե տարած,
Եվ այլ մի իմաստ հիմա չեմ գտնում…
Մենք՝ հասկանալի, պարզ ու հասարակ,
Տապանագրի նման ավարտուն:

❒

Օրհնանքի խոսքեր, կյանք, իմ շուրթերին,
Ու աչքերիս մեջ ժպիտ խաբվածքի,
Ես սպասում եմ…մի նո՞ր հարվածի,
Ճակատագրին ընդդեմ ու բախտի՝
Ես ծառանում եմ լարումով վերջին,
Թեպետև մաշկիս տառապած էջին…
Դառը հետքե՞րն են մնում քո լախտի…

❒

Ծերություն-ձմեռ ու ցրտեր անվերջ,
Գարնան դարձ չկա, չկա ոչ մի հույս,
Եվ լողանում է անրջանքի մեջ
Ջահելությունը՝ դեռատի՞ մի կույս…

Մտավախություն հուսալքության,
Կրքերի կորուստ, սպառվող ներուժ,
Հանցանքի դիմաց կամ թե բարության
Եվ ո՞չ մի պատիվ, և…ո՞չ մի ներում:

Ժամանակի ու տարածության հոսք,
Հոլովույթի մեջ անկման, կորուստի,
Ա՞խ, ծերությունը, դատապարտվածի՝
Որպես վերջին խոսք…

❒

Ցավակցում եք ինձ, թե չեք ցավակցում…
Ձեր դեմքին՝հեգնանք, իմ աչքում արցունք,
Դուք՝վայելքի մեջ, ես՝ցավ անողոք,
Մինչև երբ պիտի խաբվեմ այս խաղով…
Դուք՝ Աստծո տեր, ես՝ Տիրոջ ծառա՝
Ձեր քմծիծաղից փշաքաղ, սառած,
Ինքս իմ ներսում մոլորված ու խեղճ՝
Իրականության ու պատրանքի մեջ…
Դուք՝ կո՜ւշտ, ապահո՜վ և առանց ահի,
Իմ ամեն քայլի՝ ես ավար մահի,
Իրարանցման մեջ մարդկային ցեղի,
Իմ տեղը նե՜ղն է ու ճիգն՝ անտեղի…

❒

Այս հավերժական հառնում-անկումից
Ինչպես չմարի հույսը անշեղիս…
Որտեղ է պահվում գոյատևումի
Գաղտնախորհուրդը մարդկային ցեղի:

Իմ աչքերի մեջ սարսուռ կա անբառ,
Իմ սրտում՝ սոսկում, անդունդների ահ…
Քեզ ինչպես օրհնեն իմ շուրթերը սառ,
Նվաստ անզորի, զորեղի՜աշխարհ…

❒

Լքված տաճարիս դռները՝ բաց,
Ուր ներս ու դուրս է անում քամին…
Եվ գիշերային այս ուշ ժամին
Ուրվականներ են հայտնվում նորից,-
Այն կանայք, որոնք սիրե՞լ են ինձ,
Այն կանայք՝որոնց խանդել եմ ես…

❒

Զրկանքներից է սիրտն իմաստանում,
Դեգերող միտքը՝հունի մեջ մտնում,
Կնճիռների մեջ խոհն է խտանում,
Համբերությունն արդեն չունի վերջ:

Եվ ապա միտքը դառնում է սրտին,
Պայծառացման մեջ, հարցմունքով հստակ,
Թե ինչպես էին դիմանում վշտին
Այդ խենթ օրերի մամլիչների տակ…

Հոգս ու տառապանք և կարիք այնքան,
Կամք ու ջղերի ինչպիսի՞լարում,-
Եվ անիմաստ է դառնում այլևս
Հայցել կարեկցանք…եվ գութ ու ներում…

ՄԱՐԻՆԱ ՑՎԵՏԱԵՎԱՅԻՆ

Որպես և մասունք, և սուրբ մանանա,
Ես բերում եմ քեզ տուրքն իմ հարգանքի,
Վաղուց քեզ վայր են բերել, Մարինա,
Շղթայված սյունից սև անարգանքի…

Նա, ով կանգնած էր իր դարից էլ վեր
Եվ ոգեղեն էր, ըմբոստ ու վսեմ,
Ճակատագրով պիտի խա՜չ հանվեր,-
Ելաբուգան էր Գողգոթան քո սև…

Ես՝ խորունկ սիրո ալիքի ծփանք,
Ափսո՜ս, շատ ափսոս, որ իմ անարատ
Երգը չի դառնա հոգուդ սփոփանք
Կամ սպեղանի քո վերքի վրա…

Օ՜, վրիպել է մեր բախտը խառնակ,
Անբարեհաճ է գտնվել և Տերը,-
Թե մենք ծնվեինք միաժամանակ՝
Դու կդառնայիր իմ քո՜ւյրն ու սերը:

❒

Անձրևն է լալիս ձեղունի վրա,
Մեգը պատել է փեղկ ու լուսամուտ,
Տառապող հոգին, սիրտը անուրախ,
Նվաղում են զիլ ոռնոցից քամու…

Թերթել անցյալի գիրքն էջ առ էջ՝
Տրված հուշերի քմահաճ խաղին…
Կարիքը ճե՞ղք է բացել պատի մեջ
Ու…թոն է կաթում տան առաստաղից:

❒

Եվ օրը թարթեց աչքերը տամուկ,
Կիսաբաց փեղկից խուժեց այգը պաղ,
Նա դուրս եկավ իր տնից անաղմուկ
Ու շքամուտքում կանգ առավ մի պահ…

Օրը կդառնա փնտրտուք, խոկում,
Հոգսերի շղթա՝ դիպվածից կախված,
Նա ճամփա ընկավ ուսերը նկուն
Իր բաժին բախտի բեռան տակ կքած…

❒

Այնպես հեգնախառն ու այնպես փշոտ
Քո խոսքերն ինձ չե՞ն կարող խոցել,
Մի օր արևոտ ու մի օր ամպշող՝
Աչքերդ իմ դեմ չես կարող գոցել…

Ես սիրո հրդեհ, երաշտ ու տապ եմ,
Հարավի քամի, սամում հրկիզվող,
Եվ ինչ էլ լինեմ, իմ աչքերի դեմ
Չե՞ս կարող թեքել հայացքդ մի կողմ…

❒

Իմ սերը մեռավ ադամամութին,
Ինչպես գիսավոր մի աստղ՝ հանգավ,
Ես արժանի եմ անսահման գութի,
Գուցե փրկի ինձ կարեկցանքն անգամ…

Ես շուրթերիս եմ տանում անսփոփ,
Իմ ձեռքերի մեջ առած, սեր իմ, քեզ,
Եվ ափերիս մեջ աճյունասափոր,
Աղոթում եմ, որ հարությո՞ւն առնես…

❒

Չեն վիճակվել քեզ ծափեր աղմկոտ,
Չես ալեկոծվել երանությունից,
Պահել են միշտ էլ քեզ կրակի մոտ,
Հետո դեմ արել սառցի ու ձյունի…

Բախտավորները՝թե օտար, թե մոտ,
Եվ դժբախտները քեզնից վեր էին,
Մոր, հայրենիքի, անգամ սիրո մոտ
Դու տառապանքի հրավե՞ր էիր…

Ահ ու մահ տեսած, կորուստներ անվերջ՝
Թե անժամանակ, թե ժամանակին,
Եվ դրանից չէ՞, որ ունկերիդ մեջ
Մնացել են լոկ կանչե՞ր անմեկին…

Ում ի՞նչ հոգն էր, թե խաղից դուրս էիր,
Եվ այնտեղ մեկը կայանալ չունի,
Մինչ տարիները սլանու՞մ էին
Խելահեղ բուքով՝գիրկն անհունի…

❒

Մի վերջի՜ն թախծոտ աղոթաժամ,
Մի վերջին աղոտ իրիկնամուտ,
Եվ վերջին հայացք մի անհոժար
Քեզ հրաժեշտի շեմն է տանում…

Եվ նայում են քեզ օտարոտի
Այգու ծառերը լուռ, մտազբաղ,
Ցանց ու ցցերը ցանկապատի,
Տան լուսամուտներն ու դուռը բաց…

Բակում կդնեն մի հին սեղան,
Որ քո աճյունն առնվի վրան,
Որ վրադ վերջին արցունք տեղան,
Եվ հետո…ընդմիշտ քեզ մոռանան:

❒

Անվերծանելի այս գիշերվա մեջ,
Եվ գաղտնախորհուրդ այս լուսնի ներքո
Ի՞նչ տենչանքներ ես փայփայում անվերջ՝
Լռեցնելով տագնապները քո…

Անդորրության մեջ աղոթող շուրթեր,
Երկնքին հառված մի հայացք զննող,-
Լուսնի մահիկը յաթաղա՞ն է, թե՞
Բախտի մի պայտ է՝ չարը խափանող…

ԱՐՑԱԽ

Օծված աստղային ոսկեգույն փոշով
Ու ոսկեղենիկ մի բարբառ շրթիդ՝
Ժամանակների միջով մշուշոտ
Գալով դարերի անթափանց մութից,

Հայացքիդ մեջ մի անհողդողդ վճիռ,
Իրար ես բերում անցյալ ու ներկա…
Ու դեմքիդ վրա ամեն մի կնճիռ
Տառապանքների ճամփա է երկար…

Եվ կարիք չունի նայվածքդ խստիվ
Ո՛չ բեկանելու, ո՛չ վերծանելու…
Մենք մեր պատկերն ենք տեսնում հավաստի
Քո արքայական դիմագծերում:

Նպատակամետ չընկրկումներով
Եվ չխախտելով հավատ ու երդում՝
Աստվածաշնչյան քո հրաշքներով
Որպես Մովսես ես մեզ առաջնորդում…

Կհերիքի մեզ ջուրն ու մանանան,
Կտրելու «Կարմիր ծով» ու խութ անխախտ,
Թե «Հորդանանն» էլ անցնենք, կունենանք
Արդեն Ավետյաց երկիր ու դրախտ…

❒

Ես մնացել եմ խուլ ու կարկամած,
Երևի սա մի զառանցանք է հին,
Որ իմ հուշերի միջից միգամած
Հառնում է վաղուց մոռացված մի կին:

Կայծեր ցայտելով իմ շուրջը բոլոր՝
Պարում է ինչպես բուք ու ինչպես հուր,
Որտեղից հայտնվեց, սիրեց ինձ մի օր,
Կարճատև, բայց խենթ սիրով գնչուհու…

❒

Դու ոչինչ էլ չես ձեռնարկի հիմա,
Տարիքն ավերիչ իր գործն է անում,
Եվ կարեկցանքն է դառնում անիմաստ,
Եվ սփոփանքի խոսքե՞րն են անուժ…

Իրողությունն այս ընդունիր ու վերջ,
Պատրանքները քո ոչինչ չե՞ն խախտի
Ճակատագրի կնճիռների մեջ
Եվ խորշոմներում քմահաճ բախտի…

❒

Ես քեզնից պահած գաղտնիքներ չունեմ,
Կարոտս չուներ ոչ չափ, ոչ կշիռ,
Եվ քո սերը, որ կշռաքար չուներ,
Ընպել եմ որպես արցունքի մի շիթ…

Սա է, ինչ հասավ ինձ տառապանքով,
Եվ քունքս, բնավ, չեմ սեղմում երկար…
Ընդունում եմ պարզ սրտով ու հոգով
Այն ամենը, ինչ եղել է ու կա:

❒

Դու ո՞ւմ հատուցես և ինչի՞ համար,
Ո՞ւմ ծնկների մոտ լինես ծնրադիր,
Հանուն այն տեղի՝երեր, անհարմար,
Որ կա ու չկա և կոչվում է դի՜րք…

Օ՜, բանաստեղծին տրված ձիրք, կոչում,
Արարչի ոգի ու ցավ երկունքի,
Դուք նախ և առաջ և ամեն ինչում
Նշանակե՜տ ու նշա՜ն եք քունքի…

❒

Ես այնպես եմ ելնում իմ տնից...
ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ

Իսկ ես այնպես եմ ելնում իմ տնից,
Կարծես էլ չեմ մտնի իմ տունը,-
Վաղուց ինձ հանել են իմ հունից,
Եվ փախցրել են հանգիստ ու քունս…
Բառը պայթում է փուչիկի պես՝
Անիմաստ, անհետք, անհույզ, անկիրք,-
Աշխարհում ոչ մի պոետ հրկեզ
Չփրկե՞ց, ավա՞ղ, ո՛չ սեր, ո՛չ երկիր…

❒

Պատեհ-անպատեհ չես հիշեցնի,
Թե տառապանքդ կյանքից երկար էր,
Ու ես էլ պատից չեմ իջեցնի
Տարաբախտի քո դիմանկարը…

Սեր ու կիրք և հուշ մնացին հեռվում,
Փակ են մեր առջև պատուհան ու դուռ,
Բայց ինձ իրավամբ այնպես է թվում,
Թե լացի միջից ծիծաղում ես դու…

ԹԻՐԱԽ

Մաքսիմ Հովհաննիսյանին

Կանխորոշված էր ստույգ, վերջնական
Ե՞վ ճակատագիր, և՞ բախտ, և՞ ուղի,
Անհնարին էր փոխել ինչ-որ բան,
Եվ…ճամփան պիտի տանե՞ր փակուղի:

Այս հողի վրա ով էլ որ ծնվեր
Եվ լսողություն ունենար ունակ,-
Նա նվագի տակ մի աններդաշնակ
Թե պարեր՝ պիտի փղի պես պարեր...

Քո պարը փղի պես էր իսկապես,
Եվ դրա համար քեզ մի խուզարկու
Պիտի հալածեր սև ստվերի պես
Անվտանգության աչքո՞վ ահարկու…

Թիրախ է մարդը շիտակ պահվածքի,
Որ գլուխը կախ իր գործն է անում,
Գիտե, որ գանձ է սերը հայրենիքի
Եվ…իր պահուստը շուկա՞ չի հանում:

Դու վաղուց էիր դարձել մի թիրախ,
Բայց որպես դպիր՝տքնեցիր անվերջ
Մեր ողբերգությա՞ն մատյանի վրա
Եվ սաֆոնովյա՞ն մղձավանջի մեջ…

Ըմպիր բաժինը քո տառապանքի,
Ում ինչ ցավն է թե մի հոգեհմա
Ու վեհատեսիլ Գառնի էր հոգիդ
Եվ…հիմնահատակ փլվա՞ծք է հիմա:

❒

Եկ սեղմեմ կրծքիս՝ հոգնած թևերով,
Մի վերջին անգամ եկ քեզ համբուրե՜մ…
Եթե հանցանք եմ քո դեմ գործել ես,
Թող Աստվա՜ծ միայն, Աստվածն ինձ ների…

Արդ իմ հոգու մեջ մշուշ է անլուր,
Աստղային մոխիր ու հանգչող հուշեր,
Եվ…երբեք-երբե՜ք չեմ էլ հիշելու
Ես քո մահացու հարվածները շեղ:

Իսկ այն աշխարհում (ում ի՜նչ է տվել),
Պահերի միջով լոկ այն թովչանքոտ,
Որ դու այս երկրում ինձ ես պարգևել,-
Ես լողալու եմ դեպի գիրկը քո…

❒

Հալ ընկար ձմռան ձյուներն ինչպես,
Ամռան տապ ես դու և ամռան խարույկ,
Այն ե՞րբ էր՝ հրո ճարակ էի ես,
Իսկ դու՝ սառցադաշտ, դու՝ ձյունի սառույց…
Մառախուղներում ձիգ տարիների,
Մեգի մեջ սուզվող հուշ ու հիշատակ…
Ես հիմա ինչպե՞ս վերծանվեմ հրի՝
Հանգած խարույկի մոխիրների տակ:

❒

Կատակի տալով, խայթելով իրար
Ու պահմտոցի խաղալով անվերջ՝
Հեգնանքի միջով մի անհիշաչար
Մենք հայտնվեցինք մի օր սիրո մեջ…

Բոցի բռնկում ու տաք եռք արյան,
Եվ մեր աչքերից ցայտում էր կրակ,
Ո՞չ ընկեր էինք, ո՞չ էլ ախոյան,
Երբ հայտնվեցինք պատնեշի վրա…

Եթե հաղթես ինձ այս սրամարտում՝
Կհպեմ ճակտիս քո աջը ծանոթ
Եվ ասպետական իմ սաղավարտը
Ես վայր կբերեմ քո ոտքերի մոտ…

❒

Քեզ համար արդեն ամեն ինչ մեկ է,
Թե դրսում ինչ օր ու եղանակ է,
Բոլոր մեղքերն ու կուռքերը մերկ են,
Բոլոր սրբերն անընդունա՞կ են:
Թե կայարանի չվացուցակը
Ինչ ուղերթներ է նախասահմանել,
Ուղեկիցդ՝ մա՞րդ, թե՞ ելուզակ է,
Երբ ունեցածդ մի…ծակ գդակ է:

❒

Իմ փխրուն ուսին, որ հենվել ես դու,
Մի օր չեմ լինի այդպես հենարան,
Քո աչքերը, որ ժպտում են խնդուն,
Մի օր արցունքի լճե՞ր կդառնան…

Մազերդ, որ դեռ բուրում են անուշ,
Կշնչեն նորեկ ձյունի սառնությամբ,
Հայացքդ, որ ինձ երկինք է հանում,
Կմթագնի մի օր դառնությամբ…

Եվ ձեռքերը քո, որ աղավնակերպ
Թառել են հիմա ուսերիս խաղաղ,
Մի օր, ա՜խ, մի օր կդողան ա՜յլ կերպ,
Երբ փակես արդեն աչքերս պաղած…

❒

Աստծո գործերին դու մի խառնիր քեզ,
Նրա զայրույթին տեղյակ ես, անշուշտ…
Եվ բաբելոնյան հսկաների պես
Զուր աշտարակ մի շինիր վեհաշուք…
Աստծո սրտին ու մտքին հաճելի
Լիուլի բա՜վ է այս խրճիթն էլ մեզ:

ԱՊՈԿԱԼԻՊՏԻԿ ԵՐԳ

Վահրամ Աքանեսյանին

Դեմքեր՝անհաղորդ, բութ ու անուղեղ,
Մեկ է՝ում էիր հանդիպել երեկ…
Մինչ դու նյութի մեջ ոգի՞ես եղել,
Որ չնեխոտի ներսից ինքն իրեն…

Հայացքներ՝ոչինչ չասող ու սառած,
Անորոշ, մոլոր ու անհիրավեր,-
Չգիտես՝ ում են և ուր են հառված,
Ի՞նչ են աղերսում կյանքից այս երեր…

Մի համատարած խլությո՞ւն է խուփ,
Թե՞ հավկուրություն ժամանակավոր
Ո՞չ ծիծաղ ու լաց, ո՞չ կանչ կա տխուր,
Ո՞չ արձագանքը նրա հեռավոր…

Թվում է՝ ո՞չ նյութ, ո՞չ էլ հոգի կա,
Ո՞չ կյանք է եղել, ո՞չ բուք կրքերի,
Կհալչի՞, արդյոք, ձյունն անակնկալ՝
Իջած մազերի մեջ ու քունքերի…

Սերն՝անդամալույծ ու՝ ողորմություն,
Երդում-խոստումը՝բառեր սնամեջ,
Եվ բաբելոնյան մի խառնակություն
Ապշահար, լքվա՞ծ հոգիների մեջ…

Ի՞նչ ապաշխարանք, քավություն անսուտ,
Կամ ի՞նչ թողություն՝ գործած մեղքերի
Կարեկցանքն անգամ մանանա՞է սուրբ,
Էն էլ թե տերը շնորհի վերից…

Դժվար կյանք, դժվար ապրուստի մի ծիր,
Որ սկիզբ չունի, երևի ոչ վերջ,-
Բարության թեկուզ դողդոջուն մի ծիլ
Հարությու՞ն առներ մեր ափերի մեջ:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՍԻՐՈ

1.
Այս ի՞նչ անցում էր, ցնցում էր, թվաց՝
Մենք գլուխ-գլխի զարնվեցինք իրար,
Այդ տարիների գնացքն էր՝ զնգա՜ց…
Երկաթգծերի խաչուղու վրա:

Ո՜չ, կայարան չէ սա մի հերթական,
Կառամատույց է գնացքը մղված,
Եվ ի՞նչ, հուզվելու ոչ մի հարկ չկա,
Ժողովենք արդեն իրերն, իջնենք ցած…

2.
Նույն աչքերը, նույն հայացքը պարզկա,
Նույն ժպիտներն են՝ ջինջ ու անձկալի,
Մազերիդ եղյամն, օ՜, Աստված վկա,
Ինձ չի բերելու անակնկալի…

Ես չեմ հավատա ու չեմ հասկանա,
Թե այդ առաջին ձյունը քո քունքին
Ինչպե՜ս կարող է պատուհաս դառնալ
Եվ ինչո՞ւ պիտի մեր սերը հերքի:

3.
Դրսում մրրիկ է ու բքի կաղկանձ,
Ծառեր ու այգի՝ձյունի բեռան տակ,
Ձյուն՝մազերիդ մեջ, առանց հերակալ,
Եվ իմ հոգու մեջ՝երբեմնի կրակ:
Այլևս չունեն բառերն իմ տանջված

Նախնականության ջերմությունը բորբ,
Որ տաքացնեն օրերդ հաշմված,
Եվ հոգիդ, ավա՜ղ, անսփոփ ու որբ…

4.
Ափսո՜ս, շա՜տ ափսոս, ես ուշ իմացա,
Ու սիրտս պիտի անվերջ խռովվի,
Որ անցնող օրդ՝հրաժեշտի ցավ
Եվ առկախ ձեռք էր մնաս բարովի…

Էլ իմաստ չունի ափսոսանք ու վերջ,
Մորմոքալ իզուր և՜ գիշեր, և՜ տիվ,-
Դու հիմա հաճախ զարթնում ես իմ մեջ…
Որպես խղճի խա՜յթ, որպես նախատի՜նք:

❒

Ինչքան էլ որ ծածկի, ինչքա՜ն,
Չքնաղ տեսքդ մշուշ ու մեգ,
Ես օրվա մեջ հազար անգամ,
Վերհիշում եմ քո դեմքը հեգ:

Ինչքան էլ քեզ հրեն անդունդ
Ու խոր վիրապ անկասելի,
Սակայն էլի կհառնես դու՝
Նման ա՜սք ու առասպելի:

❒

Գիշերվա մեջ հազարախոհ,
Երազներում խառն ու խռիվ,
Տագնապահար քնի մեջ խոր
Մղում էինք մարտ ու կռիվ:

Ո՞վ մեզանից սոսկաց ահից,
Ո՞վ կուլ գնաց մղձավանջին,-
Հայտնի եղան լոկ այն պահին,
Երբ ճառագեց լուսայգը ջինջ…

❒

Դու գալիս ես ակամա,
Անբարեհաճ օրվա պես,
Եվ սուզվում ես անթափանց
Մառախուղում աչքերիս,
Շուրջս թոն է, միգամած,
Վրաս թափվում են, ասես,
Հանդերձանքներ հնամաշ,
Ոչի՜նչ չասող խոսքերի…

Տարիներն անողոք
Գերեվարել են հոգի,
Լիմոնի պես քամել են
Ու կեղևը նետել դեն,-
Կդիմանա՞նք, արդյոք, մենք,
Այս ձմեռվա խիստ բուքին,
Որ վար իջնում լեռներից
Ու մոտալուտ է արդեն…

❒

Կա պաղատագին քո երգերի մեջ
Բնության թովքը, կնիքը ցավի,
Առաջին սիրո հրճվանքն անշեջ
Եվ արցունք ընկած աչքերից ծավի…

Եվ ձմռան սառը սաղարթների մեջ
Մրրիկի սույլը, բուքը վրդովվիչ,
Կա և քնքշագին քո երգերի մեջ
Մանուշակների կապույտը թովիչ…

❒

Որպես խաբված ուխտավոր՝
Եվ հպատակ, և հլու,
Գնում էի դառնացած
Բախտից ու այս աշխարհից,
Կարոտաբաղձ, անձկալի
Հովն՝անտառից հղված լուր,-
Ա՜խ, հեռավոր քո կանչի
Տրտմությունը բերեց ինձ…

❒

Հպատակն եմ ես սիրո, քնքշանքի,
Հավատարմության նահատակը վեսս,
Անարդարացի խոցվածիդ կամքի
Ու տառապանքի հպատա՜կն եմ ես:

Աչքերիդ՝ցավի մշուշում խոնավ,
Եվ թարթիչներիդ՝արցունքահանդես,
Նայվածքիդ խոհուն, հայացքիդ խոնարհ
Ու կարեկցանքիդ հպատա՜կն եմ ես:

Երազների բույլ և…ո՜չ թե մարմին,
Քնքշաբույր գարնան ցնորք ես ասես,
Ինչքան էլ խոցես քո հավատարմին՝
Ամենակալիդ հպատակն եմ ես….

❒

Կիսալուսին մի աղոտ՝
Երկնքի մեջ անպարփակ,
Ո՞չ փանդիռի է նման,
Ո՞չ էլ քնքուշ քնարի,
Հեծում էի տրտմագին,
Սիրտս՝ լեցուն, լեզուս փակ,
Յաթաղանի պես մի կեռ
Լուսնի մահի՞կ սնարիս…

❒

Ոչ ոք չի կանչի, քեզ ետ չի կանչի
Քո տառապանքի ճիգ ուղիներից,
Ո՞վ կհետևի քեզ, ո՞ւմ կտանջի
Մշուշը դառը մառախուղներիդ…

Մրրիկների մեջ մաքառիր, գնա,
Էլ ի՞նչ կարեկցանք՝ հեգնանք անսքող,
Երբ միգոտ օրը քո դեմքին գունատ
Անորոշության շղարշ է ու քող…

Երկիր իմ խոցված, հոգի իմ ցավոտ,
Ձյուն ու բքի մեջ տագնապախռիվ,
Լսվում է ձայնդ խոր ու անսովոր,
Եվ մորմոքում է ցավդ անլռին…

❒

Երկիր իմ՝ փոքր, մանկան բռան չափ,
Մանկան ափի պես՝տաք ու քնքշագին,
Մանկան սրտի չափ պարզ, անհիշաչար,
Մանկան հոգու պես՝ նո՜ւրբ ու ցավագին:

Երբ շուրջդ այսքան շանթեր կան, ամպեր,
Վեճեր կան անզուսպ, չարքեր կան պես-պես,
Ես ինչպե՞ս, ինչպե՞ս խուլ չտագնապեմ,
Եվ ինչպե՞ս պիտի հանգիստ քնեմ ես…

❒

Դու, որ կարող ես ապրել ու շնչել
Առանց խոսքերի հավուր պատշաճի,
Քո ինչի՞ն են պետք բառերը հնչեղ՝
Սեթևեթանքներ կիսամերկ հարճի…

Հագուստի նման նրանք խունանում,
Մաշվում են անձրև-քամուց ծվատող,
Շնչիր լեռնային օդն ու բույրն անուշ՝
Նախնականության իր համ ու հոտով..

❒

Միջանցուկ քամի ու ցուրտ հոսանք,
Դուռս հանված է իր ծղնակից,
Բայց բողոք չունեմ ու ափսոսանք,
Իմ վայր չբերած արեգակից…

Թրթռուն մի լույս հանգչող մոմի,
Փեղկերի խփոց ու խուլ ցնցում,
Բայց չե՞մ ընդունի՝ ինչ էլ լինի,
Մխիթարության ոչ մի արցունք…

❒

Թող որ ցնդել են երազն ու սերը,
Թող որ հետք չունի նույնիսկ անունս,
Թող որ հատնո՞ւմ են անգամ լույսերս,
Եվ կլանում է ողջը անհունը…

Թող որ ինձ բնավ ոչինչ չի՞ մնում,
Թող որ հոգնաբեկ, դեռ տե՞ղ չհասած
Եվ ես էլ արդեն լուռ հեռանում եմ,
Էլ ի՞նչ ափսոսալ…ո՞չ մի ափսոսանք:

❒

Անտերություն է՝ հանգա՜վ կրակը,
Անտարբերություն՝ չարը կհաղթի՜…
Այն ո՞վ էր այնտեղ՝ բացեց երակը
Եվ…արյունոտվե՜ց դարը ավարտին:

Չի տաքացնի արեգակն հրատ,
Թե մուսաների կրակն էլ հանգավ,-
Բայց քանի՜դար է հարկավոր, իրավ,
Մինչև որ Զևսը նորից աշխարհ գա…

❒

Ոչ առնել ունի օրդ, ոչ տալիք,
Չգիտես վաղը քեզ ի՜նչ կբերի,-
Լողում է հոգիդ՝մակույկ-խաղալիք,
Խաբկանքների մեջ ու պատրանքների…

Ետ էլ չե՜ս դարձնի դու ժամանակի
Այս թափանիվը ոչ մի հնարքով…
Խփե՜նք, սիրելիս, բաժակ-բաժակի,
Գինով լինեն լի կամ թե արցունքո՜վ:

❒

Թողություն չկա ու ապաշխարանք,
Խելահեղ ամբոխ՝ մեղքերի՞ ալիք,
Ո՞ւմ են նետելու դիակիզարան,
Երբ նեխահո՞տ է ամբոխից գալիս…

Իսկ փարիսեցի քրմերը դիվոտ
Մատը դնում են Հիսուսի վրա,-
Տեսեք՝ ահա, թե ով է մեղավոր,
Եվ Պիղատոսն է մնում շվարած…

Նույն Գողգոթան է ու նույն մոլեռանդ
Ամբոխը ու հին խաչափայտն անզարդ,
Եվ նայում է նա լուռ ու հնազանդ
Աստծո որդին՝ հարությո՞ւն առած…

Եվ մի դիվային տենչով անվարան
Ամբոխը ճչում, գոռում-գոչում է.
-Խա՞չ հանիր նրան, խա՞չ հանիր նրան,-
Եվ Քրիստոսը նորից խաչվում է:

❒

Աղոթքի նման մի երգ էր ծորում՝
Հոգու ճիչ է՞ր, թե՞ կանչ էր մորմոքի,-
Բայց ո՞վ էր, արդյոք, որ չէր երևում,
Եվ չէ՞ր կիսում իր ցավն անամոք…
Խլացավ հեռվում և՞ տրտունջ, և՞ երգ,
Մոլորված քայլեր, ստվեր հեռացող,
Ուշ աշնան օր էր, մշո՞ւշ էր ու մե՞գ,
Կածանի վրա արցո՞ւնք էր, թե՞ ցող…

❒

Չի փաղաքշում քեզ ոչ փառքը սին,
Ոչ աղերսում ես կարեկցանք ու սեր,
Դու ոչ սֆինքս ես հին Եգիպտոսի,
Ոչ Եգիպտոսին վաճառվա՜ծ Հովսեփ…

Եվ ի՜նչ փույթ, թե քեզ դեռ չեն հասկանում,
Բայց, այնուհանդերձ, մի օր կիմանան,
Որ հոգեհա՜ց ես դու նրան տանում,
Ում չի՜հերիքում Տիրոջ մանանան…

ՆՎԻՐՈՒՄՆԵՐ ԿԱՆԱՆՑ

❒

Լույսի բարակ շերտ՝ սենյակում զնգաց,
Արևաճագ է լուսամուտից դուրս,
Եվ եղրևանու սաղարթ՝ ներս ընկած,
Ես չեմ հավատա, թե չես գալու դու…

Արևն իմ դեմքին՝ հրավերք է, տե՞ս,
Ձեփյուռը շրթիս՝ սիրո ճիչ ու կանչ,
Իրարանցում է, տագնապ հոգուս մեջ,
Եվ… մի մոտալուտ հանդիպման խինդ կա:

❒

Մի՞թե այլևս չես լինի, ուրիշ
Մի այլ աշխարհում կլինես, ուր որ
Քո թուխ մազերն այդպես չեն բուրի,
Եվ չես ժպտա դու որպես առավոտ…
Հեգնա՞նք է, կատա՞կ, որ սուր սրի պես
Խոցում է սիրտը, ուղեղ ու հոգի,
Ես ինչպե՞ս, ասա, պահպանեմ քեզ,
Որ դռանս սև ուղտը չչոքի…

❒

Ոչինչ չի լինում առանց պատճառի,
Բայց, այնուհանդերձ, որպես ճիչ ու տենչ,
Ամեն առիթով կամ թե անառիթ
Դու սրտիս մեջ ես ու իմ մտքի մեջ…
Փականքի տակ էլ դնեն ելք ու դուռ,
Հոգսի մեջ լինեմ, թե դավ ու մեղքի,
Բայց, այնուհանդերձ, դու՝րս ես լողում դու
Իմ մտքի, հոգու ու սրտի ճեղքից…
Ինչ էլ որ լինի, ուրեմն՝ կարգ է,
Ես նու՝յնը կասեմ՝ սեղմեն էլ պատին,
Դու վերուստ տրված նվե՝ր ես, պա՝րգև,
Եվ տառապանք ու ցա՝վ ես ու պատիժ…

1960-1990

ԳԱՆՁԱՍԱՐ

Վանիր ինձնից, վանիր քո պատրանքը,
Կամ Թարթառի ձորից մուժը վանիր,
Հանիր ինձնից, հանիր տառապանքս,
Կամ խորանս մտած փուշը հանիր:

Ավերակող փուշը կողդ խրվել,
Խարխլում է պատը լուռ, անծպտուն,-
Օ՜, երկնային, ասա, ինչպե՞ս վարվել,
Ավա՜ղ, ճեղք է տալիս սրբատունս:

ԱՄԱՐԱՍ

Այդ ո՞վ է ծնկում խաչքարիդ առաջ
Եվ անձուխ մխում խորաններիդ մեջ,
Այդ ո՞վ է զնգում զանգակահառաչ
Քո սուրբ գմբեթից՝ կամարներիդ մեջ:
Ո՞վ է աբեղան քո սքեմակիր,
Արբազանը քո ու վեհափառը,
Լսիր աղոթքս, օ՜, անհաս երկինք,
Տվայտանքներս անկապ ու դառն:
Ո՞ւր ես, Արարիչ, լսիր իմ մեղան,
Հանուն հոգուս, որ քոնն է լիովին,
Վար իջեցրու զոհասեղանդ,-
Գլուխս ընծա՜բերեմ կամովին:

ՔՈ ՈՒԽՏԱՎՈՐՆ ԵՄ

Մեղա՜, Գանձասար, մեղա՜, Գանձասար,
Հավատավորս՝ քո ուխտավորն եմ,
Մի ասա տեսնեմ՝ իմ մեղքը ո՞րն է,
Որ ինձ գամել ես քավության սյունին,
Արձակել նրան, ով որ մե՜ղք ունի…
Նրան ես արժան անում մեռոնի,
Ով նշխարնե՜ր է թոցնում խորանից:

ԹԵ ԵՍ ԼԻՆԵԻ

Ասացի՝ մեղա,
Թողությո՜ւն չեղավ…

Ասացի՝ մեղա,
Բարությո՜ւն չեղավ…

Ասացի՝ մեղա,
Հարություն չեղավ…

Թե ես լինեի,
Վանք իմ, քո տեղակ,-
Կասեի՝ եղավ…

ՄԱՐԴ ԵՄ, ՎԱՆՔ ՉԵՄ

Ես կամոքվեմ իմ իսկ բոցից,
Իմ արցունքից դառն ու աղի,
Թեկուզ էլի սիրտս խոցի
Շեղբը քո սուր քմծիծաղի…
Էլ ի՞նչ կուզես, ի՞նչ իմանամ,
Մարդ եմ, վա՞նք չեմ…կդիմանամ:

ԹԵ ՏՔՆՈՒԹՅՈՒՆ ՉԵՂԱՎ

Ինչ էլ լինի՝ հուսա,
Ինչ էլ լինի՝ երգիր,
Սար էլ լինես ուսած,
Քար էլ դնեն մեջքիդ…
Թե տքնություն չեղավ,-
Քո հոգու մեջ վճիտ
Պատահա՞ր է, դիպվա՞ծ
Կամ վքա՞ր է խղճի…
Ինչ էլ լինի՝ հուսա,
Ինչ էլ լինի՝ երգիր:

ՏԱԳՆԱՊ

Անհանգիստ է քունս,
Տագնապահար այնպես,-
Ներխուժում է տունս
Չարի ոգին անտես…
Երազներս դառնում
Հեղձուցիչ ու մթան,-
Այս ո՞ւմ մատն է խառնում
Մասունքներն իմ տան…

ՉԵՄ ՀԱՏՆՈՒՄ

Ես մնում եմ քեզ համար
Որպես աղբյուր մի հակինթ,
Պարզկա երկնի մի կամար՝
Հայելու մեջ գետակի:

Հովի շոյանք ու շշունջ,
Ծփանք արտի ոսկեհեր,
Մանկության հոտ ու տաք շունչ՝
Խառնված ուրցի բույրի հետ:

Գիշեր ու զօր չեմ հատնում,
Վառվող մոմ եմ հավատի,-
Աստղի ցոլա՜նք եմ դառնում
Լուսապսակ ճակատիդ:

ԴԱՐԱԲԱՂ

Անունդ չեմ տա,
Չեմ մատնի տեղդ,-
Ծուրքերիս վրա կդողան հանկարծ
Այնպիսի խոսքեր,
Որոնք կխոցեն
Նույնի՜սկ…Արարչի ականջները խուլ:
Անունդ չեմ տա,
Չեմ մատնի տեղդ,-
Դու այն խորանն ես,
Որտեղ չպիտի մարեն մոմերս,
Դու այն խորալն ես,
Որից սրտիս հետ
Պիտի սարսռան
Նաև սրբատան կամար ու որմեր:

Անունդ չեմ տա,
Չեմ մատնի տեղդ,-
Քեզ՝իմ ընծայած հավատի համար
Եվ անդավ սիրո՝
Ինձ մոլեգնորեն այնպես կխաչեն,
Որ կնախանձի…Քրիստո՜սն անգամ:
Մնա, օ՜, մնա,
Դու օտարոտի աչքերից հեռու,
Որ չառևանգեն
Ու քեզ չպղծե՜ն…
Կապանք դիր լեզվիս
Ու սրտիս՝փականք,
Ինքդ քո ձեռքով ինձ այնպե՜ս խաչիր՝
Չտամ անունդ,
Տեղդ չմատնեմ:

ՏՈՒՆԸ

Տունը հիշում է ճիչն առաջին,
Նորելուկ մանկան ժպիտն անարատ,
Մանկության անուշ հեքիաթն են հուշում
Տան օճորքները ու տանիքը տան:
Տունը հիշում է
Արևից շիկնած կավե կճուճներ՝
Նեղ ցանկապատի ցցերը հանած,
Մի խոնավ ու խոր ջրհոր է հիշում,
Արևածաղկի շուրջը բզզացող
Մեղուների պարս:
Ու հիշում է նա մի հին խրտվիլակ՝
Ածուներից վեր:
Տունը հիշում է, տունը ճամփեզրի՝
Իրիկնաժամի մթնշաղի մեջ,
Տատի փեշերի բուրմունքն է սփռում,
Հուրհրատում է թոնրատան նման
Եվ խորհրդավոր լռությա՜մբ լռում:
Օրերի վազքից ու տարիների
Քմահաճ խաղից
Կնճռոտվում է ճակատը նրա,
Երբ տուն չդարձած որդո՜ւն է հիշում,
Աշնանային պաղ մշուշի միջից
Դանդաղ կաթում է արցու՜նքը նրա…
Տունը հիշում է գալարքը բուքի…
Եվ սարսռում են լուսամուտները,
Սառնամանիքն է մտրակում դեմքին
Ու ձյան փոշով լցնում աչքերը:

Տունը հիշում է հալոցքը ձյան,
Ջրհորդանների խայտանքն ուրախ,
Ջրերի կանչը հասնում ականջին
Եվ տանտիրոջ պես շտկու՞մ է մեջքը…
Արհավիրքներից փրկված նավի պես
Հուշով ծանրաբեռ,
Գալիք օրերի երազանքներով,
Արևով օծված կայմ ու առագաստ,
Ժամանակի ու տարածության մեջ
Լողո՞ւմ է տունը:

ՀԱՅՐԵՆԻՔ

Ողջո՜ւյն, հայրենիք, ողջո՜ւյն, սիրելիս,
Ինչ լավ է, որ դու սրտիս մեջ ես, կաս,
Որ ամեն անգամ անունդ տալիս,
Ալեկոծվում է իմ հոգին անհաս:

Ողջո՜ւյն, հայրենիք, ողջո՜ւյն, սիրելիս,
Որ ինչ էլ լինի՝ չես լքի դու ինձ,
Որ ամեն անգամ կրծքիդ փարվելիս,
Երջանկությամբ եմ ճառագում նորից:

Ողջո՜ւյն, հայրենիք, ողջո՜ւյն, սիրելիս,
Որ ինձ համար էլ ունես մի բուռ հող,
Մի պարզ հայացք ու ժպիտ բերկրալի,
Մի կաթիլ արցո՜ւնք ու սրտի մի դող…

Ողջո՜ւյն, հայրենիք, ողջո՜ւյն, սիրելիս,
Որ շեն է տունս և օջախս տաք,
Որ դեպի քո լուրթ երկինք թևելիս,
Տեսնում եմ նաև իմ աստղը սուտակ…

Ողջո՜ւյն, հայրենիք, ողջո՜ւյն, սիրելիս,
Որ ամենքին է այս բախտը տրվում,
Որ սուրբ դրոշիդ հետ հաղորդվելիս՝
Հեշտությամբ են իմ երգերն էլ գրվում…
Ողջո՜ւյն, հայրենիք, ողջո՜ւյն, սիրելիս:

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

Այգիներում հայրենական
Աշունն իջավ նվիրական…

Ողկույզների ծանրության տակ
Վազն է լռին հակվել,
Դեձն է հասնում արևի տակ,
Նուշն է արդեն շիկնել:

…Ո՞վ է այնտեղ երգում մեղմիկ
Հնձաններից հեռու,
Ա՞խ, այդ դո՞ւ ես, իմ անուշիկ,
Ձորի պստիկ առու…

Առվի եզրին բարակիրան
Բարդիներն են խշշում,
Օ՞, ինչ լավ ես ներկել նրանց,
Հազարերանգ աշուն:

Կարկաչում է ջուրը հստակ,
Ձոր խոտերն են խշշում,-
Ծավալվում ես դու հերարձակ,
Հայրենական աշուն:

ԴՈՒ ՄՈՐ ՆՄԱՆ ՍԻՐԱՌԱՏ

Սարի տակից բխած ջինջ,
Վճիտ աղբյուր լինեմ պաղ,
Երգս հնչի միշտ թովիչ
Քո գրկի մեջ, Ղարաբաղ:

Եվ լեռներից փչող զով
Ու անուշ հով լինեմ պաղ,
Փարվեմ քնքուշ քո վզով
Նվիրական Ղարաբաղ:

Քո լեռներում հեռավոր,
Հովիտներում, ամենուր
Հովիվների վառած բորբ
Խարույկներին լինեմ հուր:

๑๓๙๔๒ ๖๓๒

ՈՒԾ ԱԾՆԱՆ ԵՐԳ

Ուշ աշնան խոնավ մշուշի տակ
Անտառում քուն է մտել հիմա
Մի եղնիկ՝ կորած ճագին գտած,
Երազների մեջ հոգեհմա…
Որսալով ամեն շշուկ ու ձայն,
Հակվելով մոր պես գորովագութ,
Կաղնին հսկում է քունը նրանց,
Աչքը՝թավուտին մռայլ ու մութ…

ՄԱՅՐ ԵՂՆԻԿԸ

Այնտեղ, հեռու սարալանջին,
Պահ է մտել հավքը բնում,
Խոխոջում է աղբյուրը ջինջ,
Սաղմոսում է ու չի քնում:

Այնտեղ, հեռու սարալանջին,
Լուսնի լույսն է ծորում խավոտ
Եվ հասնում է իմ ականջին
Կկվի կանչը խորհրդավոր:

Խոռնիխոտի վրա նստած,
Դունչը դրած մամռած քարին,
Օրհնում է իր ճագին գտած
Մայր եղնիկը չնաշխարհիկ:

Մտորում է՝ ուշքն անհունին,
Հարափոփոխ բախտի վրա,
Թեպետ հոգին էլ ահ չունի,-
Տագնապում է սի՜րտը նրա…

ՎԵՐՀՈՒՇ

Մի պարզ օր է արևոտ,
Մի երկինք անվերջ,
Եվ մի հուշ է վիրավոր
Արթնանում իմ մեջ:

Սարալանջ էր, վարատափ,
Հորովել ու կանչ,
Հոգնած մաճկալ ու հոտաղ,
Եվ հոգնած լծկան:

Ցիու թամբ ու զանգուլակ,
Մի սանձ ու խսիր,
Եվ մի լանջը թաց կուլա
Եզրին ակոսի:

Ցորերին աչք էր ածում
Ժեռ քարը դեմի,
Ուր զամբիկն էր արածում՝
Ականջը ձենի…

Ծոցում պահած թուղթ մի սև,
Հերկի մեջ խոնավ,
Ապին փլվել ու, ասես,
Էլ վե՞ր չի կենա…

Մի պարզ օր է արևոտ,
Մի երկինք անվերջ,
Եվ մի հուշ է վիրավոր
Մորմոքո՞ւմ իմ մեջ:

ՊԱՏԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՐԱՓԻՑ

Ամպը լեռան ուսին թաց
Ճերմակ թև է կարապի,
Եվ գետակն է թռչում ցած
Պատանության քարափից:

Ծաղկաթերթեր են թռչում
Մութ խոռոչից քարայրի,
Ամպշող ու ցող են շնչում
Մացառուտները վայրի:

Միրհավի կանչ ու հավքի,
Աստղաբույլ թուփ ծիրանու…
Ձորերն ընկած մանկան պես
Թափառում է հովն անուշ:

ԱՄՊԻ ԱՄՈԹԻՑ

Կածանն իջավ ձորը,
Թեքվեց աղբյուրի շրթին,
Ու վեր թռավ լորը
Շամբուտներից մթին:

Խայտաց աղբյուրը ջինջ
Բերկրանքի մեջ, հևքի,
Եվ ամոթից՝ ամպի
Քողը քաշեց դեմքին:

ՏԻՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԱ

Մթնշաղն իջավ
Կածանի վրա,
Սրտիս դող իջավ,
Տիրությո՞ւն արա:

Սարի զովն իջավ
Ու խառնեց իրար
Խոհ ու անրջանք՝
Տիրությո՞ւն արա:

Ուր որ է՝նիրհեմ
Քարափի վրա՝
Իմ երազներին
Տիրությո՞ւն արա:

ՊԱՏՐԱՆՔ

Մեկը կանչեց հեռավոր
Մանկության խոր ձորերից,
Եվ այդ կանչից մենավոր
Վեր թռավ սիրտս նորից…

Մոր կանչ էր, թե՝ քրոջ ձայն,
Սիրածի կանչ կամ էլ՝ հոր,
Որ հասավ ինձ մանկության
Եզերքներից հեռավոր…

Վճիտ երկինքը ժպտաց,
Եվ…արևն էր ճառագում,-
Սիրտս այնպես խլրտաց,
Կարծես ա՜յգ էր իմ հոգում…

ՄԻ ՁԵՌՔ ԻՋՆԵՐ

Գետակի խրխինջ ձորում,
Եղնիկի սարսուռ քարին,-
Սարերը ստվերներում
Սուզվեցին ու…մի՜տք արին:

Գունատվող քարափն ի վեր
Կաքավի անուշ տաղիկ,-
Վախվորած մի ձե՜ռք իջներ
Հույսերիս մթնշաղին…

ԵՎ ԲԱՑՎՈՂ ՕՐՎԱ ՊԵՍ

Լուռ մնա ամպի պես,
Հողի պես լո՜ւռ մնա,
Լուռ գնա ճամփի պես,
Լեռան պես լու՜ռ մնա,
Դաշտի պես՝ ինքն իր հետ,
Ձորի պես՝ ինքն իր մեջ,
Եվ բացվող օրվա պես
Լու՜ռ մնա, լու՜ռ մնա…

ՄԻՐՀԱՎ

Միրհավ իմ, կանչիր, միրհավ իմ, կանչիր,
Հեռու քարափից իմ իրիկնացող,
Ես անդարձ անցած օրերի միջից
Որսում եմ դեռ քո ձայնը խլացող…

Դողում է սիրտս աշնան սառ շնչից,
Տագնապներս խուլ ո՜վ կփարատի,-
Միրհավ իմ, կանչիր, միրհավ իմ, կանչիր,
Շուտով լռություն կիջնի քարափին:

ԾԱՌԵՐԸ

Ձորի պռնկից՝ ձորն ի վար կախվում,
Անդունդի եզրից՝ միտվում են երկինք,
Ժայռերի կողը արմատներ խրում,
Քարափի վրա խշշում են կրկին:
Տապի մեջ կանաչ սաղարթ են նետում,
Փակում են ամեն խորշակի բերան,
Կայծակն է նրանց թևերը հատում,
Նրանցից այո՜ւն են կտրում ու գերան:
Բայց էլի, մեկ է, շյուղարձակվում են,
Վերընձյուղվում են արմատ ու բնից,
Թև ու թռիչք են առնում, շտկվու՜մ են,
Խոնավություն են կորզում անհունից
Եվ զով ու շունչ են սփռում ձորն ի վեր:
Ծառերն ապրում են…

ԻՐԻԿՆԱԺԱՄ

Նեղ արահետ,
Քարափ ու խորշ,
Ձորերի հետ
Խորհրդավոր:

Լքված մի շուն
Անձավի մոտ,
Ձովի մեղմ շունչ
Ու խոնավ հոտ:

Կապույտ մուժում,
Քարափն ի վեր՝
Մութն է խուժում
Ծերպերից ներս…

ԲՆԱՊԱՏԿԵՐ

Մայրացած հող ու հովիտներ ծաղկած,
Ուրցի բուրմունքով բռնկված սարեր,
Կաքավն է ձորում սաղմոսում երկար,
Աղբյուրն է լցվում գուռի մեջ քարե:

Աղավնիների երամն է իջել
Գետափի խոնավ քարերի վրա,
Եղնիկն իր դունչն է ջրի մեջ սուզել
Եվ…բարակ մե՜ջքն է սարսռում նրա:

ԿԱՆՉՈՒՄ Է ԻՆՁ

Իմ մանկության հեռուներից
Մի մոշահավ կանչում է ինձ,
Մի խլահավ տանջում է ինձ,
Մի արագի՜լ,
Ա՜խ, մի կարա՜պ,
Եվ մի քարա՜փ
Կանչում է ինձ:
Քարափից վար, քարափի դեմ՝
Դրախտի ձոր ու մի եղեմ՝
Աղբյուր արծաթ,
Ու ծնկածալ
Մի նեղ կածա՜ն,
Մի ծիածա՜ն…
Կանչում, կանչում, կանչում է ինձ:

ԱՆՏԱՌՈՒՄ

Ոտքս քարին առավ,
Սիրտս նվաց ցավից,-
Հավքը ահից թռավ
Խոնավ քարանձավից:

Չորուկ մի ճյուղ ճայթեց,
Եղնիկն անտառ սուրաց,
Եվ…ժպի՜տս կաթեց
Վաղորդյան շաղի վրա:

ԻՄ ՀՈՒՇԵՐԸ

Իմ հուշերն աստղոտ են,
Ուրցի բույրով են շնչում,
Իմ հուշերը կարոտ են,
Անհուն սիրով են շնչում:

Անդարձ-անցած օրերի
Զանգակներով ղողանջուն,
Երամի հետ ամպերի,
Երկինքներով են թռչում:

Մերթ իջնում են երկնքից,
Իմ հոգու հետ խլրտում,
Մերթ խռովու՞մ են ինձնից,
Որբուկների պես անտուն:

Լի են սիրով իմ անանց,
Երազներով դեգերուն,
Արեգակնե՞ր կան նրանց
Լացակումած աչքերում:

ՎԵՐՀՈՒՇ

Քարափի վրա վրնջում էր ձին,
Բլուրներն ի վեր ու ձորերն ի վար,
Եվ ձայնը նրա ղողանջում էր զիլ,
Եվ արձագանքն էր լսվում ընդերկար:
Շուլալվում էին ստվերներն իրար,
Մթնժորում էր բարձունքը վերին,-
Մեկը գնու՞մ էր այդ կանչի վրա՝
Երկնի կապույտն առած ուսերին…

ՉՄԵՌՆԱՄՈՒՏ

Չյուն է մաղում մեղմիկ,
Ծածկում հանդ ու առու,
Եվ քարափը դեմի,
Եվ սարերը հեռու…

Ինչ-որ ահ կա բքի
Մամուռներում խամրած,
Եվ սարսու՞ռ կա հավքի
Թավուտների վրա…

ԵՍ ՁՈՐԻ ՆՄԱՆ

Փչում է ինձնից լեռների շունչը,
Զգում եմ բույրը մասրենու, մոշու.-
Ես ձորի նման լռին ու մու՜նջ եմ,
Թավուտի պես եմ, որ դեռ չի՜ խշշում:

Դժվար է ասել, ով եմ, ինչ եմ ես,
Ինչպես է բացվում ու փակվում օրս,
Այն խորհրդավոր արահետի պես,
Որ մտորելով իջնում է ձորը:

ՍԵՐ

Աստծո նման անմատչելի,
Անմեկնելի խորհուրդ որպես,-
Սիրտս զո՜հ է բերում էլի,
Եվ…չի՜ հասնում աղոթքս քեզ:

ՔՈ ԱՆՈՒՆԸ

Հովի շշուկ եմ, շվի եմ ուրախ,
Ծիրանի փող եմ, սրինգ եղեգի,
Եվ քո անունը շուրթերիս վրա
Թրթռու՜մ է ոնց երգ ու մեղեդի:

ԷԼ ՉԵՍ ԼՔԻ ԻՆՁ

Թե հանկարծ հայտնվես,
Քարափի վրա
Կփռի արևն իր վառ ծիրանին,
Անզուսպ հրճվանքից
Անդունդներն ի վար նետելով իրեն՝
Կկապի ջրվեժն իր ծիածանը,
Եվ նրա կախարդ համանվագին
Կխառնվի բույրը հովտաշուշանի:
Եվ հենց այդ պահին
Ես իմ մտքի մեջ
Կքանդակեմ քո մարմինն անտիկ,
Կծածկեմ երկնի թափանցիկ քողով,
Եվ աչքերիդ մեջ
Կվառեմ սիրո այնպիսի կրակ,
Որից կարող են շիկանալ անգամ
Ապառաժները,
Շուրթերդ կօծեմ այնպիսի՜ցողով,
Որն ըմպում են լոկ…աստվածնե՜րը:
Եվ այնուհետև կնայեմ ես քեզ
Հիացքից բացված իմ լայն աչքերով,
Եվ ծունր իջած քո հայտնության առաջ
Կընծայեմ ես քեզ իմ սիրտն անբիծ,
Որից այլևս դու չե՜ս հեռանա,
Էլ չե՜ս լքի ինձ:

ՄԻՆՉԴԵՌ ԻՄՆ ԷԻՐ

Իմ ու քո միջև
Տարածությունը լեցուն է հիմա
Մի…անդա՜րձ կյանքով,
Որ աղմկում է ինձանից հեռու,
Ինչպես գետը՝իր ակունքից պարզկա…
Մինչդեռ ի՜մն էիր,
Երբ կրում էիր ինձ ինքդ քո մեջ,
Երբ կրում էի քեզ ինքս իմ մեջ:
Ա՜խ, հնա՜ր լիներ՝վերադառնայիր
Եվ հավաքեիր
Առաջին սիրո այն խանձարուրի
Ծվեները տաք,
Որով ծածկեի՜ր մարմինն իմ տկար…
Մինչդեռ ի՜մն էիր,
Իմ ակունքի մեջ՝ որպես աստղացոլք:
Ա՜խ, հնա՜ր լիներ,
Դառնայիր դեպի այն ուխտատեղին,
Ուր քո ժպիտը
Կաթում էր՝ինչպես առինքնո՜ղ աղոթք:

ԿԱՆՉԻՐ ԻՆՁ

Կնոջս՝ Ջուլիետային

Կանչի՞ր ինձ միայն,
Եվ Կթոթափեմ ես իմ ուսերից
Ձիգ տարիների բեռը վաղեմի:
Կանչի՞ր ինձ միայն,
Եվ իմ հոգու մեջ կծագի նորից
Առաջին սիրո տագնապն արդար,
Եվ դու կտեսնես,
Թե իմ հրճվանքից ինչպե՞ս է հալչում
Կարոտի մաղած ձյունը մազերիդ:
Կանչի՞ր ինձ միայն,
Եվ ես կտեսնեմ,
Թե ինչպես ես դու
Ծունկի՞գալիս իմ հարության առաջ՝
Կրակապաշտի մոլեռանդությամբ:
Իմ այս գիշերվա երազի մեջ բիլ,
Հայտնվել էր ինձ մի նարինջ զամբիկ,
Թե կրակ հագած ու հագած կարմիր
Ու մուրա՞զ է ձին,
Եվ, անշուշտ, բարին պիտի կատարվի,
Առավել ևս, կանչի՞ր ինձ, կանչի՞ր…
Կանչի՞ր ինձ միայն,
Եվ դու կիմանաս, թե ինչպես եմ ես
Ե՞տ դառնում դեպի ակունքս պարզկա
Եվ հոսանքի դեմ լողում դեպի քեզ՝
Նետելով գիրկդ մանուշակներն այն,
Որ դեռ բուրու՞մ են
Այն վաղնջական թարմությամբ իրենց…
Կանչի՞ր ինձ միայն,

Եվ դու կտեսնես,
Թե ինչպես եմ քեզ
Հագցնում պատմուճանն այն երազների,
Որոնց թափանցիկ քողի տակ պիտի
Բռնկվե՞ր, որպես կրակե մի սյուն,
Մարմի՞նդ անտիկ…
Կանչի՞ր, օ, կանչի՞ր,
Եվ ես կհայտնվեմ նռան գույն հագած,
Ճառագած լույսով այն առավոտի,
Որ պիտի բացվե՞ր հեռավոր մի օր
Ու շլացուցիչ մի ճերմակությամբ
Հովտաշուշաննե՞ր ընծայեր հողին,
Թերթերում իրենց՝ուլունքնե՞ր ցողի…
Կանչի՞ր ինձ, սակայն,
Եվ դու կտեսնես
Փոխկանչդ ինչպես
Քարանձավների մթին խորշերից
Աղավնիների երամներ թռցրեց
Ու եթեր հանեց,
Որ կույր բնազդից
Բնավ չխզեն երկինքների հետ
Դաշնությու՞ն իրենց,
Կանչիր դու միայն,
Եվ ինձ կթվա՝
Կպայթեն բոլոր բողբոջներն այն,
Որոնք վերահաս գարունքվա շեմին
Անբարենպաստ եղանակներից
Ցրտահա՞ր եղան:
Կպայթեն, այո,
Եվ մի գիշերում ծաղկած ծիրանին,
Ինչպես նորահարս-
Կծածկի դեմքը երեսքողի տակ,

Քամին բացատում թմբուկ կզարկի,
Կփողահարի փողն իր մեղեդին
Եվ կժողովի ծաղկունքը բոլոր
Հարսնահանդեսի՝
Դիտելու մեր խենթ պա՞րը կրակի
Երկնքի ներքո
Ու հազարամյա
Արևի զնգուն ծնծղաների տակ:
Կանչի՞ր դու միայն,
Եվ կհասկանամ ես քո այդ կանչից,
Թե ինչու չեղավ խրախճանքը մեր,
Թե ինչու հանկարծ քամու պա՞ղ շնչից
Մոմերը հանգան…
Այդ ինչպե՞ս եղավ,
Ուզում եմ հիշել, թե ինչպե՞ս եղավ,
Որ պարզկա երկնում ամպրոպը ճայթեց,
Կայծակի շեղբը
Մխրճվեց սիրտը մատղաշ ծիրանու՝
Բոց արձակելով կրծքից ծխամած:
Մեկը տագնապով գուժեց.
-Պատերա՞զմ…
Եվ հնձված խոտի բուրմունքի տեղակ
Խանձահո՞տ եղավ:
Կանչի՞ր դու միայն,
Եվ ես կհիշեմ
Մեր հրաժեշտի համբույրը նորից,
Որ համբույր չէր լոկ՝կնի՞ք ու կողպե՞ք,
Որ երկար ու ձիգ տարիներ անվերջ
Քո շուրթերը փակ պահեցին մի այլ
Շուրթերի հանդեպ…
Ա՞խ, իմ համբույրը,
Որ չհասցրեց
«Մեղանչել» նույնիսկ մի մանկան համար,

Կարծես մի ամբողջ հավիտենություն
Ստիպեց, որ ծո՜մ պահի մարմինդ,
Որ կավն էր միակ
Քո բոցամորուս բրուտի համար…
Կանչի՜ր ինձ, սակայն,
Եվ մորմոքներս
Թող քեզ զղջումի աղոթք չթվան՝
Տվայտանքների համար քո կրած,
Իսկ ո՞ւմ չէ հայտնի,
Որ երջանկության գին ունեն միայն
Տառապանք ու ցավ
Լոկ նրանց համար,
Ովքեր այս կյանքում
Հավատարմության սյունի՜ն են գամված:
Կանչի՜ր դու, սակայն,
Եվ ես ուզում եմ հավաստել իրավ՝
Մե՜ծ արժեք ունի Հայրենիքն այն,
Որի վտանգի պահին ակամա
Մենք ընդմիշտ գրավ դրինք ոչ միայն
Սե՜ր, ժպի՜տ ու բա՜խտ,
Այլև կյանքը մեր:
Կանչի՜ր, օ, կանչի՜ր,
Եվ ես ուզում եմ ներբողել նաև
Նրանց, ում բաժին հասավ նույն բախտից,
Ում զարկեց թեպետ հողմը կատաղի,
Բայց գալարման մեջ
Ցավի ու վշտի,
Անընմբռնելի կորստի գնով,
Անիմանալի զորության ուժից
Իրենք իրենցից հառնեցի՜ն կրկին
Եվ չկուրացան
Մխացող վերքի ծխի՜ց հեղձուցիչ…

ՄԻ՞ԹԵ

Պետք չեն ինձ հիմա
Քո հմայքները,
Քո քմայքները,
Որ անսքո՜ղ են…
Մի՞թե հմայքիդ
Գաղտնիքը խորունկ
Այդ խորհրդավոր
Շղարշի քո՜ղն էր…

ԵՐԲ ԵՍ ՉԼԻՆԵՄ

Երբ ես չլինեմ՝
Ո՞ւմ ես կանչելու,
Ո՞ւմ ես տանջելու,
Երբ ես չլինեմ,
Երբ անձկության մեջ
Մորմոքա հոգիդ,
Քմահաճ սիրտդ
Ո՞ւմ է տենչալու…

ԴԻՄԱՑԻՐ, ՍԵՐՍ

Դժվար օրերս՝
Փորձաքարե՞ր են,-
Դիմացիր, սերս:

Դժվար օրերս՝
Տվայտանքնե՞ր են,-
Դիմացիր, սերս:

Դժվար օրերս՝
Տառապանքներ են,-
Դիմացիր, սերս:

Դժվար օրերս՝
Սրտի վերքե՞ր են,-
Դիմացիր, սերս:

Դժվար օրերս՝
Սիրո երգե՞ր են,-
Ընդունիր, սերս…

ՔՈ ԿԱՐՈՏՆԵՐԸ

Իմ ափերի մեջ
Քո կարոտները
Մարմրում են դեռ,
Չեն է՞լ խամրելու…

Իմ աչքերի մեջ
Քո կրակները
Առկայծում են դեռ,
Չեն է՞լ մարելու…

Իմ ունկերի մեջ
Քո շշուկներն են,
Տաք շշուկները՝
Ցավի հետ անլուր…

Իմ խոհերի մեջ,
Խռովքիս խառնված,
Երկար ես դեռ ինձ
Սիրո սրբագին
Հրի՞ն մատնելու:

ԵՐԲ ԱՄՊՈՏ Է ՕՐԸ

Երբ ամպոտ է օրը, մթնշաղ է ու պաղ,-
Քեզ միշտ պայծառ տեսած իմ աչքերին նայիր:

Երբ քո շուրջը բուք է, ձյունամրրի՞կ ու հո՞ղմ,-
Շանթ ու որոտ տեսած իմ աչքերին նայիր:

Երբ ծաղիկը խամրի քո ափի մեջ փոքրիկ,-
Մարգ ու արոտ տեսած իմ աչքերին նայիր:

Ու երբ ամպը թախծի, նստի հոգուդ վրա,-
Խինդ ու կարոտ տեսած իմ աչքերի՞ն նայիր:

ՄԱՐԻԱՄ

Ձեռքից բա՞ց մի թող առիթը, Մարիամ,
Թույլ տուր, որ այսօր քեզնով հիանամ,
Առ ինձ քնքշագին գգվանքներիդ մեջ,
Կրծքիդ սեղմիր ինձ, գուրգուրիր անվերջ,-
Ես ամբողջովին քոնն եմ այս ժամին,
Աստծո պարգևած այս տարաժամին…
Ո՞վ է մեզ տեսնողն հիմա, խոսողն ո՞վ,-
Բամբասողն ո՞վ է, կամ թե լսողն ո՞վ,-
Ձեռքդ տուր, այդպես հենվիր իմ ուսին,
Թավուտն ապահով, գիշերն անլուսին,
Եվ դու տեղով մեկ կրակ ես բոսոր,
Տերը այնպես է կամենում այսօր,
Որ քո բոցերում այրվեմ, մոխրանամ…
Ձեռքից բա՞ց մի թող առիթը, Մարիամ:

ՍԻՐԵԼԻ ԵՍ ԴՈՒ

Թող արևը հեգնի,
Ես սիրո՞ւմ եմ քեզ,
Բուքը մոլեգնի,
Կարկուտը տեղա,-
Ես սիրու՞մ եմ քեզ:
Օրն ամպոտ լինի,
Թե արև շողա՝
Խնդուն է սիրտս,
Թե տրտում, իրավ,
Արդարացի ես
Կամ թե անիրավ՝
Ես սիրու՞մ եմ քեզ:
Եվ հաշտ, և խաղաղ
Օրերի համար,
Եվ թե տարաբախտ
Պատահարներին,-
Սիրելի՞ ես դու,
Սիրելի՞ ես դու:

❒

Եվ մի այնպիսի սիրտ է տրված ինձ,
Որ ինչ էլ լինի, երբ էլ ուզենամ,
Իմ իսկ սեփական վիշտը ներս առած,
Ուրիշի ցավի՞ց այսպես խենթանամ:

ՎԵՐԱԴԱՐՁԻՐ

Կածաններից շաղոտ,
Թավուտներից խոնավ,
Հեռուներից աղոտ
Վերադարձիր տունդ…
Խաբված երազներիդ
Երկինքներից պաղոտ,
Որպես վերջի՜ն աղոթք՝
Վերադարձիր տունդ…

ԷՔՍՊՐՈՄՏ

Քնած լինեմ, թե արթուն,
Երազներ եմ տեսնում ես,-
Ավա՜ղ, էլ չե՜ս հայտնվում դու,
Էլ չի՜հասնում կանչս քեզ:
Ոչ եղել ես, ոչ էլ կաս,
Կյանքս էլ տեսիլ էր, ասես,
Երազներից իմ անգամ
Էլ ոչի՜նչ չե՜մ հիշում ես:

ՔԵԶ ՓՐԿԵԻ

Ծուխը երկինք հասել,
Հրե սյուն է հեռվում,-
Իմ կարոտից, ասես,
Այդ քո տունն է վառվում…

Հնար լիներ գայի,
Թեկուզ ճիգով վերջին
Քեզ փրկե՞ի քո տան
Կրակների միջից…

ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՄՆԱ

Սիրելու համար նախ համբուրեցի
Հիասթափության ճակատը տամուկ,
Ճաշակեցի ես պակասն ու թերին՝
Քեզ միշտ անթերի տեսնելու համար:
Թափառաշրջիկ չէ սերը բնավ,
Ոչ ստրուկ հլու,-
Ինչ-որ տեղ դու, ա՜խ, սրբություն մնա
Երկրպագելու…

ԻՄ ՀԱՅԱՑՔԸ

Եվ քեզ առաքված
Թևերում իմ զույգ,
Քնքշանքիդ կարոտ
Իմ ափերի մեջ,
Պարզում եմ քո դեմ
Բողոքս անզոր
Ու ասում.
-Ե՞տ բեր ճամփեքից մոլոր
Հոգնած ու շվար իմ հայացքը…

ԻՄ ԲԱՐԻ ԱՐԵՎ

Հողանյութ եղիր,
Կավ եղիր հարմար,
Մարմին ու ձև տամ
Եվ ոգի ու շունչ
Դառնամ քեզ համար…
Սևահող եղիր,
Անձրևին մնա,
Որպես հունդ նետվեմ
Քո գիրկը խոնավ…
Ու ելնեմ որպես
Արևածաղիկ,
Որ ուր էլ լինես,
Իմ բարի արև,
Թեքվե՞մ դեպի քեզ…

ԴՈՒ ԻՆՁ ՀԱՄԱՐ ՀԻՄԱ

Բոլորովին ուրիշ
Մոլորակի նման,
Որ սկզբում քաոս
Եվ նախասկիզբ է դեռ,-
Դու ինձ համար հիմա
Նախ արարիր ցամաք
Հետո երկինք, ապա՝
Դու արարիր և ծով,
Եվ արարիր դրախտ,

Ու դրախտում մի տուն,
Որ չունենա՞դեռ հուշ,
Որ չունենա՞երազ,
Եվ չունենա՞դեռ ցավ…
Հետո այնտեղ դու մեր
Սիրտը տեղադրիր
Եվ նոր միայն ինձ հետ
Դու առագաստ մտիր,
Թող պատերն իմ տան
Ես իմ հուշո՞վ ծեփեմ,
Իմ երազո՞վ մարմանդ
Եվ…իմ ցավո՞վ:

ԱՐՁԱԿԻՐ ԴՈՒ ԻՆՁ

Քո ափերի մեջ
Աղավնու նման
Ծվարել եմ ես,
Եվ ո՞նց են դողում
Քո մատները՝ինձ
Կորցնելու ահից…
Արձակի՞ր դու ինձ
Ու մի մոռացիր,
Որ ինձ տրված են
Թռիչք ու թևեր,
Եվ երկնքի հետ
Դաշնության մեջ է
Պա՞րն իմ սլացիկ…
Արձակիր դու ինձ
Եվ մի լուսանցք թող,
Որ եթե հանկարծ
Երկինքը մթնի,-
Ես կարողանամ
Ե՞տ վերադառնալ…
Արձակիր դու ինձ
Եվ հիշիր նաև,
Որ սիրուց առաջ,
Գիտակցությունից
Առաջ էլ դեռ կար
Հավատարմության
Բնա՞զդը մեր մեջ…

ՄԻ՞ԹԵ, ՍԻՐԵԼԻՍ

Մի՞թե, սիրելիս, ծերանում եմ ես,
Տարուբերվում եմ տաք ու պաղի դեմ,
Քո մազերի մեջ, որ դեռ բուրում են,
Ես նշմարու՞մ եմ ճերմակն արդեն:

Մի՞թե, սիրելիս, ծերանում եմ ես,
Բայց երեկ չէ՞ր դեռ, որ թամբի վրա,
Երազանքների հրից շիկացած,
Սլանու՞մ էի քամու պես ուրախ:

Մի՞թե, սիրելիս, ծերանում եմ ես,
Որ եղյամն ինձ սարսուռ է բերում,
Եվ աշնան խամրող սաղարթների տակ
Վառվող խարույկն է ինձ հրապուրում:

Մի՞թե, սիրելիս, ծերանում եմ ես,
Որ հուշերիս եմ դառնում մտերիմ…
Հոգեպահուստի մասին եմ խոսում
Եվ թվարկու՞մ եմ կորուստներն իմ:

Մի՞թե, սիրելիս, ծերանում եմ ես,
Որ մոռացել եմ գգվանք ու գորով,
Պարտականության ու սիրո միջև
Մոլորվել եմ ես ու…դարձե՞լ ներող:

Մի՞թե, սիրելիս, ծերանու՞մ ենք մենք…

ՄԱՅՐԱԿԱՆ

Բախտավոր եմ ես,
Որ քո լույսը կա,
Մայրության լույսը՝
Օջախիս սեմին…

ՄԱՅՐԵՐԸ

Մայրերը ծերանում են դանդաղ,
Մայրերը մարմրում են լռին,
Աննկատ հեռանում են մեզնից…
Ու հետո փնտրում ենք նրանց,
Բայց միայն հառնու՜մ են նրանք
Անմարմին, խաբուսիկ պատրանքից…

ՄԱՐԳԱՐՏԻ ՊԵՍ

Թող երգիս առուն հոսի,
Կարկաչի, անվերջ գնա,
Ափերի մեջ իր խոսի
Ու մաքու՜ր, մաքու՜ր մնա:

Երբ թեքվես, իմ մտերիմ,
Սիրտս պարզ երևա քեզ՝
Հատակում հոսող ջրի
Շողացող մարգարտի պես:

ՀԱՅՐԵՆԻՔ ՈՒ ՀՈՂ

Մայրերը լաց են եղել այդ գիշեր,
Մայրերը սուգ են արել ու կական,
Անցած ու անդարձ օրերն են հիշել,
Երբ կռվի դաշտում պայթած մի ական
Խեղել է վերջին հույսը տունդարձի՝
Որդու, ամուսնու կամ թե…սիրածի…

Մայրերը լա՞ց են եղել այդ գիշեր,
Մայրերը սու՞գ են արել ու կական,
Մի հարսանեկան առագաստ հիշել,
Մի ուլունքաշար օրորոց մանկան,
Ճամփով սուրացող մի սայլ եռաձի,
Մի կտրիճ՝ձեռքում փոկերը սանձի,
Որ, երանելի բախտից շլացած,
Թռչում էր գիրկը սրտով սիրածի…

Մայրերը լա՞ց են եղել այդ գիշեր,
Մայրերը սու՞գ են արել ու կական,
Եվ նրանց լացի ու ողբի միջից
Սևակնած երկինքն հոնքերն է կիտել
Կալերի վրա ու ցորնի շեղջի,
Իջել է մեգ ու մառախուղ, պատել
Վեհ ու հիասքանչ տեսքը դեզերի,
Հետո առաջին ձյունն է հայտնվել
Գիշերվա պես սև նրանց մազերին…

Մայրերը լա՞ց են եղել այդ գիշեր,
Մայրերը սու՞գ են արել ու կական,
Եվ հետո լաց ու կոծի մեջ հիշել,
Որ պիտի շտկեն ուսերն իրենց,
Որ բուսնեն իրենք իրենց իսկ ոստին,
Որբ ու ծծկերով տուն դառնան նորեն,
Հայրենիք ու…հո՞ղ դառնան վերստին:

ԵՍ ՉԵՄ ՄՈՌԱՑԵԼ

Խփում էին ինձ աջից ու ձախից,
Խփում դիմացից, թիկունքից անգամ,
Բայց հարվածներն այդ առանց վախի
Ես ընդունել եմ միշտ արիական:

Եվ այսպես կոփվել փորձանքների մեջ,
Շատ բան եմ ես իմ կյանքում հասկացել,-
Չեմ հիշում չարի դավերն անվերջ,
Ընկերոջ դավը՝ես չե՞մ մոռացել…

ՈՐ ԻՆՉ ԷԼ ԼԻՆԻ

Եվ մի այնպիսի սիրտ է տրված ինձ,
Որ իմ մեջ այնքան կրակ ունենամ,
Չսարսեմ երբեք բքից ու ցրտից,
Հոգս ու բեռան տակ այսպես դիմանամ:

Եվ մի այնպիսի սիրտ է ինձ տրված,
Որ ինչ էլ լինի, ինչ էլ ուզենամ,
Իմ իսկ սեփական վիշտը ներս առած,
Ուրիշի՞ցավից այսպես խենթանամ:

ՍԻՐՏՍ ՄՂԿՏԱՑ

Խլրտաց աղբյուրն իմ շուրթերի տակ,
Երբ որ թեքվեցի նրա ակունքին,
Եվ պատանության հուշերս արթնացան՝
Ալեկոծելով նորից իմ հոգին:

Եվ ես պատկերդ ջրերում տեսա,
Ջահել, թխավարս, աչքերով ծավի,
Իմ վաղնջական սիրուն չհասած՝
Սիրտս մղկտա՜ց կարոտի ցավից:

❒

Կապված եմ ձեզ հետ աշխարհում արար,
Հայրենի եզե՜րք, իմ տու՜ն, իմ լեռնե՜ր,
Թող հազար անգամ զարկվեմ ձեզ համար,
Միայն ձեզանից հեռու՜ չմեռնեմ:

ՔՈ ԱՐԵՎԻ ՀԵՏ

Ես քո արևի հետ եմ արթնանում
Եվ մայր եմ մտնում քո արևի հետ,
Քո առավոտի ցնցուղն ընդունում,
Ցուլվում իրիկվա երազներիդ հետ:

Թավիշ կանաչիդ ցողն եմ ադամանդ,
Եվ մթնշաղը իրիկնադեմիդ,
Պահի՜ր ինձ, պահի՜ր, երկիր հնավանդ,
Որպես աստղի ցոլք՝ ընկած տան շեմիդ:

ՔԵԶ ՀԵՏ ԿԲԵՐԻ

Չի կանչի, բնավ, քեզ հողն օտարի,
Օտար հավքը քեզ համար չի երգի,
Ուրիշի մայրը, ինչքան էլ բարի,
Հարազատ մոր պես քեզ չի՜ամոքի:

Թովիչ է տեսքը հայրենի քո տան,
Հայրենի երկինքն ու ցոլքն աստղերի,
Եղբայր իմ, միշտ էլ օրհնիր այն ճամփան,
Որ ու էլ լինես՝ քեզ ե՜տ կբերի:

ԵՍ ԽՈՆԱՐՀՎՈՒՄ ԵՄ

Ամենքի առաջ ծնկի եմ գալիս,
Լռին խոնարհվում դիմացն ամենքի,
Ոմանք կարծում են՝գլուխ եմ տալիս
Եվ գու՞թ եմ հայցում՝պարզած իմ հոգին:

Ոմանք էլ նայում՝ջերմ ու սիրառատ
Եվ…գիտեն, որ ես անճար ու խեղճ չեմ,-
Գլխա՞րկ եմ հանում իմ խղճի առաջ,
Եվ խոնարհվում եմ վեհությա՞ն առջև:

ԱՂՈԹՔԻ ՆՄԱՆ

Փառքի տենչը ինձ չնետեց հեռուն
Ոչ էլ բարձր դիրք երազեցի ես,-
Ինձ անմար սիրուդ կրա՞կն է վառում,
Ինչպես սրբության՝ ես գամված եմ քեզ:

Թող այդպես էլ քեզ ունենամ ընդմիշտ,
Իմ բախտի աստղ՝ շողշողուն ու ջինջ,
Եվ թող բարբառդ՝ քարակոփ ու բիրտ,
Աղոթքի նման հնչի ականջիս:

ԹԵ ԲՈՐԲՈՔ ՊԱՀԵՍ

Այստեղ, այս հողում, ուր իմ սրբագին
Ապուպապերի աճյունն է հանգչում,
Ամուր է դրված քարն իմ տան հիմքի,
Ցնծում է հոգիս ու չի՞ երկնչում:

Բայց եթե մի օր ես էլ չլինեմ,
Մեկ է՝ բախտը քեզ ընդմիշտ կժպտա,
Քեզ չի ընկճի անգամ ցա՞վն անել,
Թե բորբոք պահես օջախն իմ տան:

ԻՄ ՄԵՂՔՆ ՈՒ ՑԱՎԸ

Իմաստուն է քո սիրտը կանացի
Եվ անսխալ է գուշակում դավը,
Բայց գաղտնիքս քեզ ոչ ոք չի բացի,
Լոկ ի՞նձ կմնան իմ…մեղքն ու ցա՞վը:

Հեռու վանելով կասկած ու կսկիծ
Ելնում ես դեմս մեծամոր վայել,
Երբ գիրկդ եմ գալիս ուրիշի՞… գրկից
Ու…խուսափու՞մ եմ աչքերիդ նայել:

ՀԵՔԻԱԹՆԵՐ ԱՆՍՈՒՏ

Անցած գարունը էլ ետ չի դառնա,
Չի կրկնի իրեն ամառը անցած,
Քունքերին քո նոր եղյամ կդառնա
Ուշ աշնան վերջին օրը միգամած:
Ճամփան կփակի ձյունն առաջին,
Պատուհանիդ տակ, ցրտաշունչ դրսում
Անցած ու անդարձ օրերի մասին
Բուքը կմանի հեքիաթներ անսուտ:

ՉԷ՞ ՈՐ ԴՈՒ ԳԻՏԵՍ

Քեզ մնաս բարով չեմ ասում, բնավ,
Հեռու հեռավոր վայրեր մեկնելիս,
Չէ՞ որ դու գիտես ինձ լուռ հասկանալ
Եվ պոռթկումներս զսպել, սիրելիս:

Ու քո դեմքը այդ, որ ժպիտով է
Սքողում հոգուդ տագնապները խոր,
Ճառագում է այն լույսն առավոտող,
Որ ցրում է իմ թախի՜ծն ահավոր:

ԻՆՉՊԵՍ ՈՒԽՏԱՎՈՐ

Թե այնպես լինի, էլ չհամբուրեմ
Վարսերը քո շեկ, աչքերդ խոնավ,
Տրտում հուշերս քեզ կպարուրեն,
Պատրանքի ցավից հոգիս կնվա:

Թե այնպես լինի՝ձեռքս երերուն
Չհասնի էլ քեզ…չլինե՞ս արդեն,
Ինչպես ուխտավորն՝Աստծո տաճարում,
Կգամ սրտաբեկ, քեզ լու՞ռ կաղոթեմ:

ԻՄ ՏՈՒՆԸ

Տեսնես իմ մասին ինչեր է խորհում,
Ոտնահետքերիս կարոտ իմ տունը,
Ինչ է մտորում սարյակը փխրուն,
Պատի ճեղքից ներս մտած իր բույնը:

Պատի խոր ճեղքում ծղրիդն է երգում,
Եվ տիրակալ է ամայությունը,
Ոտնահետքերիս կարոտից անքուն
Մոլոր կածանն է գնում իմ տունը:

ԵԿԱՐ, ԽԱՌՆՎԵՑԻՐ

Բուքը երգում է ցանկապատի տակ,
Ձյունի փոշին է նստում ծառերին,
Եվ դու այսպիսի մի ցուրտ ժամանակ
Եկար, խառնվեցիր իմ երազներին…

Եկար առաջին ձյունի պես մաքուր,
Եվ անջատումի պահին դժվարին՝
Բուքը աղմկեց, գալարվեց տխուր
Ու ձյունի փոշին նստե՞ց մազերիս...

ԵՐԲ ԴԱՌՆԱՄ ՀԵՌՎԻՑ

Երբ դառնամ հեռվից, երբ վերադառնամ,
Ու հանկարծ դեմս ելնես դու մի օր,
Նախ կհամբուրեմ ճակատդ անբիծ
Եվ աչքերիդ մեջ կնայեմ մոլոր…

Կնայեմ ինչպես եթերին համակ,
Որտեղ պահվում են աստղերս լուսե,
Եվ ամոքելով իմ մեղքն ակամա՝
Նոր կհամբուրեմ շուրթերդ, իմ սեր:

ԴԻՄԱՎՈՐԻՐ ԻՆՁ

Դիմավորիր ինձ դու մեր տան շեմին
Եվ բաց ճակատով արի ընդառաջ,
Կհայտնվեմ միշտ էլ իմ ձիու թամբին,
Կնետվեմ գիրկդ այնպե՜ս սիրառատ:

Թե մնամ հանկարծ հողմերում այնքան,
Որ ճամփաս փակի բուքը կատաղի,-
Դիմավորիր իմ ձիու՜ն այս անգամ՝
Քո վերջի՜ն, վերջի՜ն արցունքով աղի…

ԱՌԱՋԻՆ ՍԻՐՈ
ԱՐՑՈՒՆՔԻ ՄԻՋԻՑ

Երկինքն զգացի քո սիրո շնչից,
Սիրուց հայտնվեցին աստղերն առաջին,
Ես ծաղկանց ցողն ու բույրն ըմպեցի՝
Առաջին սիրո արցունքի միջից…

Եվ մինչ այդ անբառ շուրթերիս վրա
Հայտնություն եղավ երգը աղբյուրի,
Դու խորհրդավոր խորհու՜րդը բացիր
Իմ հոգում ծագող արշալույսների…

ԽՈՍԻՐ ԴՈՒ ԻՆՁ ՀԵՏ

Թող այս վեճերը նվաստացնող
Եվ հոգիս գարնան թարմությամբ լցրու,
Մռայլ խոհերս հողմի պես վանիր,
Ինչպես ամպե՞րն է հալածում քամին…

Խոսիր դու ինձ հետ
Վայր ընկնող ու նոր ծնվող աստղերից,
Հեքիաթնե՞ր հյուսիր հոգուս մեջ ուրախ,
Հավատացրու՞, որ ճիշտ են դրանք…

ԵՐԱԶՆԵՐԻ ՄԵՋ

Համբուրեցի լուռ շուրթերն աղբյուրի,
Խլրտաց աղբյուրն իմ շուրթերի տակ,
Եվ երջանկության աստղե՞ր կաթեցին
Ալիքների մեջ…
Համբուրեցի թաց թերթերը ծաղկանց
Եվ նրանք մեկեն շառագունեցին,
Լսեցի սիրո շշուկը նրանց
Երազների մեջ:

ՀԻՄԱ Ո՞Վ Է

Հիմա ո՞վ է վազում մեր ջրերի մոտով
Եվ օրնիբուն խաղում առուների եզրին,
Իմ մանկության կանա՜չ, կանաչ արահետով,
Հիմա ո՞վ է վազում դեպի անտառը հին:

Հիմա ո՜վ է խաղում հովերի հետ գարնան,
Հավքերի հետ քնքուշ ու ծաղկունքով տարվում,
Ու՜մ սրտաբուխ կանչն է արձագանքվում հիմա
Իմ մանկության կապու՜յտ, կապույտ հեռուներում…

ՍԵՎԻՆ՝ ՍԵՎ

Սևին սև կասեմ ու չեմ էլ վիճի,
Թե կա՜րճ են ստի ոտքերը կյանքում,
Ես փորձությունից գիտեմ իմ խղճի՝
Ինչ արժե՜ք ունի մաքրությունն հոգու…
Եվ դեռ ինչքան եմ թափում ջանք ու ճիգ,
Ետ մղում այնքա՜ն կռիվներ ու վեճ,
Որ կարողանամ դիմանա՜լ խղճիդ
Եվ… ուղի՜ղ նայել քո աչքերի մեջ:

ՔԵԶ ՀԵՏ

Ամենից առաջ մնում եմ քեզ հետ,
Ոչ ոք չի կարող խլել ինձնից ետ
Այն սերը, որով ես սիրու՞մ եմ քեզ,
Հավատն այն, որով ես տրվու՞մ եմ քեզ,
Այն ուժը, որ քո հո՞ղն է ինձ տալիս,
Այն ջիղը, որ իմ երկրից է գալիս,
Այն երգը, որ իմ հոգուց է բխում,
Եվ… ցավն այն, որով իմ սի՞րտն է մխում:

ԻՄ ԲԵՌԸ

Աղջկաս՝ Լիլիթին

Շնորհակալ եմ, բախտ իմ, քեզանից,
Որ թեթև չեղավ իմ բեռը բնավ,
Եվ հաճախակի կրած իմ ցավից
Չմշուշվեցին աչքերս խոնավ…

Հետամուտ եմ միշտ վեհին ու լավին,
Եթե երբևէ վիճակվել է լալ,-
Ոչ թե թշնամու հասցրած դավից,
Դժբախտությունից ընկերոջ իմ լավ…

Գոհ եմ իմ բաժին բեռը կրելով,
Եվ իմ դարիվեր ճամփին այս երկար,
Սուտն ու կեղծիքն ինձնից վանելով,
Ես կմաքառե՞մ բարության համար…

Բախտ իմ, ինչքան էլ ինձ հեռուն տանի
Այս ճամփան՝ դար ու փոսերով, հիշիր,
Շնորհակալ եմ դարձյալ քեզանից,
Որ ինձ ես ընտրել... ո՞չ թե ուրիշի:

ԱՌԱՋՆԵԿՆԵՐԸ

Ձնծաղիկների նման են ծնվում,
Եվ հայտնվում են լուսաստղի պես,-
Գարուն ավետող ծիծեռնակնե՞ր են
Առաջնեկները:

Բիլ երկնի միջով մայր հողին հղված
(Ուր խլրտում են երազն ու սերը),
Ջինջ արեգակի տաք սարսուռնե՞ր են
Առաջնեկները:

Դժվար անցուղու նշաձողեր են,
Որ հաղթանակի կամար են դառնում,-
Կուռ կամուրջների հիմնաքարեր են
Առաջնեկները:

Ըմպում են հուրն ու մութը ընդերքի,
Այնպե՞ս են ելնում թունելախորշից,-
Կարծես շիկավարս արեգակնե՞ր են
Առաջնեկները:

Բարու, գեղեցկի համար են կռվում,
Չեն էլ ընկրկում մահվան դեմ անգամ,-
Եվ գաղափարի մարտիրոսնե՞ր են
Առաջնեկները:

Գալիս են նրանք միշտ ժամանակին,
Իրենք իրենցից առաջ են ընկնում,-
Գալիք օրերի սուրհանդակնե՞ր են
Առաջնեկները:

ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ

Անշահասեր են
Եվ աննյութական,
Ճառագայթու՞մ են
Բարություն ու լույս,
Ինքնիրեն այրվող կրակի նման:
Եվ թափանցիկ են
Պարզկա օրվա պես,
Քնքշաթով՝ինչպես
Երազ անմարմին,
Մաքրամաքու՞ր են
Աղբյուրի նման:

Մեղրամոմի պես
Հալվում են դանդաղ
Եվ սպառվում են
Աննկատելի,
Բայց և վերստին
Փայլատակու՞մ են
Ամպրոպի նման:

Հավատարիմ են
Մարդուն ու դարին՝
Ինչպես որ իրենց,
Եվ նրանց համար
Այս մոլորակը
Մի սրտի չա՞փ է
Եվ սրտի նման…
Դրա համար էլ
Չեն քնում նրանք,

Որ չխոտորվի
Արեգակն արդար,-
Եվ տիեզերքից
Կախված զանգի պես
Ղողանջու՞մ են հար:

ԲՆԱՆԿԱՐ

Խարույկների վրա
Ծառերի ճարճատյունից
Անտառը սարսռաց,
Ծառերի երազը խամրեց
Մոխիրների վրա,
Եվ անտառից պոկված քամին, որպես հառաչ,
Կրակատեղի մոխիրը փչեց
Սաղարթների կանաչ աչքերի մեջ:

ՁՈՀՎԱԾՆԵՐԸ

Երբ արթնանում ենք գիշերվա քնից,
Մենք խոնարհվում ենք արևի առաջ
Եվ խաղաղությամբ նորից-նոր շնչող
Դաշտ ու անտառի,

Հորիզոնները ներկվում են հրով,
Եվ արարչական լույսով են լցվում
Հանդ ու անդաստան,
Մի երանելի դաշնությամբ են լուրթ
Հեռաստանները շնչում անվրդով…

Երազների պես հառնում են ահա
Չհարսնացած մեր սերերն անանուն,
Կապույտ շղարշն է բարձրանում ձորից,
Հարսնաքողի պես ծածկում մեր աչքից
Նրանց հոգնաբեկ, երբ տուն են դառնում…

Ոչ ոք չգիտե, որ մենք գիշերով,
Ձսպված կարոտով, որ չի հասնում ձեզ,
Թեքվում ենք պարզկա այն ակունքներին,
Որտեղից ջուր են առնում մայրերը,
Արևով թրծված կավե կժերով…
Ու մեր ուսերին
Արշալույսի բորբ ծիրանին առած,
Մենք քայլում ենք նոր աստվածների պես,
Մեր երազները բուռ-բուռ ցանելով
Խոնավ ու փխրուն ցելերի վրա…

ԵՐԳ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ

Իմաստուն է մեր կարոտն անանուն,
Որ ամպի բարակ շղարշի նման
Նստել է խոնավ մեր կոպերի տակ
Եվ մեր աչքերն է մշուշում հաճախ
(Երբ տուն չդարձած մեր հայրերին ենք հիշում վերստին…)
Բայց երբ դառնում է մեր որդիներին՝
Նա մեր աչքերի հրից է ժայթքում,
Ճառագայթում է լույսի շողի պես…

Իմաստուն են մեր աչքերն, հիրավի,
Որ արեգակի հրով են լեցուն, մարմանդ թախիծով,
Որ բևեռված են այս հին աշխարհի ճանապարհներին…
Իմաստուն է մեր հավատը խորին,
Որ ընկածներին
Քանդակում է լուռ ու շունչ է տալիս,
Կենդանություն է պարգևում նորից,
Մտովի դնում մեր աչքի առաջ,
Որ մենք ծնրադիր համբուրենք նրանց…
Իմաստուն է մեր սերը ողջակեզ,
Ընկած հայրերի արյան թրթիռը մեր երակներում…
Եվ նրանց անմահ ոգին սխրատենչ,
Որ հայրենի սուրբ հողի ուժն ունի,
Եվ ներարկվում է մեր թևերի մեջ…

ԵՍ ԳԻՇԵՐԸ ՏԱՐԱ

Ես գիշերը տարա իմ ուսերի վրա՝
Լուռ քայլելով դաշտի փոշոտ ճանապարհով,
Հոգնած իմ ուսերից վայր նետեցի նրան
Արշալույսի շաղոտ ոտքերի մոտ:
Եվ համբուրեց լույսը իմ ճակատը խոնավ,
Իմ բիբերի միջով հոսեց երկա՜ր, երկար,
Եվ ինձ դարձրեց լույսի համանվագ…
Առավոտը ժպտաց մանկան անմեղությամբ,
Եվ խլրտաց հողը արևի տաք գրկում.
Եվ անձրևեց օրվա հրճվանք ամենուրեք:

ՈՐ ԲԵՐԿՐԱՆՔՈՎ

Իմ թախիծի միջից,
Բեկված իմ ժպիտի փլատակներից
Դուրս եմ հանում հոգնած երազներս,
Ու սրբելով փոշին իմ խոհերի,
Ես նետում եմ օրվա ծնծղաներին
Ու պարզում եմ լեռան շնչին մաքուր,

Որ թարմությամբ բուրեն իմ խոհերն անքուն,
Ու բերկրանքո՜վ լցվեն երազներս…

ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ՊԵՍ

Մարեի ես այս վերջալույսի պես,
Աշխարհը թողած ոսկեղեն փոշում,
Կարոտս նետած անվերջ երկարող
Այս ստվերներին,
Որոնք իմ չասված խոսքերն են հուշում
Ճանապարհներին…
Թողնեի ես իմ ծիրանին բեհեզ
Ձորում խտացող մութի թևերին,
Լեռան ուսերին,
Բարդու ծոպերին,
Ջրերի վրա,
Ցանկապատերին…
Մարեի ես այս վերջալույսի պես,
Արշալույսի պես ծնվեի՞ նորից:

ԻՄ ԱՐՑՈՒՆՔԻ ՄԻՋԻՑ

Այգաբացի շեմին հալվող մութի միջից
Լույսը կաթեց դեմքիս,
Աղոտացան հեռու աստղերը ջինջ
Լույսի փաղաքշանքից,
Ցավի մեջ երկունքի
Ծնվեց օրը որպես խարտիշահեր մանուկ
Եվ…Արևը ծագեց իմ արցունքի միջից:

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

Անշոշափելի, նաև անթափանց
Շղարշի տակից բառեր եմ քաշում,
Նրբերանգներ եմ հանում իմ հոգու
Խորունկ ծալքերից…
Ինքս էլ չգիտեմ, ինչպես է ծնվում
Երգը՝իմ միակ մխիթարանքը
Ու թեթև նստում իմ հոգու վրա…

ՈՐՊԵՍ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ԱՆԲԻԾ ՈՒ ՏԱՔ ՀՈՂՄ

Հեռու-հեռավոր աստղերի ներքո,
Ձորերում նստած շղարշների տակ,
Մանկության երկնի կապույտ ծփանքով
Խնկարկում են իմ երազները տաք…

Բուրում է աշխարհն իմ հուշերի մեջ
Խնկածաղկի պես ու երիցուկի,
Եվ բոցկլտում եմ աշխարհում անվերջ՝
Նման հրեղեն տենչ ու ցնորքի…

Կապույտ սարերից ու մուժից այն կողմ,
Այդ ես եմ բոբիկ ոտքերով վազում,
Որպես մաքրության անբիծ ու տաք հողմ՝
Որպես հրկիզում…

ԶԱՐԹՈՆՔ

Ծիլ արձակեց նորից ու տաքացավ հողը,
Փշուր-փշուր եղավ, փխրուն դարձավ այնպես,
Կանաչներին ցոլաց ադամանդե ցողը,
Եվ ծիրանին ծաղկեց մի գիշերում անտես:

Թարմ կանաչի մուգը իջավ սարի վրա,
Առվի երգը զնգաց ճամփաներին քարոտ,
Ինչ-որ թփի վրա երգեց ծիծառն ուրախ,
Ինչ-որ մեկը զգաց գարնանային կարոտ:
Թեթևացած հոգսից՝կարոտներից չնչին,
Սիրտս խայտա՜ց նորից գարնանային շնչից:

ՄԵՂԵԴԻ

Լուսամուտները հոգնած բացի ես,
Ետ տարա թավիշ վարագույրները,
Գարնան զեփյուռն ուժգին խուժեց ներս…
Հետո արևի զնգուն շողերը
Զարկեցին պատին նուրբ թրթիռներով,
Եվ արձագանքը հնչեց հոգուս մեջ,
Սենյակը լցվեց մեղեդիներով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2007-2011թթ.

Ճակատագիր....6
Քրիստոսն....6
Ախոյան....7
Աշուն է, աշուն....8
«ՊԱՏՐԱՆՔՆԵՐ ՍԻՐՈ» ՇԱՐՔԻՑ
Գիշերը....9
Ո՞վ է բախտից գոհ....9
Խոստովանանքս պարզ է....10
Հառնել եմ....11
Օգնի՛ր, քրիստոս....11
Ամեն ինչ մերկ է....12
Ժամանակն ահեղ....13
Մտքովս անգամ....13
Անքնություն....14
Նշաձև աչքեր....15
Դու չապրեցիր....15
Եվ կար հեռու մի օր....16
Ինձ կողոպտեցին....16
Ինձ, ինչպես անմեղ, միամիտ մանկան....17
Ո՛չ ներկան է փայլում քո դեմ....17
Թեթև....18
Ի՞նչ կյանք էր....18
Ինչ էլ հորինեն....19
Մի՛ տագնապիր....19
Քո հանձնակատար դայակը լինել....20
Եվ փառավոր է եղել օրն այն....20
Ես քո հեռավոր....21
Եկար ու ողջը խառնեցիր իրար....21
Եվ ի՞նչ արագ են սուրում օրերը....22
Ժամանակները խառն են....22
Բարձր լեռների շամբուտներից վեր....23
Երբ երկինքը ծանրանա....23
Կապույտ մուժ է իջնում....24
Ես կպահեմ օրերի բուրումները....25
Երկինք անաստղ ու անբարեգութ....25
Քեզ կտանեմ հեռավոր....26
Վաղուց մոռացած տուն....26
Ինձ տրված է մի կյանք....27
Ցմեռ է, ձյուն....27
Ես իմ անունը փնտրեցի երկար....28

Ծննդյան օր....29
Կանչ....30
Դու չգիտեիր ինչ է խզումը....30
Արարչուհի էր....31
Թե հանկարծ հրաշք կատարվեր ինձ հետ....31
Մակագրություն դարպասի վրա....32
Տիրոջ օրհնությամբ....32
Ես նախանձով եմ նայում քո երթին....33
Երկինքն անծիր....33
Դու այգաբացի միջով ես քայլում....34
Ճառագայթում է....35
Խաչված ձեռքերս....35
Դու աղետների միջով ես քայլել....36
«ՆՎԱԳՆԵՐ ՍԻՐՈ» ՇԱՐՔԻՑ
Կշառագունի երկինքն աստղացոլք....37
Ի՞նչ ցավի տեր արիր ինձ....37
Դու իմ առաջին արշալույսն էիր....38
Փափուկ ձյուն իջավ իմ երազներին....38
Կարեկցում եմ քեզ....39
Մենք....40
Պահվում եմ մի պահ ես հեռու՜-հեռվում....41
Ես երկու ոտքով կանգնած եմ հողին....42
Մի շտապեք հրապուրվել դուք ինձանով....43
Անհանգչելի սիրո կարոտ դառնալեղի....43
Կանխատես էր երազն այդ....44
ՔԱՌԱՏՈՂԵՐ
Հոգիս չի սարսում....45
Սկիզբը չի երևում....45
Հոգնել է սիրտս....45
Քամին....45
Ի՞նչ ես այդպես երկար խորհում....46
Հոգի....46
Երկու աղերս....47
«Պատրանքներ սիրո» շարքից....48
Այն օրերը....48
Կարթնացնեմ քեզ հիմա....49
Կուռք....49
Ոչ ոք ոչ ոքից գլուխ չի հանում....50
Խիղճ....50
Ում ի՞նչ է տրված....51
«Պատրանքներ սիրո» շարքից....51
Դու՝ Լիլիթի պես հպա՜ռտ....52
Քո շիրմաքարին....52

Մեր շուրջը....53
Արթնացրու իմ մեջ....53
Ստվերներն են երկարում....54
Մենք բռնկված ենք մի անհուն սիրո....54
Աստղերը արդեն էլ չեն առկայծում....55
Հանդեսներում սգո....55
Լսափողի մեջ ձայնդ դողացող....56
Ինչ էլ լինի....56
Ես գնամ ինչպե՞ս որոնեմ հիմա....57
Ափսո՜ս, շա՜տ ափսոս....57
Ներիր....58
Լեռները հեռվում....58
Ցմեռ....59
Ես իզուր այսպես պեղեցի հոգիս....60
Ես կջնջեմ քո հիշողությունից....60
Դու իզուր մի սարքիր խաղ ու ծես....61
Երբ չի մոռացվում հուշը դառնագին....61
Ճիչ....62
Արմինեին....62
2003-2006
Մարմինս տված արևի հրին....64
Հանելուկ չեմ....64
Կյանքի օվկիանում....65
Տարիների բեռը....65
Ես մինչև գետին պիտի խոնարհվեմ....66
Կա գիշերային սառնության մի պահ....67
Երևի շատ բան ես չեմ ընկալում....68
Երբ հեռաստանը պարզի Անհունը....69
Մի ուրվապատկեր աշնան մշուշում....69
Օրը երկարեց....70
Պատրանք....71
Շամիրամի պես այն....73
Ոչինչ չասվեց....73
Ինձ հանգիստ չեն տալիս....74
Անհնարին է....74
Առ ուսերին քո ծիրանագույնը իրիկնամուտի....75
Չասված խոսքերի սառույցների տակ....75
Դու հեռու մի վայր ընտրիր ինձ համար....76
Դրսում մարմրող կրակն է մխում....77
Ապաշխարանք....78
Քավության աղերսանք Անիին....79
Բացված էր երակն ու ցավն....80
Հավքերի լեզուն....80

Այդպես ցավագին մի նայիր դու ինձ....81
Մանկության հրաշք-հեքիաթներ չեղան....81
Հուշ....82
Իբրև դաշտ ու հող....83
Մաքրության կածաններ....84
Ես ումո՞վ ստուգեմ ինքս ինձ....85
Եւ ծառս է լինում....86
Հոգնած, նկուն ճամփորդ....87
Նախազգացում....87
Զգացում....88
Ո՞վ ես դու....88
Ոչինչ չփոխվեց քո աշխարհ գալով....89
Նույն տունը....90
Տաս, քսան, հիսուն....91
Քամու սուլոցը ոռնոց է մի շան....92
Մորմոքված սերե՜ր....92
Ի՜նչ զարմանալի ճակատագիր....93
Ո՞վ գիտե....93
Կրքերիս մոխրից մի բուռ առնեի....94
Ոչինչ չմնաց....94
Տարիքի ծանր բեռ է ուսերիդ....95
Հանդիսավոր՝ ինչպես սգո թափոր....95
Քո աչքերը....96
Սիրո մշուշներ էին ու տառապանք....96
Օ՜, գյուղական իմ տուն....97
Իմ ժամանակը....97
Մի քիչ քնքշանք....98
Փեղկերի նման բաց լուսամուտի....98
Ակսել Բակունցին....99
Երգը մեր ոգու խոյանքն է իրավ....100
Փետրվարյան երկինք....100
Վաղը կարթնանամ ես ցայգալույսին....101
Ով է ասել....102
Ինձ վայր բերեիր....103
Ցավի ծովից իմ հանած....104
Պահ տուր ինձ սերդ....105
Ես զարկերակիս խփոցից գիտեմ....105
Առօրյա, տաղտուկ կացություն հիմար....106
1997-2002
Տեսլական....108
Թավուտը սուզվեց....108
Մեկ է....109
Կասկածներ չունեմ....109

Երազ կլիներ....110
Անտրտունջ, անմրմունջ....111
Աղջամուղջի մեջ արեւն է հանգչում....112
Ողջ գիշեր չեկավ քունը աչքերիս....113
Ես մատնվել եմ ցավ ու կրակի....114
Մեկը կանչում է հեռավոր հանդից....114
Իրիկնային մրմունջ....115
Վերադարձ....116
1992-ը....117
Վաղ առավոտից....118
Ամեն ինչ ունի....119
Ո՛չ մարմին....120
Իմ կյանքը....120
Բարեկամ....121
Ոգի....122
Ժամանակն ինչ-որ բաներ է հերքում....122
Պատկեր....123
Պատուհան մի բաց ու գրասեղան....123
Մեր հեռացումն աշխարհից հոգնած....124
Արահետների վրա ամայի....125
…Եվ ոչինչ, ոչինչ....126
ԱՐԵՎՆ ԻՄ ՅԱՎԻՑ ՊԻՏԻ ՃԱՌԱԳԻ
Գարուն....127
Խամրող գույների....127
Հոգնել եմ արդեն....128
Իմ հրեշտակը....128
Ցավալի է....129
Տառապանքի մեջ....129
Ձյունը ծածկել է....130
Աննկատելի....130
Մոռացված բույրեր անմոռուկների....131
Անսահման....131
Փորձված էր ընթացքն իմ ճանապարհի....132
Ադամի մեղա....132
Խաբկանից այն կողմ....133
Փորձություններից անցա՞ծ....133
Որ փայփայես, փայես ինձ....134
Դու՝ հիասքանչ ավելի....136
ԻՄ ԿԱՆՉԻ ՎՐԱ ԵԿԱՆ
Հեռացողի տրտունջ....137
Հոգիների այս պաղ....137
Մի ոգեղեն անդորր....138
Մթամած երկինք ու օր....138

Անամոթ գնչուհու պես....139
Ձեզ համար....139
Անուրջնե՞ր ոսկի....140
Հեռվում....140
Սիրեցյալներիս չհասցրի ասել....141
Միգապատ....142
Աստված իմ, Տեր իմ....143
Մեր աղոթքների....143
Սուրճի բույր....144
Ծիծեռնակաթև ու սաթ իրիկուն....144
Իմ հեռացած սերերի մեջ....145
Ա՜խ, ոգու, մտքի սով հոգիների....145

ԲԱՅՑ ՀԱՐՅՈՒՐ ՀԱՁԱՐ ԱՆԳԱՄ ԷԼ ԿԱՍԵՄ

Նեղ արահետին....146
Չընդունված զոհեր....146
Բաց-կապույտ երկինք....147
Կարեկցանքից զուրկ....147
Հեռացողների հայացքնե՞ր տրտում....148
Երկինք գորշավուն ու անհրապույր....148
Աշնան եղյամ....149
Ոչ ոք չգիտեր....150
Մանդելշտամին....151
Ինքնամաքրում....152
Կայծակը զարկեց....152
Քամին վայր ընկավ....153
Ես արդեն առա թախծի համն անեղծ....153
Արցունքոտվեցին աչքերս ցավոտ....154
Մի ամբողջ կյանք էր....154
…Եւ ես սրբեցի սուգը իմ դեմքից....155
Օ՜, մայր, օ, դու՝ կին....159
Հավիտյան խաչված մնամ քո սյունին....160
Նույն քնքշանքն ես բերում ինձ....164
Նվիրումներ....166

1990-1997

Ձեռքդ դիր ճակատիս....170
Ճակատագիրը....170
Անտանելի է....171
Տվեք համբուրեմ....171
Խփիր ինձ....172
Դու չես կարծրանում....172
Փոթորկված ծովն է զարկվում ափերին....173
Սևակնած երկիր....173
Վանում են ինձնից....174

Չարի շունչ կա....175
Արցախաճիչ է....175
Այս ի՜նչ տարաժամ է....176
Ա.Սախարովի հիշատակին....177
Դու ոչ վերջինն ես, ոչ առաջինը....177
Մարդն արարվել է....178
Բռնություն է մի բիրտ....178
Ի՜նչ եմ տանելու ես այս օրերից....179
Չարաշահում են անունդ անվերջ....179
Արցախ....180
Բռնագաղթ է, Տե՜ր....182
Կես արթուն եմ ու կես քնած....182
Քո ցավի համար....183
Զարթնում եմ....183
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր....184
Թոնրի մեջ եմ....184
Մարի-Լույս իմ....185
Մի լիալուսին....185
Մռավ սարս՝ վիրավոր....186
Քարի նման....186
Պարզ մի օրվա....187
Համո Սահյանի հիշատակին....188
Հայրենի եզերք....189
Ցոլա, ցնորք, նաիրի՜....190
Ինչ-որ տեղ....191
Նորեկներ....192
Ես այդպիսին էլ ընդունում եմ քեզ....193
Ողբերգություն է....193
Վիյոնի հետ....194
Մի նայեք դուք իմ վշտին....195
Գանձասար....195
Մռայլ երկնքում....196
Այս խաչը....197
Հատուցում....197
Իմ ժամանակը....198
Լույսեր չկան....198
Նորավեպ....199
Ինձ էլ լինի....200
Նվիրումն քրիստոսի....200
Չես կանխատեսել....201
Բեռնածի....201
Մեզնից ամեն ոք....202
Զանգերը....202

Բեկորը....203
Զա՜րկ բաժակդ բաժակիս....203
Տեր իմ....204
Հետ տուր....204
Ներքող....205
Ոչ ոք չի շոյում....205
Խոստովանանք....206
Անտառում....207
Տեսիլք....208
Ոչ ոք էլ ինձ չգտավ....209
Ամեն մի դիպված....209
Մի տուր ինձ, Եվա....210
Ամեն ինչի մեջ....210
Օրհնանքի խոսքեր....211
Ծերություն-ձմեռ....211
Ցավաքցո՞ւմ եք ինձ....212
Այս հավերժական հառնում-անկումից....212
Լքված տաճարիս դռները՝ բաց....213
Զրկանքներից է սիրտն իմաստանում....213
Մարինա Ցվետաեւային....214
Անձրևն է լալիս ձեղունի վրա....215
Եվ օրը թարթեց աչքերը տամուկ....215
Այնպես հեգնախառն ու այնպես փշոտ....216
Իմ սերը մեռավ աղամամութին....216
Չեն վիճակվել....217
Մի վերջ՜ն թախծոտ աղոթաժամ....218
Անվերծանելի....218
Արցախ....219
Ես մնացել եմ խուլ ու կարկամած....220
Դու ոչինչ էլ չես ձեռնարկի հիմա....220
Ես քեզնից պահած գաղտնիքները չունեմ....221
Դու ո՞ւմ հատուցես և ինչի համար....221
Իսկ ես այնպես եմ ելնում իմ տնից....222
Պատեհ-անպատեհ....222
Թիրախ....223
Եկ սեղմեմ կրծքիս....224
Հալ ընկար ձմռան ձյուներն ինչպես....224
Կատակի տալով....225
Քեզ համար արդեն....225
Իմ փխրուն ուսին....226
Աստծո գործերին....226
Ապոկալիպտիկ երգ....227
Մտորումներ սիրո....229

Ինչքան էլ որ ծածկի....231
Գիշերվա մեջ հազարախոհ....231
Դու գալիս ես ակամա....232
Կա պաղատագին քո երգերի մեջ....232
Որպես խաբված ուխտավոր....233
Հպատակն եմ ես սիրո....233
Կիսալուսին մի աղոտ....234
Ոչ ոք չի կանչի....234
Երկիր իմ....235
Դու, որ կարող ես....235
Միջանցուկ քամի....236
Թող որ ցնդել են երազն ու սերը....236
Անտերություն է....237
Ոչ առնել ունի օրդ, ոչ տալիք....237
Թողություն չկա ու ապաշխարանք....238
Աղոթքի նման մի երգ էր ծորում....239
Չի փաղաքշում քեզ....240
ՆՎԻՐՈՒՄՆԵՐ ԿԱՆԱՆՑ
Լույսի բարակ շերտ....241
Մի՞թե այլևս չես լինի, ուրիշ....242
Ոչինչ չի լինում....242
1960-1990
Դանձասար....244
Ամարաս....244
Քո ուխտավոր....245
Թե ես լինեի....245
Մարդ եմ, վանք չեմ....246
Թե տքնություն չեղավ....246
Տագնապ....247
Չեմ հատնում....248
Ղարաբաղ....249
Տունը....250
Հայրենիք....252
Հայրենական....253
Դու մոր նման սիրառատ....254
ՎԱՂ ՇՐՋԱՆ
Ուշ աշնան երգ....256
Մայր եղնիկը....257
Վերհուշ....258
Պատանության քարափից....259
Ամպի ամոթից....259
Տիրություն արա....260
Պատրանք....261

Մի ձեռք իջներ....261
Եւ բացվող օրվա պես....262
Միրհավ....262
Ծառերը....263
Իրիկնաժամ....264
Բնապատկեր....264
Կանչում է ինձ....265
Անտառում....265
Իմ հուշերը....266
Վերհուշ....267
Ցմեռնամուտ....267
Ես ձորի նման....268
Սեր....268
Քո անունը....268
Էլ չես լքի ինձ....269
Սինչդեռ իմն էիր....270
Կանչիր ինձ....271
Մի՞թե....275
Երբ ես չլինեմ....275
Դիմացիր, սերս....276
Քո կարոտները....277
Երբ ամպոտ է օրը....278
Մարիամ....278
Սիրելի ես դու....279
Եւ մի այնպիսի սիրտ է տրված ինձ....279
Վերադարձիր....280
Էքսպրոմտ....280
Քեզ փրկեի....281
Սրբություն մնա....281
Իմ հայացքը....282
Իմ բարի արեւ....282
Դու ինձ համար հիմա....283
Արձակիր դու ինձ....284
Մի՞թե, սիրելիս....285
Մայրական....286
Մայրերը....286
Մարգարտի պես....286
Հայրենիք ու հող....287
Ես չեմ մոռացել....288
Որ ինչ էլ լինի....288
Սիրտս մղկտաց....289
Կապված եմ ձեզ հետ 289

Քո արեւի հետ....290
Քեզ հետ կբերի....290
Ես խոնարհվում եմ....291
Աղոթքի նման....291
Թե բորբոք պահես....292
Իմ մեղքն ու ցավը....292
Հեքիաթներ անսուտ....293
Չէ՞ որ դու գիտես....293
Ինչպես ուխտավոր....294
Իմ տունը....294
Եկար, խառնվեցիր....295
Երբ դառնամ հեռվից....295
Դիմավորիր ինձ....296
Առաջին սիրո արցունքի միջից....296
Խոսիր դու ինձ հետ....297
Երազների մեջ....297
Հիմա ո՞վ է....298
Սեւին՝ սեւ....298
Քեզ հետ....299
Իմ բեռը....299
Առաջնեկները....300
Բանաստեղծները....301
Բնանկար....302
Զոհվածները....303
Երգ իմաստության....304
Ես գիշերը տարա....305
Որ բերկրանքով....305
Արշալույսի պես....306
Իմ արցունքի միջից....306
Հայտնություն....307
Որպես մաքրության անբիծ ու տաք հողմ....307
Զարթոնք....308
Մեղեդի....308

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐՈՎ
ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

Խմբագիր՝ Հ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Ա. Գրիգորյան
Համակարգչային
շարվածքը՝ Ն. Իշխանյանի
էջադրումը՝ Լ. Բաղդասարյանիի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84/16, ծավալը՝ 20 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 250:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում:
Հ.Հակոբյան, 25
Ստեփանակերտ 2012